

2236

3K24

d-35

466

Բ



ԵՐԻՒՆԸ

ՅԵԿ

ԱՐՎԵՍՏԸ

ՏՀ24
L-35

3R24
L-35

14 NOV 2009

03 JUN 2005

Լ Ե Ր Ի Ւ Ն Ը

ՅԵԿ

Ա Ր Վ Ե Ս Ը

3-08

ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՑԵՐԱՆԺՏՈՒԹՅՈՒՆ

ԹԱՏՐՈՆ, ԿԻՆՈ

ԿԵՐՊԵՐՎԵՍ

=====

=====

Կազմեց՝ Ա. Դ. ԴՐԵՑԴԵՆ

6 Ա 6 6
12-6

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933 ՍՈՍԿՎԱ

Ուսու. ընդհանուր խմբագրություն՝ վ. Ա. ԹԻՍՏՐԵԱՆՍԿՈՒ
Առաջարարակ Ա. Վ. ՀՈԽՆԱՁԱՐՄԿՈՒ
Հայ. հրատ. պատ. Խմբագիր՝ ՅԵ. ԶԱՐԵՆՑ
Թալզմ 1929 թ. 2-րդ վերամշակ. հրատ. Մ. ԱՂԱՅԱՆԻ
Հայերեն թարգմ. Խմբ. յեզ. ծանոթ. Դ. ԱՐՈՂԻ
Շապիկը՝ Ս. ԱԼԱԶԱՐՅԱՆԻ



3657 - 91

(2/23-5)

Այն բոլորը, ինչ մնացել ե մեծ ղեկավարից, խոշոր հետաքրքրություն ե ներկայացնում — նույնիսկ պատահականն ու չլրացվածը:

Յերբ ժամանակը կդա, Վաղիմիր Իլյիչի անձնավորությունն ինքնին, Լենին — մարդը՝ կդառնա ուշադիր և հաճելի ուսումնասիրության առարկա: Նրա կենսագրականը, նրա ինտիմ կյանքը նույնպես խոշոր, համամարդկային արժեք ե պարունակում:

Այս գրքում նշված մի բանի գծերը, վորոնք վերաբերում են նրա կենցաղային առնչությանը դեպի արվեստը, լի յեն հետաքրքրությամբ: Լենինը յերգում եր: Յերգում եր ուրիշների հետ, խմբով: Յերգում եր մենակ, աշխատելիս, զբունելիս: Սիրում եր ոիթմերը, մելոդիաները: Նրանց հետ միշտ խոսքեր եր միացնում: Խոսքերն ու յեղանակները շաղկապում եյին նրա համար: Ամենից հաճախ և առավել բավականությամբ նա յերգում եր այնպիսի բաներ, վորոնց մեջ կարող եր պարունակել իր ամենանվիրականը — հեղափոխությունը:

Սակայն, վորքան ել հետաքրքրական լինի մեզ համար այժմ ել, իր պարզությամբ, ամբողջականությամբ և մոնումենտալությամբ Լենինի հմայիչ անձնավորությունը, մենք նրա թողած ժառանգության մեջ վորոնում ենք, — յերբեմն անհանգստությամբ ենք վորոնում — մեր պայքարի, մեր շինարարության վերաբերյալ խորհուրդներ, ցուցմունքներ:

Մենք գիտենք (և Հենին ել այդ լավ գիտեր), վոր արվեստը մեր պայքարի մեջ մեծ տեղ ե գրավում և մի ժամանակ նա հսկայական տեղ պետք ե գրավի մեր շինարարության մեջ:

Քանի հեռու յենք դնում, այնքան ավելի յենք գումար գեղարվեստ և տական քաղաքանության վորոշակի սկզբունքների կարիքը:

Կուսակցության ծրագրը բնականաբար այդ մասին խոսում ե ընդհանուր առմամբ և քիչ: Այդ ասպարիզում ամենահիմնական փաստաթուղթը կենտրոմի բանաձևն ե գրականության մասին (1925 թ.): Բնորոշելի կերպով թատրոնի և կինոյի մասին յեղած կուսակցական խորհրդակցությունների վորոշումները կենտրոմի վորոշումներ չդարձան:

Մինչդեռ իրեն կուսակցության մեջ գեղարվեստական քաղաքականության խնդիրների մասին տարածայնություններ կան:

Այդ տարածայնությունները, վոր գրականության մասին յեղած բանաձեից հետո վորոշ չափով մեղմացել են, այժմ նորից են ծագել:

Ցերկյուղ կա, վոր կարող ե նորից առաջ գալ այն շտապողականությունը, վոր սպառնում եր իր ժամանակ ծայրահեղ նապաստովցիներից: Մատնանշելով մեր պարագայում մանր բուրժուական շրջապատի և վարակման միանգամայն ունալ վտանգը, վորմանք ընկնում են մի սխալի մեջ ցանկանում են պաշտպանվել՝ իրենք իրենց չեղոքացնելով, փակվելով չորս պատերում, թշնամի հոչակելով նրանց, վորոնք աշակերտներ պետք ե լինեն:

Այս և գլխավոր սխալը, վոր կարող ե մեղ սպառնալ և վորն անկասկած կսահմանափակեր կոմմունիստական աղղեցությունը հսկայական շրջանների գի-

տակցության վրա, և — փութացման վորձերով — կնանդաղեցներ պրոլետարական, կոմմունիստական արվեստի զարգացումը:

Սակայն կան և այլ շատ պրոբլեմներ:

Ո՞վ ե լուծելու նրանց: Վարտեղ ե այն բավականաչափ հեղինակությունը: Առայժմ նրանք լուծվում են (կամ ավելի ճիշտ կշադատվում են) կոմմունիստների միջև տեղի ունեցող բանավոր և գրավոր վեճերում, գրեթե պայքարներում:

Հասել ե ժամանակը, յերբ այդ խնդիրները չափազանց լուրջ և հրամայողական են դարձել: Գեղարվեստական քաղաքականության գոնե ամենալուրջ խնդիրները պետք ե վճռվեն այն ցուցմունքների քննության միջոցով, վորոնք տրված են գրականության մասին, ավելի ճիշտ և ավելի բազմապարփակ ձեվով վերատադրելով այդ ցուցմունքները:

Կենինը արվեստի մասին քիչ եր գրում և խոսում: Բայց նրա ներդաշնակ հեղափոխական գիտակցության մեջ ամեն ինչ ճշգրիտ տեղն ուներ: Յեթե նա մի վորեն տեղում տար արվեստի և գեղարվեստական քաղաքականության մասին ունեցած իր հայցքների սիստեմավորված արտահայտությունը, այդ նույնպես հեղինակավոր և խորիմաստ կլիներ, ինչպես նրա բոլոր գրածները:

Սակայն ժամանակն այլ եր: Մասսաների գեղարվեստական դաստիարակության խնդիրները դեռ միայն շառագումում եյին պատերազմի ծխի և ավերածության փոշե սյուների միջից: Այդ պատճառով մենք կենինի մոտ ունենք միայն ուրվագծեր, հատվածներ: Նրանք թանգարժեք են: Պետք ե նրանց վրա խորհել, մեկնաբանել, կիրառել:

Դա չի նշանակում, թե համարյա ամբողջ արվես-

տագիտությունը, և գեղարվեստական քաղաքականության բոլոր հիմունքները պետք ե, կամ կարող են դուրս բերվել ներկա գրքույկում խնամքով ժողոված իենինի վոչ մեծ դիտողություններից։ Այդ բնագավառում, ընդհակառակը, շատ կարևորագույն բաներ թողնված ե մեզ, վորպես պրոբլեմ։ Այստեղ խոր, ինքուրույն, վերջին հաշվով՝ կոլլեկտիվ միտք ե հարկավոր։ Սակայն այդ միտքը առանց այստեղ ժողոված նյութի չի կարող գործ տեսնել։

Մրանում ե կայանում ընթերցողների ուշադրությանն առաջարկվող գրքի հիմնական նշանակությունը։

Առաջաբանում յես մտադիր չեմ մեկնաբանել այն։ Վաղեմիր Իլյիչի այդ մասին թողած ժառանգության մեկնաբանմանը առիթ կլինի հաճախակի վերադառնալ։ Այստեղ բավական ե մատնանշել նրա արժեքավոր ինելը, ներկա մոմենտի համար։¹

Ա. Լոնաչարսկի

«Վաղեմիր Իլյիչը շատ քիչ ժամանակ ուներ արվեստով զբաղվելու համար» — նշում են այս գրքի թեմային նվիրված հիշողությունների հեղինակները։ Լենինը ինքը թե մասնավոր խոսակցություններում, թե հրապարակորեն (տես եջ 124, 138, 167—168) մատնանշում եր, վոր նա զբեթե ասիթ չի ունեցել արվեստով զբաղվելու, արվեստի բնագավառում ինքը կատարյալ դիմետան և։ Ընթերցողը ստորև կդանի մի շարք նման բնույթ ունեցող մատնանշումներ, Բայց և այնպես, անշուշտ, Լենինը չեր կարող արվեստի կողքով անցնել թէ վորպես մարդսկաստ տեսաբան, թէ վորպես պետական գործիչ, թէ պարզապես իբրև մարդու։

Վաղեմիր Իլյիչի արտահայտությունները արվեստի և գրականության հարցերի մասին ճիշտ ե, շատ են անջատ իրարից։ Վ. Իլյիչի անմիջական մասնակցությունը գեղարվեստական շենարարության գործին՝ վոչ սակալ մասնակցություն, ոլաշունական փաստաթղթերի մեջ զբեթե չի արձանագրված։ Բայց և այնպես, յեթե այդ բոլոր ցան ու ցին նյութերը ժողովվեն, յեթե ի լրացումն Վ. Ի. անմիջական արտահայտությունների՝ միացվեն նրա աշխատակիցների հեղինակավոր հիշողությունները, ապա փաստական վկայումների այդ ժողովածուն կհարկադրի նոր ձեռվ մոռենալ Շենինն ու արվեստը հարցին։ Ներկա ժողովածուի մեջ նյութերի հենց նման համախմբման այդ փորձն ե արված։

Ժողովածուի առաջին մասը՝ «Հեղափոխությունը և արվեստը» նվիրված ե Վ. Իլյիչի սկզբունքային դիքքերի բնութագրմանը և խորհրդային արվեստի շինարարության մեջ նրա ունեցած մասնակցությանը։ Առաջին գլխում՝ «Կուլտուրա և կանչ ին առաջ ու թյան ուղիները» մտել են ճառերից հատվածներ և այլ նյութեր՝ բուրժուական կուլտուրայի ոգտագործման և պրոլետարական կուլտուրայի կուտակման մասին (մասնավորապես՝ քանակենը վաղահաս «կուլտուրաթիւման» կողմանիցների հետ), 1905 թվականի «Կունակացական կազմակերպությունը և կու-

սակցական գրականությունը հոդվածը, վորը ամբողջ սրությամբ է գեղարվեստական ստեղծագործության պատճեն հարցն ե գնում, «Ինչ անել» գրքից հատվածներ և «Լուսժողկոմատի աշխատանքի մասին» հոդվածը:

Վ. Իլյիշին սկզբունքային հայացքները արվեստի մասին, — վորը
սպատկանում և ժողովրդին, և վորը իր խորագույն արմատներով
պետք ե գնա աշխատավոր մասսաների սովոր զանգվածների մեջ,
պետք ե հասկացվի այդ մասսաների կողմից և սիրված լինի նրան-
ցից, պետք ե համախմբի այդ մասսաների զգացումը, մթոքը և
կամքը, պետք ե բարձրացնի մասսաներին, պետք ե զարթեցնի
նրանց մեջ արվեստագետներին և զարգացնի նրանց», — ահա այդ
հայացքները նույնպես լուսաբանվում են այս զլուկին ամփոփող
հիշողությունների մեջ։ Այս ըոլոր նյութերի ընդհանուր գնահա-
տականը այսորվա խնդիրների լուսաբանությամբ տրվում է ներա-
ծական հոդվածում։ Ընկ. ընկ. Լունաշարսկու, Ցակովիկի և այլոց
հիշողություններում նաև կոմենտարիսաներ են տրվում Վ. Իլյիշին
պերլետարական կուլտուրայի մասին արտահայտած մտքերի առ-
թիվ, վորոնց լավ մտածված յուրացման համար անհրաժեշտ ե հաշվի
առնել նրանց լուս տեսնելու ժամանակաշրջանը (տես եջ 41—44):

Վ. իշխէի, զորպես քաղաքական գործիչի զերաբերմունքը դեպի թատրոնն ու կինոն բնորոշվում ե առանձին զրությաներում; Վ. Ի. զրությունները ընկ. Լիտկենսին և ուրիշներին, ընկ. Բոլյարդանսկու, Լունաչարսկու, Բոնչ-Բրուկիչի, Կոցինի և այլոց ընկ. Բոլյարդանսկու, Լունաչարսկու, Բոնչ-Բրուկիչի, Կոցինի և այլոց հիշողությունները պարզ ասում են, վոր Լինինը չսահմանափակվեց կինոյի հսկայական դերի սոսկ բերանացի հանաշմամբ («արվեստի կինոյի հսկայական դերի սոսկ բերանացի հանաշմամբ»):

Կինո - գործի դրվածքի մասին արած մի շաբթ գործնական ցուցմունքները, կուլտուր - ֆիլմի գերի, նշանակության և նրա ունեցած տեղի անընդհատ ընդգծումը՝ լուսավորական աշխատանքի ընդհանուր սիստեմում, «կինո - ծրագրերի պրոպրոցիայի» նախագիծը, զյուղական շարժական կինոյի առաջնարդման նախաձեռնությունը և այն — այս բոլորը յերկար ժամանակ կարող են ծառայել կինո - աշխատողների համար մարտական պատվեր, վորությունում և ամենորրդական իրազործման:

սպառում և անօրոշվ լւած՝
Վ. Իլյիչը գեպի թատրոնն ունեցած վերաբերմունքին նվիր-
ված նյութերում ցայտուն կերպով բացվում է Վ. Իլյիչի դրամեկ-
տիկական մոտեցումը խնդրին,—արվեստի խոշոր աղիտացիոն հնա-

ավագործ թյունների ճանաչումը և դրա հետ միասին լըջախոն նկատառումը, թե ո՞նոր զինին հին տկերում չել լցվի», վոր հին թատուոնը, «զուտ պամեշշէկական կուլառուրայի կտորը», կարող եք ոգ-աղբործվել 1919 թվի պայմաններում միայն վորպես «հանգստի զվարձության միջոց»: «Այստեղից ել կարծես, տուաջին հայացքից, «յերկության» վերաբերմունք ունի՞ Վ. Ի. Դեկտի հին թատուոնները, թատրոնների փակման կանոնումը և միենույն ժամանակ, ամսահաշվի սուրբ կըճատումը («Կուլտուրայի վերելքի ճակատում ունաջին ինդիքն ե անդրագիտության լիկվիդացիան»): Ինարկեցաւուածուածու, վոչ մի, յերկություն չկա: Մեր դիմացն ե աներկրամաքությունը իստական մոտեցումը դեպի պլորբեմի եյությունը, ինդը վոչ իրայն սահմանավորումը՝ «այստեղից մինչև այստեղ», այլ և նրա դիմումը՝ ընդհանուց սխալեմ:

Առաջին մասի բնորոշ վերջամասը հանդիսանում է ընկ. Հուաչարսկու հեղողություններից մի հատված, զորտեղ պատմված ե մոնումենտալ պրոպագանդայից գաղափարի վերաբերյալ։ Սա մի կայություն և այն մասին, վոր վ. Խլյշը շարունակ ձգտել ե արկեստն ոգտագործել հեղափոխության սոլասարկման համար։

Յերկրորդ մասն եւ չլ, են ին ը՝ գ ը ա կ ա ն ք ն ն ա դ ա տ ա ։ Այս-
ող մասնում են Վ., ի, հոգվածները Տալստոյի մասին, Նրա ասածները
Մ. Գորկու մասին և հատվածական նկատողությունները Բարբյուսի,
Մինկերի, Նեկրասովի, Շչեդրինի, Ավերչենկոյի, Մայակովսկու
և այլոց մասին։ Արվեստագետի ստեղծագործության մեջ «կենա-
պին» և «մեռյալը» պարզ հաշվառելը, գրական արտադրության
ոցի ալական բնութիւնները Նրա կապակցումը հեղափոխա-
կան որվա հրատապ խնդիրների հետ, առանձին սկզբունքային թե-
ուումները արվեստագետի հեղինակությամբ ծածկելու փորձերի
կեմ մղած պայքարը — ահա Վ., իւլիչի քննադատական գնահատա-
կանների այն հիմնական մոտիվները, վորոնք մինչև այսօր եւ պահ-
պահանել են իրենց մարտական նշանակությունը։

Վ. հլյաշին հոգվածները Տալստոյի մասին, զոր մարքովիստական անհաղատության խոկական որինակներ են հանդիսանում, բազմաթիվ անգամներ արտապայման են, ինչպես պարբերական հրատակաշությունների մեջ, նույնպես և հատուկ ժողովածուներում (վերջին հրատարակությունը բազմաթիվ մեկնարանություններով՝ վերջին հրատարակությունը՝ կոմմ. Ակադեմիայի հրատարակութ. Մոսկ. Լենին և Տալստոյ», Կոմմ. Ակադեմիայի հրատարակութ. Մոսկ. 1928 թ.); Սյու բանը հաշվի առնելով, այլ և ձգաելով տալ ափելի գործական նյութերի ժողովածու, նվիրված Վ. հլյաշին դեպի ալ-

վեստին ունեցած վերաբերմունքին, մենք առաջ ենք բերում Ցալստոյի մասին վ. Իլյիչի հոդվածների ամենաբնորոշ հատվածները (արատապահում և այդ հոդվածների տեքստերի մաս 2/3 մասը*). Կրճատութեան արված են գլամուրապես ի հաշիվ «վերապահման հերոսների», այս բուրժուական հրապարակախոսների ենտեցած բանավեճի, վորոնք, «մեծ ասովածախնդրի» (Եօրուսկաւ) ընավորության ամբողջականության՝ մասին արվող մեղքածոր դրույցները գերադասում եյին նարցիս ուղիղ դրվածքից՝ այդ հանձարեղ արվեստագետի մասին, վորի ստեղծագործության մեջ փայլուն կերպով նկարագրված են, իսկ փիլիսոփայության մեջ արտահայտված են, անցյալին անցած նախահեղափոխական Ռուսաստանի թուլությունն ու անզորությունը» վ. Իլյիչի հայացքները «րող բանավեճի սկզբունքային մասը պահված և արտապալող հատվածների մեջ»:

Լենինյան անմիջական արտահայտումները լրացվում են նրա գեղի Տալսաոյը և Գորկին ունեցած վերաբերմունքի մասին յեղած հիշողություններով: Նույն գլխին կցվում է նաև վ. Ի. Դիտողությունը «Ռուսաց լեզվի մաքրման մասին» — մի քնորոշ դոկումենտ Իլյիչի այն անխոնջ պայքարի, վոր նա մղում եր հանուն գրական լեզվի հստակության, հանուն միլիոնների համար հասկանալի լեզվի Սյու գլխի ծանոթության մեջ առաջ են բերված կազմովի դիտողությունները, թե ինչպես ե վ. Իլյիչը ոգտագործում գեղարվեստական գրականության պատկերներն ու անձնավորություններն իր ամենորյա աշխատանքում:

Յերրորդ մասի թեման ե՝ «Արվեստը Վ. Լադիմիր Իլյիչի անձնական կենցաղություն»:

Մենք, անշուշտ, փորձ շենք անում սպառելու այդ թեման: Մեր անելիքն ավելի համեստ ե՝ այդ հարցի մասին դատելու փոքր ինչ նախնական նյութ տալ:

Հարկավիր և արդյոք վոր մասսայական ընթերցողն իմանա Լենինի գրական, թատրոնական, յերաժշտական ճաշակը. ունի արդյոք դրա մի վորեկցի նշանակություն նրա համար. Կարծում ենք, վոր այս, ունի: Լայն մասսաների հետաքրքրությունը դեպի Վաղիմիր Իլյիչի անձնական գույքը և այդ գույքը այնքան մեծ է, վոր այժմ այդ հարցն անտես առնելը գրեթե անկարելի յէ. Ա. Վ. Լունաչարսկին իր հիշողությունների մեջ նշում ե՝ «Եր հստեսիկ համակրանքներից

և հակակրանքներից Վլադիմիր Իլյիչը յերբեք դեկավար խեկանէր չեր կառուցում: Բայց դա չի խանգարում ընթերցողին, թեկուզ տեղեկանալու կարգով, գիտենալ, թե արվեստի ընագավառում վրան եր վ. Իլյիչի համակրելին և հակակրելին:

Յերբեր մասում մենք համակմբել ենք այն հիշողությունները, վորոնք բնորոշում են Վլադիմիր Իլյիչի վերաբերմունքը գեղի արվեստ ամբողջությամբ վերցրած, — գեղի գրականությունը, նկարչությունը, յերաժշտությունը, թատրոնը, կինոն և եստրադան:

Ի վերջո—ժողովածուի կ առ ուց յան մե թոդն ե ը ի և աղբյուր ների մաս ի ն: Այս ժողովածուն ամենից առաջ մի հանրամասէնի հրատարակությունն ե (և վոչ «ակադեմիկական»), վոր ի նկատի յէ առնված կ ու լտու ը բառես ա ա ծ մ ա ս ա յ ա կ ա ն ը ն թ ե ր ց ո դ ի հ ա մ ա ր ւ ն յութերը նույնանման ժողովածուները սովորական շտամպով դասավորելը (մի մասում լենինյան ակրստերը, մյուս մասում հիշողություններն ու մեկնաբանաւերը) աննպատականարմար թվաց, վորովետք անշատ են իրարէց Լենինի արտահայտումներն արկեսաի հարցերի շուրջը (իսկ առանձին ճյուղերի մասին, ինչպես որինակ կերպարվեստ, թատրոն, եստրադա—ընակ բացակայում են): Այս կամ այն թեմայի մասին վ. Իլյիչի ունեցած հայացքներն ավելի ճշգրտուեն բաց անելու համար՝ հարկ եղավ նյութերը դասավորել ըստ մի շարք հիմնական բաժինների, հաջորդելով լենինյան ակրստերը և հիշողությունները:

Նկատի առնելով, վոր վ. Իլյիչի հայացքները պրոլետարական կուլտուրայի հարցերի և Պրոլետակուլտի մասին բավական լրիվ են ընդունված ժողովածուի մեջ մտած նյութերով, մենք, տեղի սուրբանակություններում, ստիլիզած յեղանք բաց թողնել վ. Իլյիչի արած դիտողությունները Պետույովի «Իդեոլոգիական ֆրոնտում հոգածի լուսանցքներում, մի բան, վոր պահանջում եր հրապարակել բոլոր այն նյութերը, վորոնք կապված են դրանց հետ (Պետույովի, Յակովլիկի և ուրիշների հոդվածները): Այդ նյութերով հնատարեր-վագ ընկերներին կմատնանշենք „Յօրօնու կոլետուրա ու դրա պրոլետարիատա“ ժողովածուն (Թուսպետհրատ, 1925 թ.) վորացել նրանք լիովին վերաբարելով են:

Վորաբեսովի ընթերցողն ավելի պարզ կերպով կողմնորոշվի նյութերում, հիշողություններից շատերը բաժանված են մի շարք առանձին հատվածների, վորոնք զետեղված են ժողովածուի զանազան մասերում: Այսպիսի մասնահատումը պարզ է, վոր զործադրվել և այն դեպում միայն, յեթե պահպանված են հիշողություն-

Ների յուրաքանչյուր մասի մտքի միասնականությունը և շարա-
հյուսության բնույթը:

Լենինի մասին յեղած հիշողությունները պըսլտելու ընթացքում
մենք աչքի ենք անցրել, հավանորեն, զրեթե ամբողջ լենինգրադի
և Մոսկվայի (և մասամբ գավառական) մեմուարային գրականու-
թյունը լենինի մասին (ամսագրեր, թերթեր, ժողովածուներ,
առանձին գրքեր), վոր լույս ե տեսել մինչեւ 1929 թվի մարտ
ամիսը: Տպագիր հիշողություններից չեն ոգտագործվել այնպիսի-
ները, վորոնց որյեկտիվությունը և պատմական վավերականությունը
կարող ե վեճելի լինել կամ փաստական նյութի աննշան (կամ նախ-
կին հրատարակվածին հարանման) լինելու հետևանքով՝ լայն հետա-
քրքրություն չեն ներկայացնում: Այն դեպքերում յիշը հրապարակ-
վող հիշողությունների առանձին մանրամանություններ կարող են
վիճելի լինել — կազմողը վերապահումներ ե անում այդ մասին
ժանություններում: Ստորև տպագրվող հիշողությունների մեծա-
մասնությունը հանդիսանում էն ընդհանուր բնույթ ունեցող հիշո-
ղությունների հատվածներ: Յուրաքանչյուր հատվածից հետո մատ-
նաշվում ե այն հոգվածի անունը, վորտեղից նա առնված ե:
Լենինյան տեքստերի և հիշողությունների մանրամասն բիբլիոգրա-
ֆիան առաջ ենք բիրում ժողովածվի վերջում:

Ինչպես վերը մատնանշված ե, հիշողությունները մեղ հետա-
քրքրող հարցի փոքր մասն են միայն լուսաբանում: Լենինի մասին
յեղած գրեթե բոլոր հիշողությունների հեղինակները «լենինը և
արվեստը» հարցի կողքով են անցնում: Ցեղ դա հասկանալի յե:
Զափաղանց փոքր ե այդ հարցն ընդհանուր մասշտաբում: Գետք և
հուսալ, վոր մեր ժողովածուի անխուսափելի և ակնհայտ բացերը
վորոշ խթան կհանդիսանան Վլադիմիր Իլյիչի դեպի արվեստն
ունեցած վերաբերմունքի մասին մանրամասն հիշողություններ
հայտնաբերելուն:

Ս ի մ. Դ բ ե յ դ ե ն

Р. Այս ժողովածուի հիմքն ե կազմել համանուն զիրքը, վոր
մենք կազմել ենք և լույս ընծայել Կուբուչ-ի* հրատարակու-
թյամբ 1925 թվին: Նյութերը վերստին վերանայված են, մեծ չա-
փով լրացված և վերակառուցված:

Ս. Դ.

Ա Ռ Ա Զ Ի Ն Մ Ա Ս

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

...— Արդարեւ, մեր բանվորներն ու
գյուղացիներն արժանի յեն վորեւե ալեկի
մեծ բանի, քան թե տեսարանների:
Նրանք իրավունք են ստացել իսկական
մեծ արվեստի համար:

...Հեղափոխությունը արձակում ե
մինչ այդ կաշկանդված բոլոր ույժերը
և նրանց մղում ե խորքերից դեպի կյանքի
մակերեսը.... Սակայն, հասկանալի յե,
մենք կոմմունիստներ ենք: Մենք չենք
կարող ձեռքներս ծալած կանգնել և
թույլ տալ վոր քառոսը զարգանադեպի
ուր կամենա: Մենք պարտավոր ենք
կատարյալ պլանաշափ կերպով դեկավա-
րել այդ պրոցեսը և ձևավորել նրա ար-
դյունքները:

Վ. Ի. Լենինը — ԿԼԱՐԱ ՑԵՏԿԻՆԻՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վ. Ի. Լենին

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

I

...Այն բոլորը, ինչ ստեղծել եր մարդկային հասարակությունը, նա (Մարքսը) քննադատորեն վերամշակեց, անուշաղիր չթողնելով վոչ մի կետ։ Այն բոլորը, ինչ ստեղծել եր մարդկային միտքը, նա վերամշակեց, քննադատության յենթարկեց, ստուգելով բանվորական շարժման վրա, և արավ այն հետևումները, վոր չեղին կարող անել բուրժուական շրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նախապաշարումներով կապված մարդիկ։

Այս պետք ե ի նկատի ունենալ, յերբ մենք, որինակ, խոսում ենք պրոլետարական կուլտուրայի մասին։ Առանց պարզ հասկանալու այն, վոր մարդկության ամբողջ զարգացումով ստեղծված կուլտուրայի ճիշտ ըմբռնմամբ միայն, նրա վերամշակմամբ միայն կարելի յե կառուցել պրոլետարական կուլտուրան — առանց այս հասկանալու, մենք այդ խնդիրը չենք լուծի։

Պրոլետարական կուլտուրան չի հանդիսանում անհայտ տեղից գուրս պրծած, չի հանդիսանում այն մարդկանց հնարած մի բանը, վորոնք իրենց պրոլետարական կուլտուրայի մասնագետներ են անվանում։ Այդ բոլորը ցնդաբանություն են Պրոլետարական կուլ-



տուրան պետք և հանդիսանանա որինչափ զարգացումը գիտելիքի այն պաշտպաների; վոր մարդկությունը մշակել և կապիտալիստական հասարակության, կալվածատիրական հասարակության, չինոմլիկական հասարակության լծի տակ:

Այս բոլոր ուղիներն ու շավիղները բերում, հասցնում ենին, հասցնում են և շարունակում են հասցնել պրոլետարական կուլտուրային այնպես, ինչպես Մարքսի վերամշակած քաղաքանատեսությունը ցույց է տվել մեզ այն, ինչին պետք և հասնի մարդկային հասարակությունը, մատնանշել և անցումը դեպի դասակարգային կռվի, դեպի պրոլետարական հեղափոխության սկիզբը:

ՈԿՅԵՄ Յ-րդ համագումարում արտասանած ճառից
(1920 թ. հոկտ. 4):

II

... Այն միջոցին, յերբ մենք շատախոսում եյինք պրոլետարական կուլտուրայի մասին և բուրժուական կուլտուրայի հետ նրա ունեցած փոխհարաբերության ժամին, փաստերը մեզ հրամցնում են թվեր, վորոնք ցույց են տալիս, վոր բուրժուական կուլտուրայի վերաբերամբ ել մեր գործերը թույլ են: Բանից դուրս ե յեկել, վոր ինչպես և պետք եր սպասել, ընդհանուր գրագիտությունից մենք դեռ շատ յետ ենք մնացել և սույնիսկ մեր առաջադիմությունը՝ համեմատած ցարական ժամանակների հետ (97 թվականի), շատ գանդապ և յեղել: Այս մի սպառնալից նախազգուշացում ու կշտամբանք և նրանց հասցեյին, վորոնք սավանում եյին և սավանում են ռաբուլետարական կուլտուրայի» բարձունքներում: Սա ցույց է տալիս, թե մեզ ինչքան համառ, սև աշխատանք և մնում անել՝ Արևմտյան Յեղ-

բոպայի սովորական քաղաքակիրթ պետության մակարդակին համնելու համար: Սա ցույց է տալիս այնուհետեւ, թե ինչ հսկայական աշխատանք կա կատարելու մեր առաջ այժմ, վորպեսզի մեր պրոլետարական նվաճումների հողի վրա՝ հասնենք իսկապես քիչ թե շատ կուլտուրական բարձրության:

«Մի եջ հուշատերից», (հունվար 1923 թ.):

III

... Սկզբի համար մեզ թերես բավական լինի իսկական բուրժուական կուլտուրա, սկզբի համար մենք թերեւս յոլա գնանք՝ առանց նախաբուրժուական կարգի հատկապես թունդ տիպի կուլտուրաների, այսինքն չինովական կամ ճորտատիրական և այլ կուլտուրաների: Կուլտուրայի խնդիրներում շտապողականությունը և արագաթափությունը ամենից վեասակար բանն ե: Հարկավոր և, վոր մեր ջանել գրականագետներից և կոմմունիստներից շատերը սա լավ միտները պահեն:

«Էավ և քիչ, բայց — լավ հողվածից, 1923 թ.

IV

... Խորհրդային ապարատ — նշանակում է, թե աշխատավորները այնպես են համախմբված, վորպեսզի իրենց մասսայական համախմբվածության կշռով ջախչախիսկ կապիտալիզմը: Նրանք ել ջախչախսեցին նրան: Բայց ջախչախված կապիտալիզմից կուշտ չես լինի: Պետք և վերցնել ամբողջ կուլտուրան, վոր կապիտալիզմը թողել և նրանից կառուցել սոցիալիզմ: Պետք և վերցնել ամբողջ գիտությունը, տեխնիկան, բոլոր գիտելիքները, արվեստը: Առանց դրան մենք կոմմունիստական հասարակության կյանքը չենք կարող կա-

ոռոցելի Իսկ այդ գիտությունը տեխնիկան, արվեստը
մասնագետների ձեռքում ե ու նրանց գիտում:

Այսպես ե դրված խնդիրը բոլոր ասպարեզներում—
խնդիրը հակասական ե, ինչպես հակասական ե ամբողջ
կապիտալիզմը, շատ դժվարին ե, բայց՝ իրազործելի:
Վոչ թե այն պատճառով, վոր մենք մի քան տարուց
հետո կղաստիարակենք մաքուր կոմմունիստական մաս-
նագետներ—աներկուող ու անպախարակելի կոմմու-
նիստների առաջին սերունդը, — վոչ, ներեցնք, մեզ հա-
կավոր ե ամեն ինչ սարքել հիմա, վոչ քսան տարուց
հետո, այլ յերկու ամսից հետո՝ պայքարելու համար ամ-
բողջ աշխարհի բուրժուազիայի դեմ, բուրժուական գի-
տության և տեխնիկայի դեմ: Այստեղ մենք պետք ե հաղ-
թենք: Մեր մասսայական կշռով ստիպել բուրժուական
մասնագետներին, վոր մեզ ծառայեն, դա դժվար ե, բայց
կարելի յեւ յեթե մենք այդ անենք, մենք կհաղթենք:

ԹՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Բանաձեվի նախագիծ

1. Խորհրդային Բանվորա-Գյուղացիական Հանրա-
պետության մեջ լուսավորության գործի ամբողջ գոր-
փածքն ինչպես քաղաքական-լուսավորական ասպարի-
զում առնասարակ, նույնպես և հատկապես արվեստի
ասպարիզում պետք ե թափանցված լինի պրոլետա-
րիատի գասակարգային պայքարի վորով հանուն նրա
դիկտատուրայի նպատակների հաջող իրականացման,
այսինքն՝ հանուն բուրժուազիայի տապալման, հա-
նուն դասակարգերի վոչչացման, հանուն մարդու-
նկատմամբ մարդու կողմից տեղի ունեցող ամեն տե-
սակի շահագործման վերացման:

2. Ուստի պրոլետարիատը, թե ի դեմս իր ավանգար-
դի — կոմմունիստական կուսակցության, և թե ի դեմս
ընդհանուրապես ամեն տեսակի պրոլետարական կազ-
մակերպությունների ամբողջ մասսայի՝ պետք ե ամենա-
ակարիվ և ամենազլիսավոր մասնակցությունն ունենա
ամբողջ ժողովրդական լուսավորության գործում:

3. Նորագույն պատմության ամբողջ փորձը և մա-
սավանդ աշխարհի բոլոր յերկրների պրոլետարիատի
պելի քան կիսադարյան հեղափոխական կոիվը «Կոմ-
մունիստական Մանիֆեստ» յերեան գալու որից —
անվիճելիորեն ապացուցեցին, վոր միմիայն մարքսիզ-
մի աշխարհայացքն ե հանդիսանում հեղափոխական
պրոլետարիատի շահերի, տեսակետի և կուլտուրայի
հզգրիտ արտահայտությունը:

4. Մարքսիզմը, վորպես հեղափոխական պրոլետա-
րիատի իդեոլոգիա՝ նվաճել ե իր համաշխարհային
ոլատմական նշանակությունը այն բանով, վոր նա,
մարքսիզմը, ամենին դեն չի նետել բուրժուական
հպոխայի ամենաարժեքավոր նվաճումները, այլ ընդ-
հակառակը, յուրացըել ե և վերամշակել այն բոլորը,
ինչ արժեքավոր ե յեղել մարդկային մտքի և կուլտու-
րայի ավելի քան յերկու հազարամյա զարգացման մեջ:
Միայն հետագա աշխատանքն այս հիմքերի վրա և
նույն այս ուղղությամբ, ներշնչված պրոլետարիատի
դիկտատուրայի (գործնական) փորձով, վորպես նրա
վերջին կոիվը ընդդեմ ամեն անսակ շահագործության,
կարող և ճանաչվել վորպես իսկապես պրոլետարական
կուլտուրայի զարգացում:

5. Անշեղորեն կանգնած լինելով այս սկզբունքային
տեսակետի վրա, Պրոլետարիատի* Համառուսական հա-
րակական կազմակերպություն, վոր հետապնդում ե կուլտուր-ստեղ-

* Պրոլետարիատը — գլասակարգային պրոլետարական հասա-
րակական կազմակերպություն, վոր հետապնդում ե կուլտուր-ստեղ-

մագումարը ամենավճռական կերպով մերժում են վորպես տեսականորեն սխալ և գործնականորեն վասարակար, ամեն տեսակի փորձերը՝ հնարելու իր հատուկ կուլտուրան, պարփակվելու իրենց առանձնացած կազմակերպություններում, անջրակետելու լուսժողկոմատի և Պրոլետարակարգի ամպարեգները, և այլն, կամ սահմանելու Պրոլետարակարգակազմակերպությունների ժամանակակից ներսում, և այլն, Ընդհակառակը, համագումարը անպայման պարտականություն և դնում Պրոլետարակուլտի բոլոր կազմակերպությունների ծագործական նպատակներ» — կազմվել է 1918 թ., իր գոյության առաջին պահին Պրոլետարակուլտը հայտնաբերում եր «ուլտրա-ձախ» թերում կուլտուրայի խնդիրներում։ Մանրամասն՝ Պրոլետարակուլտի մասին տես 43—46 էջերում։ Բանաձեկ ներկա նախագիծը գրված է Վ. Իլյիչի կողմից, Պրոլետարակուլտի 1 համառուսական համագումարում Ա. Վ. Լունաչարսկու ունեցած յելույթի առնչությամբ, Համագումարը տեղի ուներ Սոսկայում 1920 թվի հոկտեմբերի 2-ից մինչև 12-ը։ Դեռ համագումարից առաջ, Վ. Իլյիչը վրասակար եր համարում Պրոլետարակուլտի խորումը լուսժողկոմատիք։ Ա. Վ. Լունաչարսկուն նա կանչել եր իր մոտ համագումարի նախընթաց որը և նրա հետ ունեցած զրույցի ժամանակ Վ. Իլյիչը հանձնարարել եր նրան հանդես գալ մի ճառով, մատնանշելով, վրա Պրոլետարակուլտը իրեն համարում եր վրավես մի ինչ վրա պետություն պետության մեջ և իր աշխատանքը հակադրում և լուսժողկոմատիք աշխատանքին և դրանով արատավորում եր նրան վորուս մի մարմել, վրա պետության անունից վարում և կուլտուրական գործը։ Այս տեսակ հակադրությունը Վ. Իլյիչը բացարձակապես անթյուլատրելի յեր համարում։ Լուսժողկոմատիք քաղաքականությունը պետք ե ամբողջապես արտացոլի կուսակցության դեկավարող գիծը և գոչ մի այլ, ողուտ պրոլետարական գիծ լինել չի կարող։ Զեռադրություն նախագիծը ուղեցված է Վ. Ի. Շետելյալ դիտություններով։ Հիգիենակայի 8/X համարից յերեսում ե, վրա ընկ. Լունաչարսկին Պրոլետարակուլտի համագումարում ուղղակի հակա և ակն ե ասել այն բանի, ինչի մասին վոր մենք նրա հետ յերեկ պայմանավորվել ենք։ Անհրաժեշտ ե արտակարգ արագությամբ պատրաստել բառաձեկ նախագիծը (Պրոլետարակուլտի համագումարի) անցկացնել

վրա՝ գիտել իրենց ամբողջապես, վորպես կուսժողկումատիք հիմնարկությունների ցանցի սժանալակ մարմին։ Ամառներ և իրականացնել խորհրդային իշխանության (հատուկ կապես լուսժողկոմատիք) և Խուսաստանի կոմմունիստական կուսակցության ընդհանուր ղեկավարության տակ իր խնդիրները, վրապես պրոլետարական գիտատուրայի խնդիրների մի մասը։

1920 հոկտեմբերի 8. (Ձեռագիր. Ամբողջությամբ աղված ե Յերերի ժողովածուի ԽV-րդ հ. 2-րդ հրատ.):

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

(1905 թ.)

Սոցիալ-դեմոկրատական աշխատանքի նոր պայմանները, վոր ստեղծվեցին Խուսաստանում Հոկտեմբերյան

կենտ.կոմ-ում և հասցնել անցկացնելու Պրոլետարակուլտի հենց այս ստացած անում։ Գետք և այսոր և եթ անցկացնել կենտ.կոմ-ի անունից նաև Լուսժողկոմատիք կոլլեգիայում և Պրոլետարակուլտի համագումարում, վրավիճեակ համագումարն այսոր վերջանում ե Ընկ. Լունաչարսկին ասում ե, թե իրեն աղավաղել են Բայց առավել և սրանաձեւ հույժ անհրաժեշտ ե։

Նույն որը Ակի (ը) կե կանչված Պրոլետարակուլտի համագումարի նախագահ Պ. Ի. Լեբեգկ-Պոլյանսկին և այսուեղ, նրա մասնակցությամբ, համագումարի համար՝ կազմակերպչական խնդիրի վերաբերմամբ մշակվել եր մի բանաձև այն դիրեկտիվների վորով, վրա մատնանշել եր Վ. Ի. Լենինն՝ իր բանաձեւի նախագծում։ Նրա քննարկումը զբաղեցրել եր 2 նիստ։ Տաք վիճաբանություններից հետո բանաձեւ ընդունված եր միաձայն (բանաձեւի աեկստը տես «Պրօլետարեալ Կոլեգիա», ի Ն 17-19, 1920 թ. ողուտու-դեկտեմբերի, եջ 83. Ծ ան ո թ. յ ե րկ ե ր ի. ժ ո լ ո վ.):

* Վ. Իլյիչը հոդվածը գրվում եր այն շրջանում, յերբ կուսակցության առաջ ծառացել եր կուսակցական գրականությունը (առավելապես ագ ի տ ա ց ի ո ն - պ ը ո պ ա գ ա ն դ ի ո տ ա կ ա ն) լեզար զբությանը փոխադրելու հարցը։ Հենց նոր եյին հայտարար-

հեղափոխությունից հետո, հերթի դրին կուսակցական գրականության հարցը: Անլեզալ և լեզալ մամուլի միջն յեղած տարբերությունը՝ Ռուսաստանի ինքնակալական և ճորտատիրական եպոխայի այդ տիսուր ժառանգությունը, սկսում եւ անհետանալ, նա դեռևս չի մահացել: Մեր մինիստր-պրեմյերի կեղծավոր կառավարությունը դեռ անկարգություն եւ անում մինչ այն աստիճան, վոր «Իзвестия» սուբյեկտ ժառանգությունը, սկսում եւ անհետանալ, նա դեռևս չի մահացել: Մեր մինիստր-պրեմյերի կեղծավոր կառավարությունը դեռ անկարգություն եւ անում մինչ այն աստիճան, վոր «Իзвестия» սուբյեկտ ժառանգությունը, սկսում եւ անհետանալ, նա դեռևս չի մահացել: Մեր մինիստր-պրեմյերը՝ «արգելելու» այն, ինչին խանգարելու ույժ չուներ կառավարությունը:

Անլեզալ և լեզալ մամուլի միջն յեղած տարբերությամ 1905 թվի «Հռոկտեմբերյան» ազատությունները, Կարծես մի վորոշ մասաւմ անցել եր յեզոպոսյան ճառերի, գրական ստորաքարության, ստրկական լեզվի, գաղափարական ճորտացման անիծյալ շրջանը: Սակայն... «պրոլետարիատը նվաճել եր դեռ ազատության կեսը միայն: Հեղափոխության գրությունը ստիպում և անհապաղ ձեռնարկել վործի նոր կարգավորմանը»: Մատնանշելով, վոր մինչ այդ լեզվալ մամուլը անկուսակցական եւ յեզել՝ վորովնետե կուսակցականությունը արգելքի տակ երա Վ. Խ. Ելիչն ընդդեմ ե նոր լույս ընծայվող ամբողջ գրականության վառ կուսակցական գունավորման անհրաժեշտությունը: Դրա հետ միասին հոգվածը բարձրացնում ե մի շաբէ կարևորագույն սկզբունքային՝ ցայսոր ակտուալ ինդիքներ, վորոնք հարակցվում են վոչ միայն հատուկ-պրոպագանդային գրականության, այլ և գեղարվեստական ստեղծագործության (հիմնական պրոբլեմների հետ) (Ռուսերենում հոգվածը արտատպիկ ե կրամառումներով) ի հաջիվ ընդհանուր բնույթ կրող ներածական մասի և նկատողությունների, իսկ հայերեն թարգմանության մեջ արգում ե ամբողջությամբ: Հ. Խմբ.) Ս. Դ.

* Պետերբուրգի Բանվորական պատգամավորների խորհրդի պաշտոնական որդանը, վոր լույս ե տհանում 1905 թվի հոկտեմբեր 30 — դեկտեմբեր 27-ը և վորի № 11-ը գրավեց տպագրության ընթացքում:

թյան գոյության ժամանակ կուսակցական և անկուսակցական մամուլի հարցը լուծվում եր չափազանց պարզ չափազանց կեղծ ու այլանդակ: Ամբողջ անլեզալ մամուլը կուսակցական եր, հրատարակվում եր կազմակերպությունների կողմից, վորոնք այսպես կամ այնպես կապված երին կուսակցության պրակտիկ աշխատողների խմբակների հետ: Ամբողջ լեզվալ մամուլը կուսակցական չեր, — վորովնետե կուսակցականությունն արգելված եր, — բայց «Ճգուման եր» այս կամ այն կուսակցության: Անխուսափելի երին այլանդակ միությունները, անհորման «համակեցությունները», կեղծավոր ծածկոցները. կուսակցական հայացքներ արտահայտել ցանկացող մարդկանց հարգագրված թերասություններին խառնվում եր այն մարդկանց թերամտությունը և մտքի վախկոտությունը, ովքեր չերին հասունացել այդ հայացքների համար, ովքեր եյությամբ կուսակցության մարդ չերին:

Անիծյալ ժամանակ — յեզոպոսայան ճառերի, գրագաղայության, ստրկական լեզվի և գաղափարական ստրկատիթության, Պրոլետարիատը վերջ գրեց այդ ստորության, վորից Ռուսաստանում խեղդվում եր ամեն մի կենդանություն ու թարմություն: Բայց պրոլետարիատը Ռուսաստանի համար նվաճել ե դեռ ևս ազատության կեսը:

Հեղափոխությունը դեռ չի ավարտվել: Յեթե ցարիզման արդեն ույժ չ ունի՝ հեղափոխությանը հաղթելու, ապա հեղափոխությանը դեռ ուժ չ ունի՝ հաղթելու ցարիզմին: Յեկ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ, յերբ ամեն տեղ և ամեն ինչի վրա արտահայտվում ե բաց, ազնիվ, ուղղակի, հետևողական կուսակցականության հակաբնական համակերպումը՝ ընդհատակյա, ծածկված «դիպլոմատական», խուսափողա-

կան, «լեզալության» հետ: Այդ հակաքնական համակերպությունը արտահայտվում է նաև մեր լրագրի նկատմամբ: Ինչքան ել պ. Գուշկովը սրամություններ անի սոցիալ-դեմոկրատական տրադիցիայի նկատմամբ, վոր արգելում և լիբերալ-բուրժուական և չափավոր լրագրեր տպագրել — փաստը մնում է փաստ՝ Ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական որգան «Պրոլետարի»-ն այնուամենայնիվ մնում է ինքնակալ-վոստիկանական Ռուսաստանի գուան հետեւմ:

Ինչպես և լինի, հեղափոխության կեսը բոլորին ստիպում է անհապաղ ձեռնարկել գործի նոր կարգավորման: Գրականությունը կարող է այժմ, մինչև իսկ չի-դալ կերպով, ^{9/10-}ովլ լինել կուսակցական: Գրականությունը պետք է դառնա կուսակցական: Ի հակադրումն ըուրժուական կարգերի, ի հակադրումն ձեռնարկողական, չարչիական մամուլի, ի հակադրումն ըուրժուական գրական կայսերիզմին և ինդիվիդուալիզմին, «աղայական անարխիզմին» և շահի հետապնդման — սոցիալիստական պրոլետարիատը պետք է առաջքաշի կուսակցական գրականության սկզբունքը, պետք է դարգացնի այդ սկզբունքը և կիրառի այն կյանքում, հնարավորին չափ լիակատար և ամբողջական ձևով:

Ինչումն է կայանում ուրիշն կուսակցական գրականության այդ սկզբունքը: Վաչ միայն նրանում, վոր սոցիալիստական պրոլետարիատի համար գրականության գործը չի կարող լինել անձնավորությունների կամ խմբակների հարստացման մի գործիք: Նա չի կարող լինել առասարակ անհատական գործ՝ անկուսակցական գրականագետները: Կորչեն գերամարդ

գրականագետները: Գրականության գործը պետք է դառնա հանուր պրոլետարական գործի մի մասը, մեկ միասնական, մեծ սոցիալ-դեմոկրատական մեխանիզմի ռանիվը և պտուտակը, վոր շարժման մեջ և դցվում ամբողջ բանվոր դասակարգի վողջ գիտակից ավանդաբի ձեռքով: Գրականության գործը պետք դառնա գարդի ձեռքով: Գրականության գործը պետք դառնա կազմակերպված, պլանաչափ, համախմբված սոցիալ-դեմոկրատական կուսակցական աշխատանքի բաղկացուցիչ մասը:

«Ամեն համեմատություն կաղում է», ասում է գերմանական առածը: Կաղում է և իմ համեմատությունը — գրականությունը՝ պտուտակի հետ, կենդանի շարժումը՝ մեխանիզմի հետ: Թերեւս, գտնվեն նույնիսկ հիսթերիկ հնտելիգենտներ, վորոնք վողք կբարձրացնեն նման համեմատության առթիվ, վոր իշխնում, մեղնում, «բյուրոկրատիզմի յի յենթարկում» աղատ գաղափարական պայքարը, քննադատության ազատությունը, գրական ստեղծագործության ազատությունը և այն և այլն և լսու գործի եյության, նման վողբերը կլինելին միմիայն բուրժուական-ինտելիգենտական ինդիվիդուալիզմի արտահայտություն: Վեճ չկա, գրական գործը ամենից ավելի քիչ և յենթակա մեխանիքական հավասարման, նիկելիբովկայի, մեծամասնության տիրապետությունը փոքրամասնության նկատմամբ: Վեճ չկա, այդ գործում անպայման անհրաժեշտ և ապահովել մեծ հրապարակ՝ մտքի և ֆանտազիայի, ձեի և բովանդակության համար: Այս ամենն անվիճելի յի, սակայն այս ամենն ապացուցում է միմիայն այն, վոր պրոլետարիատի կուսակցական գործի գրական մասը չի կարող շարուն կերպով նույնացվել պրոլետարիատի կարող շարուն կերպով այլ մասերի հետ: Այս ամենն ամենը չի ժխտում բուրժուազիայի և բուրժուական դեկան

ժոկրատիայի համար ոտար ու տարորինակ այն գրությունը, թե գրական գործը անպայման և պարտադիր կերպով պետք ե դառնա սոցիալ-դեմոկրատական կուսակցական աշխատանքի այլ մասերի հետ անբաժանորեն կապված մի մասը: Թերթերը պետք ե անպատճառ մտնեն կուսակցական կազմակերպությունների մեջ: Հրատարակչությունները և պահեստները, խանութներն ու ընթերցարանները, գրադարանները և գրքի զանազան վաճառքը — այս բոլորը պետք ե դառնա կուսակցական, հաշվետվական: Այս ամբողջ աշխատանքներին պետք ե հսկի կազմակերպված սոցիալիստական պրոլետարիատը, պետք ե նրան ամբողջովին վերահսկի, այս ամբողջ աշխատանքում, առանց մի բացառության, պետք ե մտցնի կենդանի պրոլետարական գործի կենդանի հոսանք, խելով այդպիսով ամեն տեսակի հողը վաղեմի, կիսաարլումովյան, կիսաչարչիական ուռւսաստանյան այն սկզբունքի տակից, թե գրողը գրուում ե՝ ընթերցողը կարդում:

Հասկանալի յե, վոր մենք չենք խոսի այն մասին, թե ասիական ցենզուրայից ու յելրոպական բուրժուազիայի ձեռքից ապականված գրականության գործի այդ վերակազմությունը կարող եր տեղի ունենալ միանգամբից: Մենք հեռու յենք վորեն միակերպ սիստեմ, կամ միքանի վորոշութելով ինդրի լուծում քարոզելու ժաքից: Վաչ, այս բնագավառում սիսմատիզմի մասին ամենից քիչ կարող ե խոսք լինել: Բանն այն ե, վոր մեր վողի կուսակցությունը, վոր ամբողջ գիտակից ուց. ~ գեմ. պրոլետարիատը համայն Ռուսաստանում ըմբռնի այս նոր խնդիրը, պարզուեն դնի այն և ամենուրեք ձեռնարկի նրա լուծմանը: Դուրս գալով ձորտատիրական ցենզուրայի գերությունից, մենք չենք ցանկանում գերի գնալ և գերի չենք գնա բուրժուական-

շարչիական գրական հարաբերություններին: Մենք ուզում ենք ստեղծել և կստեղծենք ազատ մամուլ, վնչ լոկ վոստիկանական իմաստով, այլ նաև կապիտալից ազատ լինելու, կարյերիզմից ազատ լինելու իմաստով, — դա դեռ քիչ ե՝ այլ բուրժուական-անիշխանական ինդիվիդուալիզմից ազատ լինելու իմաստով:

Այս վերջին խոսքերը կարող են պարագությալ կամ նշավակում ընթերցողի վերաբերմամբ: Ինչպես, կաղաղակի թերեւ վորեն մի ինտելիգենտ, ազատության կրակոտ կողմանակիցը: Ինչպես: Դուք ուզում եք կոլեկտիվության յենթարկել մի այնպիսի նուրբ, անհատական գործ, վորպիսին և գրական ստեղծագործությունը: Դուք ուզում եք, վոր բանվորները ձայների մեծամասնությամբ վճռեն զիտության, փիզիկիսովիայության, եստետիկայի խնդիրները: Դուք բացասում եք բացարձակ-ինդիվիդուալ գաղափարական ստեղծագործության արսույթը աղատությունը!:

Հանգստացե՞ք, պարունակը: Նախ և առաջ խոսքը կուսակցական գրականության և նրան կուսակցական կոնտրոլի յենթարկելու մասին եւ Յուրաքանչյուրն ազատ և գրելու և խոսելու այն, ինչ իր քեֆն և ուզում, առանց ամենափոքր սահմանափակումների: Սակայն ամեն մի ազատ միություն (այդ թվում և կուսակցությունը) ազատ և նաև վոնդել այնպիսի անդամներին, վորոնք ոգտվում են կուսակցության ֆիրմայից՝ հակակուսակցական հայացքներ քարոզելու համար: Խոսքի և մամուլի ազատությունը պետք ե կատարյալ լինի: Յես պարտավոր եմ հանուն խոսքի ազատության քեզ լիակատար իրավունք տալ գոռալու, ստելու և գրելու, — ինչ ուզես: Բայց դու պարտավոր ես՝ հանուն միությունների աղատության ինձ իրավունք տալ դաշն կնքելու կամ լուծելու այն մարդկանց հետ, վո-

բոնք ասում են այսինչ-այսինչ բաները կուսակցությունը կամավոր միություն ե, վորն անխուսափելիորեն կլուծվեր, նախ գաղափարապես, այնուհետև նաև նյութապես, յեթե նա իրեն չմաքրեր այն անդամներեց, վորոնք հակակուսակցական հայացքներ են քառողում:

Կուսակցականի և հակակուսակցականի միջև յեղած սահմանը վորոշելու համար ծառայում ե կուսակցական ծրագիրը, ծառայում են կուսակցության տակտիքական բանաձեռն ու կանոնադրությունը, ծառայում ե, վերջապես, միջազգային սոցիալ-դեմոկրատիայի, պրոլետարիատի միջազգային կամավոր միությունների ամբողջ փորձը — պրոլետարիատի, վորը իր կուսակցությունների մեջ շարունակ ընդունում ե վոչ բոլորովին հետևողական, վոչ բոլորովին մաքուր մարքսիստական, վոչ բոլորովին ուղղիղ առանձին եւեմենտեր ու հոսանքներ, բայց և նույնպես շարունակ ձեռնարկում ե իր կուսակցության պարբերական «մաքրումին»: Այդպես կլինի նաև մեղ մոտ, պարոնայք բուրժուական «ազատ քննադատության» կողմանիցներ, կուսակցության ներսում մ. այժմ ձեղ մոտ կուսակցությունը միանգամից դառնում ե մասսայական, այժմ մենք կտրուկ անցում ենք կատարում դեպի բաց կազմակերպությունը, այժմ անխուսափելի կերպով մեր կուսակցության մեջ կմտնեն բազմաթիվ անհետեղական (մարքսիստական տեսակետից) մարդիկ, գուցե և, մինչեւսկ մի քանի միտակիներ: Մեր ստամոքսներն ամուր են, մենք ամրա-քարեղեն մարքսիստներ ենք: Մենք կմարսենք այդ անհետեղական մարդկանց: Մաքի ազատությունն ու քննադատության ազատությունը կուսակցության ներսում մեղ չեն ստիպի մոռանալ մարդկանց ազատ խմբավորումների մասին կա-

մավոր միություններում, վոր կոչվում են կուսակցություններ:

Յերկրորդը՝ պարոնայք բուրժուական ինդիվիդուալիստներ, մենք պետք ե ձեղ ասենք, վոր աբումուտ ազատության մասին ձեր ճառերը սոսկ կեղծավորություն են: Փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ, այն հասարակության մեջ, վորտեղ աշխատավորական մասսաները մուրացկանության մատնված և մի բուռը հարուստներ պորտաբուծությամբ են զբաղված, չի կարող լինել իրական և իսկական «ազատություն»: Աղմատ եք դուք արդյոք ձեր բուրժուական հրատարակչից, պարո՞ն գրող, ձեր բուրժուական հասարակությունից, վորը պահանջում ե ձեղանից պոռնոգրաֆիա՝ շրջանակներով և նկարներով, պրոստիտուցիա՝ վորպես «լրացում» բեմական «սրբադան» արվեստի: Չե՞ վոր այդ բացարձակ ազատությունը բուրժուական կամ անարխիստական մի ֆրազ յի (վորովհետեւ, վորպես աշխարհայացք, անարխիզմը յերեսը շրջված բուրժուականություն ե): Ապրել հասարակության մեջ և հասարակությունից ազատ լինել չի կարելի: Բուրժուական գրողի, նկարչի, դերասանունուազատությունը լոկ դիմակավորված (կամ կեղծավորաբար դիմակավորվող) կախումն ե փողի քսակից, կաշառքից, ապրուստից:

Յեկ մենք՝ սոցիալիստներս, դիմակազերծ ենք անում այդ յերեսպաշտությունը, պատում ենք կեղծ ցուցանակները վոչ թե նրա համար, վոր ստանանք արտադասակարգային գրականություն և արվեստ (այդ հնարավոր կլինի միայն սոցիալիստական արտադասակարգային հասարակության մեջ), այլ նրա համար, վոր յերեսպաշտական — ազատ, իսկ իրականում բուրժուազիայի հետ կապված գրականությանը հակագրենք իս-

կապես ազատ, պրոլետարիատի հետ քաջորոշ կապված գրականությունն:

Դա կլինի ազատ գրականությունն, վորովհետեւ վճռ թե շահասիրությունը և կարյերան, այլ սոցիալիզմի գաղափարները և աշխատավորների համակրանքը կներդրավեն նրա շարքերում նոր և նոր ուժեր: Դա կլինի ազատ գրականությունն, վորովհետեւ նա սպասարկելու յեւ վոչ թե հղիացած հերոսունուն, վոչ թե ճարպակալությունից ձանձրացող և տառապող «վերին մի տասնյակ հազարին», այլ միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր աշխատավորներին, վորոնք կազմում են յերկրի ծաղիկը, նրա ուժը, նրա ապագան: Դա կլինի ազատ գրականությունն, վորը բեղմնավորում և մարդկության հեղափոխական մտքի վերջին խոսքը՝ սոցիալիստական պրոլետարիատի փորձով և կենդանի աշխատանքով, գրականությունն, վոր հարատես փոխադարձ ներգործությունն և ստեղծում անցյալի փորձի (գիտական սոցիալիզմ, վոր ավարտել և սոցիալիզմի պարգացումը՝ սկսած նրա պրիմիտիվ, ուտոպիչական ձևերից) և ներկայի փորձի (բանվոր ընկերների ներկապայքարի) միջև:

Ուրեմն, գեղի աշխատանք, ընկերներ, Մեր առաջկա մի դժվարին և նոր, հսկայական և վեհ խնդիր — կազմակերպել լայնածավալ, բազմակողմանի, բազմազան գրական գործը՝ սերտ և անխզելիորեն կապված սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման հետ:

Ամբողջ սոցիալ-դեմոկրատական գրականությունը պետք է դառնա կուսակցական: Բոլոր թերթերը, ամսագրերը, հրատարակչությունները և այլն անհապաղ պետք է ձեռնամուխ լինեն վերակազմության աշխատանքին, այնպիսի մի գործության նախապատրաստման, վորով նրանք ամբողջովին, այս կամ այն հիմունքնե-

րով, մտնեն կուսակցական այս կամ այն կազմակերպությունների մեջ: Այն ժամանակ միայն սոցիալդեմոկրատական» գրականությունը կդառնա իրոք այդպիսին, այն ժամանակ միայն նա կարող կլինի կատարել իր պարտքը, այն ժամանակ միայն նա կկարողանա բուրժուական հասարակության շրջանակներում ևս դուրս պրծնել բուրժուազիային ստրկանալուց և ձուլվել իսկական առաջավոր և մինչև վերջը հեղափոխական դասակարգի շարժման հետ:

«Новая Жизнь» № 12, 1905 թ. նոյեմբերի 13.

* * *

...Մենք միայն ուղում ենք ցույց տար վոր առաջավոր մարտիկի դերը կարող և կատարել միայն առաջավոր թեուրիայով ղեկավարվող կուսակցությունը: Իսկ վորպեսզի գոնե քիչ թե շատ կոնկրետ կերպով ներկայացվի, թե դա ի՞նչ են նշանակում, թող ընթերցողը վերճիշի ուսասեան սոցիալ-դեմոկրատիայի այնպիսի նախակարապետների մասին՝ ինչպես Հերցենը, Բելինսկին, Զերնիշևսկին և 70-ական թվականների հեղափոխականների փայլուն պլիյադան: Թող մտածի այն համաշխարհային նշանակության մասին, վորը ստանում և այժմ ուսաց գրականությունը: Թող... դե, այդ ել բավական ե:

«Ինչ անել» (1901—1902)

* * *

...Ամեն մի թերթում* ամեն որ կարելի յեր ժողովրդին տալ լուրջ և արժեքավոր գրական նյութեր,

* Գրված ե թերթերի ձեր բաշխման շըջանում, յերբ տիրաժմերի նշանալոր մասը «հափառակվում եր սովորաբույների կողմից, զուրցրվում եր այս ու այն կողմը, ցեղաբաների համար և այլնու: Նախազելով այս յերեսութիւնիմ պայքարելու միջոցները, Վ. Ի. մատնանշում ե, վոր գործը կանոնավոր հիմքերի վրա դնելով «մենք անտեսած կլինելինք յերկու ամենորյա թերթ՝ 125,000 որինակով»: Ս. Դ.

3—918

ւավագույն կլասսիկ բելետրիստիկա, դասագրքեր, գյուղատնտեսության հանրակրթական դասագրքեր, արդյունաբերության դասագրքեր։ Յեթե ֆրանսիական բուրժուաները գեռ մինչև պատերազմը սովորել են, փող շահելու նպատակով, ժողովրդի համար վեպեր հրատարակել վոչ թե $3\frac{1}{2}$ ֆրանկով՝ մեծատան վայել զրքույկի ձեռվ, այլ 10-ական սանտիմով (այսինքն 35 անգամ եժան, 4 կոտ. նախապատերազմյան կուրսով), պրոլետարական լրագրի ձեռվ, ապա ինչու մենք — կապիտալիզմից դեպի Հկոմմունիզմ անցնելու յերկրորդ քայլափոխում — չսովորենք նույն ձեռվ վարվել։

«Լուսժողովամատի աշխատանքի մասին»
(1921 թ. փետրվարի 7)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՏՐՈՒՄ ԵՆ

— «Եոր ույժերի արթնանալը, նրանց աշխատանքը Խորհրդային Ռուսաստանում՝ նոր արվեստ և կուլտուրա ստեղծելու համար» — ասաց նա (Վ. Ի.) — «այդ լավ է, շատ լավ է։ Նրանց զարգացման բուռն տեմպը հասկանալի յեւ և ոգտակար։ Մենք պետք են հասնենք այն ամենին, ինչ վոր բաց ե թողնված յեղել դարերի ընթացքում, և մենք այդ ուզում ենք։ Քառսային խմուրումը, նոր լողունգների տեսնդագին վորոնումը, լողունգներ, վորոնք այսոր «ովսաննա» յեն ձոնում արվեստի և մաքի ասպարիզում վորոշ հոսանքների հասցեյին, իսկ վաղը աղաղակում «խաչ հանիր նրան» — այս ամենն անխուսափելի յ։

«Հեղափոխությունն արձակում է մինչ այդ կաշկանդված բոլոր ույժերը և խորքերից նրանց մզում ե դեպի կյանքի մակերեսը։ Ահա ձեզ չատերից մի որինակ։ Մտածեցի՞ք այն աղղեցության մասին, վոր գործում եյին մեր նկարչության, քանդակագործության

և ճարտարապետության զարգացման վրա ցարական արքունիքի մարդիկն ու նրա քմահաճռույքները, ինչպես նաև արիստոկրատ տերերի և բուրժուազիայի ճաշակն ու տարրությունները։ Մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակության մեջ արվեստագետը արտադրում է ապրանքները շուկայի համար, նա գնողների կարիք և զգում է Մեր հեղափոխությունն աղատել և արվեստագետներին այդ չափազանց պրոցեսիկ պայմանների լծից։ Հեղափոխությունը խորհրդային պետությանը զարձրել և նրանց պաշտպանն ու պատվեր տվողը։ Ամեն մի արվեստագետ, ամեն մեկը, ով իրեն համարում է այդպիսին, ունի ազատորեն ստեղծագործելու իրավունք, համաձայն իր իդեալի, ամեն բանից անկախ։

«Սակայն պարզ է, մենք կոմմունիստներ ենք։ Մենք չենք կարող ձեռքներս ծալած կանգնել և թույլ տալ, վոր քառորդ զարգանա զեպի ուր կամենաս։ Մենք պարտավոր ենք կատարյալ պլանաշափ կերպով զեկավարել այդ պրօցեսը և ձեւավորել նրա արդյունքները։ Մենք գեռ դրանից հեռու յենք, շատ ենք հեռու... Արվեստի մասին կարենու մեր կարծիքը չե։ Կարենու նույնպես այն չե, ինչ արվեստը տալիս ե միլլիոներով հաշվող ազգաբնակության ընդհանուր քանակից վերցրած մի քանի հարյուրներին, նույնիսկ մի քանի հազարներին, Արվեստը պատկանում է ժողովրդին։ Նա իր խորագույն արմատներով պետք է գնա աշխատավոր լայն մասսաների ստվար զանգվածների մեջ։ Նա պետք է հասկացվի այդ մասսաներից և սիրված լինի նրանցից։ Նա պետք է միացնի այդ մասսաների զգացմունքը, միտքը և կամքը, քարձրացնի նրանց։ Նա պետք է զարթեցնի նրանց մեջ արվեստագետների և զարգացնի նրանց։ Պետք է արդյոք մենք՝ սակայ-

փոքրամասնությանը հրամցնենք քաղցր, նուրբ բիւկվիտներ, մինչեռ բանվորական ու գյուղացիական մասսաները սև հացի կարոտ են: Յես այդ հասկանում եմ, ինքնին հասկանալի յե, իհարկե, վոչ միայն բառացի մտքով, այլ և այլաբանորեն. մենք միշտ պետք ե մեր աչքի առաջ ունենանք բանվորներին ու գյուղացիներին: Նրանց համար մենք պետք ե սովորենք տնտեսավարեր հաշվել: Այս վերաբերում ե նաև արվեստի և կուլտուրայի բնագավառին:

«Կորպեսզի արվեստը կարողանա մոտենալ ժողովը թիվին և ժողովուրդը՝ արվեստին, մենք պետք ե նախ բարձրացնենք կրթական և կուլտուրական մակարդակը: Ի՞նչպես ե դրված մեզ մոտ գործն այդ տեսակետից: Դուք հիանում եք այն հսկայական կուլտուրական գործի առթիվ, վոր մենք կատարել ենք մեր իշխանության գլուխ անցնելու որից: Անշուշտ, առանց պարձենկոտության մենք կարող ենք ասել, վոր այդ տեսակետից մենք շատ, շատ բան ենք արել: Մենք վոչ միայն «գլխաներ եյինք կտրում», ինչպես դրանում մեզ մեղադրում են բոլոր յերկրների մենշեիկները և ձեր հայրենիքում կառուցկին, այլ մենք գլուխներ եյինք լուսավորում, մենք շատ գլուխներ ենք լուսավորել: Սակայն «շատ»-ը լոկ անցյալի համեմատությամբ ե, այն ժամանակվա տիրող դասակարգերի և կլիկաների մեղքերի համեմատությամբ: Անսահման մեծ ե բանվորների և գյուղացիների մեջ մեր կողմից արթնացրած և բորբոքված ծարավը կրթության և կուլտուրայի հանդեպ վոչ միայն Պիտերում և Մոսկվայում, արդյունաբերական կենտրոններում, այլ այդ սահմաններից հեռու, մինչև իսկ գյուղերում: Բայց դեռևս մենք աղքատ, շատ աղքատ ժողովուրդ ենք: Յեվ արդ պատճառով ուղենք, չուղենք, — ծերերի մեծամասնությունը

կուլտուրայի վերաբերմամբ պետք ե զոհաբերվի: Իհարկե, մենք իսկական համառ պատերազմ ենք մղում անգրագիտության դեմ: Շինում ենք գրադարաններ, «Խրճիթ ընթերցարաններ» խոշոր և փոքր քաղաքներում ու գյուղերում, կազմակերպում ենք ամենաբազմազան տեսակի դասընթացներ: Կազմակերպում ենք լավ ներկայացումներ և համերգներ, յերկրի բոլոր կողմերն ուղարկում ենք «շարժական ցուցահանդեսներ» և «Ըլուսավորական գնացքներ»: Բայց յես կրկնում եմ. ի՞նչ կարող ե տալ դա այն բազմամիլիոն ազգաբնակչությանը, վորին պակասում ե ամենատարրական գիտությունը, ամենապրիմիտիվ կուլտուրան: Մինչդեռ այսոր Մոսկվայում, յենթազրենք, մի տաս հազար մարդ և վաղն ելի՛, գարճալ մի նոր տաս հազար մարդ կզմայլվեն, բավականություն ստանալով թատրոնում տրվող հիանալի ներկայացումից — միլիոնավոր մարդիկ ձգտում են այն բանին, վոր սովորեն վանկերով գրելի ենց անունը և հաշվել ձգտում են հաղորդակից լինել կուլտուրային, վորը սովորացնի նրանց, թե յերկիրը գնդաձն ե և վոչ թե տափակ, և վոր աշխարհը կառավարում են բնության որենքները և վոչ թե կախարդներն ու վհուկները «յերկնային հոր» հետ միատեղ»...

...«Կորճնք են հապա մեր ապագայի հեռանկարները: Մենք ստեղծեցինք փառավոր հիմնարկներ և իսկապես լավ միջոցառումներ անցկացրինք այն նպատակով, վոր պրոլետարական և գյուղացի յերիտասարդությունը կարողանա սովորել սերտել և յուրացնել կուլտուրան: Սակայն այստեղ ևս մեր առաջ ծառանում ե դարձալ նույն տանջող հարցը՝ ի՞նչ կնշանակի այս ամենը այնպիսի մի ահագին ազգաբնակչության համար, ինչպիսին մերն եւ: Դեռ ավելի վատը՝ մենք գեռչունենք բավականաշափ մանկապարտեղներ, ապաս-

տարբաններ և տարբական դպրոցներ։ Միլիոնավոր յերեխաններ մեծանում են առանց զաստիարակության և կրթության։ Նրանք մնում են նույնպես տգետ և անկուլտուրական, — ինչպէս իրենց հայրերն ու պապերն են։ Ինչքան տաղանդներ են կորչում այդ պատճառով, ինչքան լոյսի ձգումներ են խորակված։ Դա սոսկալի հանցագործություն և աճող սերնդի բախտավորության տեսակետից, վոր հավասարագոր և խորհրդային պետության հարստությունների հափշտակամանը, այն պետության, վոր պետք և վերածվի կոմմունիստական հասարակության։ Սրա մեջ ահեղ վտանգ և թագնված։ — Լենինի սովորաբար այնքան հանգիստ ձայնի մեջ ինչպես զսպված մի զայրույթ։

«Կորքան նրա սրտին մոտ ե կպչում այս հարցը — մտածեցի յես — «յեթե նա մեղ՝ յերեքիս* առջև ադիտացիոն ճառ և արտասանում։»

Մեղանից մեկը, յես չեմ հիշում թե ով, — խոսեց մի քանի, առանձնապես աչքի զարնող յերկույթների մասին՝ արվեստի և կուլտուրայի բնագավառից, բացարելով նրանց ծագումը «մոմենտի պայմաններով»։ Լենինը դրան առարկեց՝ «Յես լավ գիտեմ։ Շատերը անկեղծորեն համոզված են նրանում, վոր քառետ էր շրջանակություններով»։ Կարելի յե հաղթահարել ներկա շրջանի դժվարություններն ու վտանգները։ Հացով՝ անջնջտ։ Ինչ վերաբերում է տեսարաններին — թող լինի — չեմ առարկում։ Սակայն թող դրա հետ միաժամանակ չմոռանան, վոր տեսարանները — դա իսկական մեծ արվեստ չե, այլ ավելի շուտ քիչ թե շատ գեղեցիկ զվարճություն եւ Յեղալա չպետք և մոռանալ, վոր մեր բանվորներն ու

զյուղացիները քնարի չեն հիշեցնում հոռմեյական լում-պին-պրոլետարիատը։ Նրանք չեն պահվում պետության հաշվով, այլ իրենց աշխատանքով պահում են պետությունը։ Նրանք «կատարել են» հեղափոխությունը և պաշտպանել են վերջինի գործը, թափելով արյան գետեր և տալով անթիվ զոհեր։ Արդարեւ, մեր բանվորներն ու զյուղացիները արժանի յեն մի ավելի մեծ բանի, քան տեսարանների։ Նրանք իրավունք են ստացել իսկական մեծ արվեստի համար։ Այդ պատճառով մենք առաջին հերթին առաջ ենք քաշում ամենալայն ժողովրդական կրթությունը և դաստիարակությունը։ Դա հող է ստեղծում կուլտուրայի համար, պայմանով, ի հարկե, վոր հացի հարցը լուծված եւ Սյուհողի վրա պետք և աճի իսկապես նոր մեծ կոմմունիստական արվեստը, վոր կստեղծի իր բովանդակության համապատասխան ձեզ Սյուհանապարհին մեր «ինտելիգենցիներին» վիճակված և լուծել հսկայական կարևորություն ունեցող և վեհ խնդիրներ։ Հմբունելով և լուծելով այդ խնդիրները, նրանք կծածկեցին իրենց պարտքը պլուխուրական հեղափոխության առաջ, վորը նրանց առաջ ես լայն բացել և այն գոները, վորոնք նրանց կենսական ստորացնող պայմաններից, վոր այնպես վարպետորեն բնութագրված են «Կոմմունիստական Մանիֆեստում»՝ տանում են դեպի լայնատարածները։

«Հիշողություններ լենինի մասին».

Կ. Յետկինի, գերմաններներ թարգմ։ Շուլը։

* * *

Տեսահսկի զյուղում (Սիբիր, 1899 թ. ամառը) լենինի հետ անցկացրած ամբողջ յերեք որն անցավ կենդանի վիճաբանություններով մի կողմից լենինի և մյուս կողմից՝ ընկ. ընկ. Յե. Վ. Բարամզինի և Ֆ. Վ. լեգնիկի միջև։ Ի դեմս Յե. Վ. Բարամզինի 39

նարողնիկությունը հրաժարվում եր իրեն վերջնաշանապես պարտված ճանաչելուց և, դեռ կառչում եր կյանքից: Բարամզինը հարձակվեց մարքսիզմի կողմից թույլ մշակված արվեստի և գեղարվեստական գրականության հարցի վրա, վորոնց վրա մարքսիզմին դեռ չեր հաջողվել իր կնիքը դնել ինչպես այդ հաջողվել եր անել նարողնիկությանը... Վորքան յես հիշում եմ, կենինը արձարծում եր այն միտքը, թե դժվար թե կարելի յե սպասել, վոր ճնշված բանվորը, վոր մինչ բթացումը հոգնած վերադառնում և ֆարբեկայից, կարողանար առանց բուրժուական միջավայրից դուրս յեկած ինտելիգենցիայի ոգնության, ստեղծել իր արվեստն ու գրականությունը: Ամենագլխավորը բանվոր դասակարգի կոփն ե, վոր նա սկսել ե և վորը, ինչպես ապացուում ե հեղափոխական մարքսիզմի թեորիան, կրերի կհասցնի սոցիալիզմի կատարյալ հաղթանակին: Արվեստը վոչ թե նպատակ, այլ միջոց ե այդ պայքարում: Նարողնիկական արվեստը չփրկեց նարողնիկությունը, վորպես հեղափոխական թեորիա՝ հեղափոխական մարքսիզմի հետ ընդհարվելով՝ յերբ նարոդնիկությունն անկարող գտնվեց գիտական ուսումնասիրության լույսի ներքո: Վորչափ դարդանարանը դասակարգի պայքարը, դրան համապատասխան, արվեստը՝ դուրս գալով իրենց՝ բանվորների միջավայրից կամ ստեղծված լինելով ինտելիգենցիայի կողմից, կանգնելով պրոլետարիատի հեղափոխական թեորիայի տեսակետի վրա՝ ոգնության կգա բանվորներին: Այսպես, մոտավոր ապես, վորքան յես այժմ հիշում եմ միայն ընդհանուր զծերով, ինձ թվում ե, այսպես եր ասում կենինը, ընկ. Բարամզինին առարկելու:

«Հիշողություններ Վ. Ի. հանդիպումների մասին»

Ս. Շապովալովի:

* * *

...Մտեղծագործական աշխատանքով զբաղված մարդու վրա գործարանն անջնջելի տպավորություն և թողնում: Խոշոր լիցք ես ստանում հետագա աշխատանքների համար: Այստեղ ընդհուպ տեսնում ես իրագործված կամքը: Այստեղ զգացվում ե կոլեկտիվի կյանքի բարախումը... Մտարերում եմ Վլադիմիր Իշչինին ինձ ասած խոսքերը: *

— «Դուք, նկարիչներդ, — վուչ ինդիվիդուալիստներ, գնացեք մասսաների մոտ, ֆարբիկաներն ու գործարանները և այնտեղ դուք կգտնեք ստեղծագործության իմպուլսներ: Դուք այնտեղ կգտնեք այն, ինչ վոր այժմ անհրաժեշտ ե պրոլետարիատի համար»:

«Ապագայի ճանապարհն» Ս. Մելկոնովի:

* * *

Վ. Իլլիչն իր «Խորհրդային իշխանության հաջողություններն ու դժվարությունները» հասի մեջ արվեստը գիտության և տեխնիկայի հետ մի շարքել յե դասում և ասում ե, վոր մենք չենք կարող կառուցներ կուլտուրան, չտիրապետելով ամբողջ հին կուլտուրային, այսինքն ամբողջ տեխնիկային, գիտությանն ու արվեստին: Զգիտեմ ինքն անձամբ ե գրել արդյոք այս պարագրաֆը, թե նրա հավանությամբ, սակայն համենայն դեպքում կուսակցության ամբողջ 8-րդ համագումարը, անհրաժեշտ եր համարում կուսակցության ծրագրում հիշատակել արվեստի ասպարիզի մեր լինդիրների մասին:

Ծրագրում ասված ե, «հավասարապես անհրաժեշտ ե բացել և մատչելի դարձնել աշխատավորների համար արվեստի բոլոր գանձերը, վորոնք ստեղծվել են նրանց

* Հիշողություններ հեղինակի Վ. Ի. կիսանդրու վրա աշխատելիս:

աշխատանքի շահագործման հիման վրա և մինչև այժմ դժուկել են շահագործողների բացառիկ տրամադրության տակ։ Ահա ինչ է ասված անողոք մարդքիստական վորոշումով. արվեստը առաջացել է բանվորների շահագործման հողի վրա, նա ծառայում եր շահագործողներին և, ուրեմն, հարմարվում եր նրանց ծառայելու համար։ Այսպիսին եր նախանեղափոխական, կալվածատիրական, կապիտալիստական արվեստը։ Ի՞նչ պետք է անել այն Նրան պետք է դարձնել ժողովրդի սեփականությունը։ Դա կարող է հակասություն թվականց դա հակասություն չե, դա Վլադիմիր Իլյիչի մտքի հենց խորությունն ե։ Սա բղիում ե նրանից, վոր նա հաշվի յե առնում այն արվեստը, վոր մեզ մոտ կա։ Այժմ մենք արդեն ունենք նաև մեր արվեստից մի ինչ վոր բան, նա գուցե չի գուրս յեկել տնայնագործության շրջանից, գտնվում ե աճման պրոցեսում և մենք ծրագիրը կազմելիս չեյինք կարող վորոշակի խոսել նրա մասին։ Այն ժամանակ մեզ մոտ կար այսպես ասած բոհեմական արվեստ, վորն ամենաշեշտակի և վորոշակի կերպով հայտարարել եր, թե նա հենց ինքն ե պրոլետարական արվեստը։ Վլադիմիր Իլյիչն այդ արվեստը համարում ե անհիմն, խախուս, զրկված վորեւ արժեքից, ինքը նրան չեր սիրում, չեր զգում։ Ուստի պետք եր հաշվի առնել արվեստը այնպես, վոր նա կար իսկ այդ արվեստը գոյություն ուներ։

Ա. Վ. Լունաչարսկու հիշողություններից (1925 թ.)

* *

Վ. Իլյիչի տեսակետը Պրոլետկուլտի բոնած սխալ դիրքի մասին՝ իր բնորոշ արտահայտությունը գտավ Ռեկ(բ) Կե-ի նամակում «Պրոլետկուլտների մասին», վոր հրապարակվեց «Պրավդայում», 1920 թ. դեկտեմբերի

1-ին։ Ինչպես հիշատակում ե Ա. Վ. Լունաչարսկին, «այստեղ (նամակում) իր՝ Վլադիմիր Իլյիչի մեղքի մեծ կաթիլը կար»։ Կտրուկ կերպով գատապարտելով Պրուլետկուլտների թեքումները, նամակը մատնանշում եր «բանվորներին «պրոլետարական կուլտուրայի» արտաքինի տակ հրամցնում եյին փիլիսոփայության մեջ բուրժուական հայացքներ (մախիզմ), իսկ արվեստի ասպարիզում բանվորների մեջ պատվաստում եյին անհեթեթ, այլանդակված ճաշակներ... Նույն այն հակամարքսիստական հայացքները, վորոնք այնպես փարթամորեն ծաղկեցին 1905 թ. պարտությունից հետո և մի քանի տարի (1907—12 թ.թ.) զբաղեցնում եյին «սոցիալ-դեմոկրատական» ինտելիգենցիայի մտքերը, վորը ունակցիայի տարիներին զբաղվում եր «աստվածարարությամբ» („բօգօշութեածութեամբ“) և իդեալիստական փիլիսոփայության զանազան տեսակներով— այդ նույն հայացքները, քողարկված ձեռվ, ինտելիգենցիայի հակամարքսիստական խմբակները այժմ փորձում եյին պատվաստել պրոլետկուլտներին»։ Միաժամանակ «Ռեկ(բ) Կե-ի ցուցմունք ե տալիս կուսանողկումին՝ ստեղծել և պահպանել այնպիսի պայմաններ, վորոնք ապահովեն պրոլետարների համար ազատ ստեղծագործական աշխատանքն իրենց հիմնարկներում»։

* * *

Յա. Յակովիկ. Յես կուզենայի կարճ ձևակերպել այն, թե ինչպես եր կենինը վերաբերվում պրոլետարական կուլտուրայի հարցերին։ Սրանից մեկ ու կես տարի առաջ յես առիթ ունեցա մի հինգ անգամ խոսել նրա հետ այդ խնդիրների մասին։

Այն հիմնական բանը, վոր այն ժամանակ առաջադրում եր Իլյիչը, ամենից առաջ հանգում եր պայ-

Քարի՝ ընդգեմ պրոլետարական կուլտուրայի այնպիսի պատկերացման, ըստ վորի պրոլետարական կուլտուրան կարող ե բանել այս կամ այն ջերմոցային հիմնարկի միջից։ Լենինը մեծ վտանգ եր համարում հենց այն միտքը, թե ջերմոցում կարելի յե աճեցնել պրոլետարական կուլտուրա։ Այդպիսի մի ջերմոց եր Պրոլետակուլտը։*

Պրոլետարական կուլտուրան կարող ե աճել ընդհանուր դրագիտության հողի վրա՝ նորհրդային իշխանության պայմաններում։ Յերբ պրոլետարական իշխանության գոյությամբ մեղանում կրալձրանան միլիոնավոր կուլտուրական մարդիկ, վոր մեղանում այժմ այնքան սակալ են, այն ժամանակ իսկապես կաճի կուլտուրայի մի նոր տիպ և գրականության մի այլ տիպար։

Խնդրի «ուղղ ու ծուծը» նրանում ե, վոր պրոլետարական իշխանության պայմաններում բուրժուական կուլտուրայի լավագույն նվաճումները դառնան մասսաների սեփականություն։ Միլիոնավոր մարդկանց կողմից այս լավագույն նվաճումները յուրացնելը պրոլետարական իշխանության պայմաններում բազա կստեղծի այն բանի համար, վորպեսզի սկսի ծնունդ առնել իսկական կուլտուրան, բայց վնչ բուրժուական տիպի։

Այդ պատճառով լենինը, դիմելով բանվորներին, ասում եր.

* Նույն այդ խորհրդակցությանը Կ. Ռադիկը մեջ եր բերել Վ. Ի. Բոսքերը, վոր նա ասել եր Կ. Ռադեկին, պրոլետարական գրողների մասին տեղի ունեցած խոսակցության ժամանակ — «Լավ բանվորին, վորը գուցե անմահական մեծ կայժ ունի, կիշացնուր մի պատմվածք և գրում անցյալ ապրումներից, իսկ արտահայտվեց. «Ճամը պառավ աղջիկներ փուլմ են յերեսին, նրան համար շինելու համար, Յեկ փչացնում են բանվորներին»։

«Սովորեցնք, վերցրե՛ք բուրժուական կուլտուրան, ձեզ խաբել միք տա այն հեքիաթներով, թե մի ինչ վոր կամերայից, ինչպես ել նա կոչվելիս լինի, արդեն աճել և պրոլետարական կուլտուրան։ Պրոլետարական կուլտուրայի ծնունդ առնելը պետք ե հասկանալ դիալեկտիկորեն։ Սյդ պրոցեսսի եյությունը կայանում ե նրանում, վոր միլիոնավոր մարդիկ յուրացնում են բուրժուական կուլտուրայի նվաճումները՝ Խոհերդային պետության պայմաններում»։

Ա. Էռնա աչարսկի: Վլադիմիր Իլյիչը մեծ յերկյուղ եր տածում, վորպես թե տրամարանական թվացող մի դատողության հանդեպ, այն ե. կացությամբ ե վորոշվում գիտակցությունը, ուրեմն և բուրժուական փղելորդիկան վորոշվում և բուրժուական կացությամբ, և ուրեմն՝ կորչի բուրժուազիայի ամբողջ ժառանգությունը։ Այստեղից յենելով, պետք եր գեն ձգել նաև մեր ամբողջ տեխնիկան։ Կատարելապես պարզ ե, վոր այստեղ արմատացած և մի խոշոր սխալ Բուրժուական կենցաղն իր մեջ ամփոփում եր մի շարք պրոբլեմներ, վորոնք կանգնած են նաև մեր առջև և վորոնք լուծված եյին բուրժուազիայի կողմից շատ թե քիչ բավարար կերպով, և վորոնց լուծման համար մենք այս բռպերիս ավելի բավարար միջոցներ չունենք։ Վլադիմիր Իլյիչը չափազանց վախենում եր, վոր մենք կմոռանանք այդ բանը և գեն շպրտելով բուրժուական ժառանգության արժեքավորը, կակսենք հնարել մերը։ Այս տեսակետից ել նա յերկյուղ եր կրում Պրոլետկուլտից։

Նա յերկյուղ եր կրում բոգդանովականությունից, նրանից, վոր Պրոլետկուլտում կարող են ծագել զանազան տեսակ փիլիսոփայական, գիտական և ի վերջո, նաև քաղաքական թեքումներ։ Նա չեր ուզում, վոր կուսակցության կողին սանդղվեր մրցող բանվորա-

կան կաղմակերպություն։ Այդ վտանգից նա նախազգուշացնում եր։ Այդ մաքով նա ինձ անձնական զիբեկահիմքեր եր տալիս՝ Պրոլետակուլտուն ավելի մոտ քաշել պետությանը, յենթարկել նրա կոնտրոլին։ Սակայն միևնույն ժամանակ նա ընդգծում եր, վոր Պրոլետակուլտի գեղարվեստական ծրագրերին պետք ե վորոշ ընդլայնում ընձեռել։ Նա ինձ ուղղակի ասում եր, թե շատ հասկանալի յե համարում Պրոլետակուլտի ձգտումը՝ առաջ քաշել սեփական նկարիչներին։ Պրոլետարական կուլտուրայի գլխովին դատապարտություն չկար Վլադիմիր Իլյիչի կողմից։ *

* Копиума[к]гупуթյան քաղաքականությունը գեղարվեստական դրականության մեջ խորհրդակցության սղագը. մայիսի 9, 1924 թ.: Նոյնի բանի մասին եր ասում նաև Ն. Կ. Կրուպսկայան ՌՍՖՀՀՀ Քվեալուսվարի նախագահությանը արտասանած էր ճառում (1927 թ. աշնանը). «Ինչու յե Պրոլետկուլաը հայոյական խոսք դարձել իմիչը կավում եր վոչ թե նրա կուլտուրական գործերի (թատերական արիենստանոցներ, իզու և այլն), այլ նրա փիլիսոփայության դեմ — փիլիսոփայության, վորը զարդացնում եյին բոդդիանովյան աշակերտները — հին կուլտուրայի ժառանգության բացասաման, և ջերմոցայնության դեմ» Վ. Ի. Ուշադիր վերաբեր-մունքը դեպի բանվորական արվեստի յերիտասարդ բողոքները հաստատվում ե ինչպես նրա Գորկու հետ ունեցած նամակագրու-թյան մեջ (տես ստորև, եջ 115), աշնուի և թեկուզ հետեւյալ տոմսից, վոր Վ. Ի. Միքն ուղարկել եր գրադարան՝ Գորկու այցե-լություններից մեկից հետո (1921 թ. հունվ. 28). «Խնդրեմ գանեք Իվ. Վոզնեսենսկում ապկող „Рабочий країн“-ի կոմітեի կողը (իս-կական պրոլետար կան պոետների խմբակը): Գորկում ե Գորկին. Ժիլին, Արտամոնով; Սևմենովսկիյ»: („Записки И.И. Ленина“, 3-րդ հատ. 1928) «Ինկական» բառն ընդգծված ե Վ. Ի. Ճեռքուու:

U. S.

Վ. Ի. ԱԵՆԻՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լուսժողկոմի նախկ. տեղակալը ընկ. Լիտկենովն *

«Լուսժողկոմատը պետք է կազմակերպի բոլոր ներկայացումների հակողությունը և կանոնավորի այդգործությունը:

Բոլոր ժապավենները, վորոնք ցուցադրվում են ԱՄֆիչ-ում, պետք և ցուցակագրված լինեն Լուսժողկոյմատում: Յուրաքանչյուր կինո-ներկայացման ծրագրի համար պետք է սահմանված լինի վորոշ պ ը ու պ ը ց ի ա՝ ա) զվարձալի նկարներ, հատուկ՝ ռեկլամի և յեկամուտի համար (անշուշտ առանց ցոփաբանության, հակածեղափոխության և թ) բոլոր յերկրների ժողովը ների կյանքից» — Փիրմայով, հատկապես պրոպագանդային բովանդակությամբ նկարներ, ինչպես Անգլիայի և Հնդկաստանի գաղղութային քաղաքականությունը, Ազգերի Լիդուայի աշխատանքը, «քաղաքածները Բեռլինում» և այլն:

Հարկավոր ե ցույց տալ վոչ միայն կինո-նկարներ, այլ և պրոպագանդայի համար հետաքրքրական լուսա-նկարներ՝ համապատասխան վերտառություններով։ Աշխատելով գորպեսզի մասնավոր ձեռքերում գտնվող կինո-թատրոնները բավականաչափ յեկամուտ տան պետությանը՝ արենդի ձեռքով։ Իրավունք տալ ձևոնարկատե-

* Упүржын գրությունը 1922 թվի հունվարի 22-ից, ուղարկվել էր ընկերության՝ ի ղեկավարություն։ Դրության տեկստը դրել եր Ն. Պ. Գորբունովը և ի. Ի. Թեհադրությամբ (մանրամասն տես „Ленин и кино“ Պ. Բոլտյանսկու)։

ըերին, ավելացնել համարների թիվը և մտցնել նորերը, բայց կուսփողկոմատի անպայման ցենդուրայով, և պայմանով, վոր պահպանվի համաշափություն՝ զգարձալի նկարների և պրոպագանդիստական բնույթով՝ «ըոլոր յերկների ժողովրդների կյանքից» խորագրով, նկարների միջև և այնպես, վոր արդյունաբերողները շահագրգուված լինեն նոր նկարների ստեղծման և արտադրության մեջ։ Այդ շրջանակներում նրանց պետք ելայն նախաձեռնություն տրվի։ Պրոպագանդիստական բնույթ կը ող նկարները պետք ե ստուգման տալ հին մարքսիստներին և գրականագետներին, վորպեսզի մեզանում չըրկնվեն քանից տեղի ունեցած անախուժ գետքերը, յերբ պրոպագանդան հակառակ նպատակի յե հասնում։

Հատկապես ուշադրություն դարցնել կինո-թատրոններ կազմակերպելուն զյուղերում և Արևելքում, վորտեղ նրանք նորություն են ներկայացնում և վորտեղ այդ պատճառով մեր պրոպագանդան հատկապես հաջողակ կլինի։

„Կիո-Արկ.“ 1925 թ. № 1.

ԺԱՄՐԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՏՐՈՒՄ ԵՆ

«Իւիչի հետ ունեցած իմ մեծ զրոյցը կինոյի մասին առաջ յեկավ նրա այն հետաքրքրությունից դեպի կինո գործը, վորն արտահայտվել եր հակ ընկ. Լիտկենսին հունվարին զրած նրա հայտնի նամակում։ Մոտավորապես փետրվարի մեջերին, գուցե և վերջին՝ Վլադիմիր Իլյիչն ինձ առաջարկեց անցնել իր մոտ՝ խոսակցության։ Վորքան հիշում եմ, խոսքը վերաբերում եր կուսփողկոմատի կյանքի մի քանի ընթացիկ խնդիրներին։ Նա ինձ հարցնում եր նաև այն մասին, թե ի՞նչ ե արված կիտկենսին ուղարկած իր թղթի

կատարման համար։ Ի պատասխան, յես բավականին մանրամասնորեն նկարագրեցի այն բոլորն, ինչ վոր գիտեյի նորհրդային Հանրապետության կինոյի զրության մասին և այն հոկայական դժվարությունների մասին, վորին հանդիպում ե այդ գործի զարգացումը։ Են հատկապես մատնանշեցի կինո-արտադրության չայն դրվածքի համար, կուսփողկոմատի անհրաժեշտ միջոցների բացակայության վրա՝ նաև այդ գործի դեկալարների, կամ ավելի ձիշտ ասած՝ կոմմունիստղեկավարների բացակայության վրա, վորոնց կարելի լիներ լիովին վստահել։ Դրան ի պատասխան՝ կենինն ինձ ասաց, թե կաշխատի վորևե բան անել ֆոտոկինո բաժնի միջոցների ավելացման համար, սակայն վոր նա ունի ներքին համոզում այդ գործի մեծ արգունակետության մեջ, յեթե նա կանոնավոր լինի գրված։ Նա դարձյալ ընդզծեց զվարձալի և գիտական կինո-նկարների միջև վորոշ համաչափություն սահմանելու անհրաժեշտությունը։ Դժբախտաբար այդ բանը, մինչև այսոր ել շատ թույլ ե դրված։ Վլադիմիր Իլյիչն ասաց ինձ, վոր կումունիստական գաղափարներով թափանցված, խորհրդային իրականությունն արտացոլող կինոփիլմերի արտադրությունը պետք ե սկսել խրոնիկայից, վոր իր կարծիքով նման ֆիլմերի արտադրության ժամանակը գուցե դեռ չի յեկել։

«Յեթե դուք ունենաք լավ խրոնիկա, լուրջ և լուսավորող նկարներ, ապա կարեոր չե, թե ժողովրդին գրավելու համար զրա հետ միասին կցնա մի վորեե անոգուտ, քիչ թե շատ սովորական ձեմ մի լենտ։ Անշուշտ, ցենզուրան դարձյալ հարկավոր եւ Հականեղափոխական և անբարյական լենտերը տեղ չպետք ե ունենան։

Դրան Վլադիմիր Իլյիչն ավելացրեց. «Յերբ դուք վորտքի կլանդները աստիճանաբար, շնորհիվ կանոնա-

վոր տնտեսավարության, գուցե, յերկրի դրության
ընդհանուր բարելավման դեպքում, կստանաք այդ
գործի համար վորոշ ոժանդակություն, դուք պետք ե
ավելի լայն ծավալեք արտադրությունը, մանավանդ
պետք ե առաջ տանեք առողջ կինոն մասսաների մեջ՝
քաղաքում, ևս առավել գյուղում:

Այնուհետեւ, ժպտալով, Վաղիմիլը իլլիչն ավելացրէց:

« Թուք մեզանում համարվում եք վորպես արվեստի հովանավորող, ուրեմն դուք պետք ե լավ միտներդ պահեք, վոր մեզ համար բոլոր արվեստներից կարևորագույնը հանդիսանում ե կինոն»:

Արանով, վորքան հիշում եմ, մեր զբույցն ավարտվեց:

Դժբախտաբար, պետք և արձանադրեմ, վոր կիտ-
կենսին գրած նամակը, բացի այս գործի իրավական
և տնտեսական կողմի մասին հանգամանորեն տրված
պատասխանից, իրական արդյունքներ չունեցավ։ Կլա-
դիմիր Իլյիչի իդեան՝ յուրաքանչյուր ծրագրի պրոպր-
ցիոնալ կազմի մասին, չի իրականացված մինչև այժմ
եր Դիրա փոխարեն, կինո-արտադրության տեսակետից
անշուշտ մենք առաջ ենք գնացել։

Ա. Վ. Լունաչարսկու հիշողություններից
(„Ленин и кино“)

* * *

Մենք, 1920 թ. սկսած, ունենք վ. ի. Լենինի մըտքերի, ցուցմունքների և վերաբերմունքի գըավոր հետքերը՝ կինո-աշխատանքի և նրա առաջ դրված խնդիրների մասին։ Նման հետքերից առաջինը հանդիսանում է ընկ. Լենինի 1920 թ. հունվարի 25-ին հայտնած կարծիքը՝ Համառուսական ԿԳԿ ագիտակազմացքների

աշխատանքի գրպածքի մասին լենինի գըպոյր ցուց-
մունքներն այդ առթիվ։ *

Այդ ցուցմունքների 8 կետից, վոր վերաբերում են ագիտնավզնացքների աշխատանքի բոլոր խնդիրներին՝ ի պատճառիսան Յա. Բուրովի զեկուցման, չորս կետը շոշափում են կինոյի խնդիրը:

Առաջին խակ կետում, վորտեղ խոսվում ե ագիտ-
նավգնացքների տնտեսական և գործնական աշխա-
տանքների ուժեղացման մասին, Վ. Իլյիչը ուշադրու-
թյուն ե դարձնում «համապատասխան բովանդակու-
թյան» կինո-լենտերի ընտրության վրա: Հ-ըդ, Ծ-ըդ
և Շ-ըդ կետերը ամբողջապես նվիրված են կինոյին:

«2. Կինո-կոմիտեյի միջոցով պատրաստել արտադրական (արտադրության զանազան ճյուղերը ցույց տվող) գյուղատնտեսական, արդյունաբերական, հակակրոնական և գիտական կինո-ժապավեններ:

5. Ուշք դարձնել ժապավենները խնամքով ընտրելու անհրաժեշտության, և ցուցադրման ժամանակագրքանակության վրա յուրաքանչյուր կինո-ժապավենի ունեցած ներգործությունը հաշվառելու վրա:

7. Կազմակերպել արտասահմանում՝ ներկայացուց-
չություն՝ կինո ժապավենների, պլյոնկանների և ամեն-
տեսակ կինեմատոգրաֆիական նյութերի գնման և փո-
խադրման համար»:

Այս կետերը վոչ միայն պատմական հետաքրքրություն ունեն, այլ նրանց նշանակությունը, վորպես գիրեկալտիզմեր, ակտուալ են նաև այս ըստեցիս։ Այդ կետերով կինոկենցաղի այսորվա բոլոր կարևորագույն խնդիրների կարճ և հսանկ ընդգրկումը պարզ կդառնա

* *СЕМ „Агитпарноезда ВЦИК. Их история, аппарат, методы и формы работы“* 48-рд 692: Հոգվածների ժողովածու, Վ. Կարպիկսկու խմբագրությամբ. 1920 թ.:

մեզ համար, յեթե մենք հիշենք, վոր կինո-վագոնը կամ ազգայնագինացքների կինո-ապարատը 1919—20 թվականներին խաղում եր ներկայիս շարժական կինոյի դերը, վոր աշխատում ե գյուղում գյուղացիության մեջ:

Վլադիմիր Իլյիչի 1922 թ. հունվարի 17-ին գրի
առած մտքերի մեջ հատուկ տեղ են գրափում կինո-
գործի կազմակերպչական կարգի հարցեր — վ. Իլյիչի
հարցապնդումը, թե ով ե վարում կինո-գործը, ինչ գեր-
ունի Լժեկ, ժապավենների հաշվառման անհրաժեշտու-
թյան ցուցմունքը (վոր, ի գեալ, իրականացված և Կրիս-
դրառնպարի կինո-սեկցիայի կազմակերպման) և այլն:

Սակայն մինչև 1922 թիվը ել Վլադիմիր Իլյիչը
մեծ նշանակություն տալով կինոյին, չափազանց հե-
տաքրքրվում եր կազմակերպչական հարցերով. թե
ի՞նչպես ե դրված գործը, ով ե տնօրինում այն, և
ի՞նչպես պետք ե վերակազմել կինոռարձը, կինոյի
թուլությունը, նրա սակավ նկատելի լինելը, կինոյի,
վորը կարող եր հսկայական դեր խաղալ ուղմական
կոմունիզմի շրջանում, ընական ե, խոսում եր այն
մասին, վոր աշխատանքի կազմակերպչական ձեերը և
գործի գլուխ կանգնած դեկավարներն անբավարար են,
Ա. Վ. Լուսաչարսկու հետ ունեցած զբոյցներում և
ցուցմունքներում Վլադիմիր Իլյիչը բազմիցս անըն-
դառնում եր կինոյի խնդրին, ընդգծելով, վոր բուր-
ժուազիան իմանում ե կինոն ոգտագործել և վոր մե-
զանում կինոն կարող ե և պետք ե թափանցի մաս-
սաների խորքերը. Սակայն, ինչպես վկայում ե ինքը
Ա. Վ. Լուսաչարսկին, ամեն անգամ Վլադիմիր Իլյիչի
ցուցմունքի առընչությամբ՝ արվում ելին այս ու այն
քայլերը, հրավիրվում ելին խորհրդակցություններ,
սակայն ՎՃԿՌ-ն (Լուսժողկոմատի համառուսական Փո-
տոկինո-բաժինը) դրանից գենը չեր գնում:

Վազգենի վարիչյեղած ժամանակ, 1921 թ. Պ. Պ. Կո-
յելողինը մի քանի անգամ կուռյի ընդհանուր կազ-
մակերպչական խոգիբներով դիմել և միջնորդել ան-
միջական կերպով Վ. Ի. Լենինին, վորպես ԱՊԽ և ԺԿԽ
նախագահին:

Թե վհրչափ Կ. Իլիչը հետաքրքրվում և անմիջա-
կանորեն միջամուխ եր լինում կինոյի խնդիրներում,
յերկում և նրանից, վոր Վոյեվոդինի դիմումները գար-
ձան դրդապատճառ Լենինի յերկու նամակի: Վոյեվոդինի
1921 թ. 15/9 նախագծին ի պատասխան (շարժական
կինո-ցանցի կազմակերպման և այդ ձեռնարկության
շահավետության և ոգտակարության հաշվառման մա-
սին, վորոնք սակայն մեծ վարկավորում ելին պահան-
ջում), Վ. Ի. 19/IX նամակով (ԺԿԽ № 12701), այսինքն
չ որից հետո, հարցապնդում և անում Վոյեվոդինի նա-
խագծի մասին լուսաբողումի տեղակալ ընկ. Լիտկենսին:

Վոյեգողինի նախագիծն ըստ եյության ներկայացնում եր՝ ազգաբնակության և հատկապես գյուղացիության համար՝ կինոյի ոգնությամբ մասսայական աշխատանքի կազմակերպումը։ Դա այն հարցերից մեկն եր, վոր հուզում եյին լավագույն Խորհրդային կինոաշխատողներին և չեյին կարող չզբաղեցնել կուսակցական-դեկավարի միավելու։ Կլարիֆիլը իլլիչին ևս զբաղեցնում եր այդ հարցը (մենք այդ տեսանք նրա գիտողություններից և ցուցմունքներից) և բնականաբար նա անհապաղ արձագանքեց Վոյեգողինի նամակին։

1921 թ. արդեն Նեպի նորամուտ զբջանն եր: Հիմ-
նարկությունները պետմատակարարութից տնտեսական
հաշվարկին ելին անցնում և գրա առնչությամբ տարվա
կիսին սուր կերպով ծառացել եր Վ.ՖԿՈ-յի — վորպես
լժեկ անտեսական ձեռնարկության — վիճակի հարցը:
Վ.ոչ մի տնտեսական հաշվարկային ներքին ռեփորտներ

Հոգնեցին և 1921 թվի վերջում արդեն մեկը մյուսի
յետելից առաջ են քաշվում, Կ.ՖԿՈ-յի վերակազմու-
թյան նախագծեր:

Նման յերկու նախագծերի առթիվ (ընկ. Լեժավայի
և ընկ. Վոյեվոդինի) Վաղիմիր Իլյիչը հանգում ե այն
մտքին, վոր անհրաժեշտ ե և ժամանակն ե Ռուսա-
ստանի կինո-գործի կազմակերպման հարցը դնել իր
ամբողջ ծավալով, Վ. Ի. Լենինի խորաթափանց պե-
տական միտքը պարզ տեսնում եր, վոր նոր տնտե-
սական քաղաքականության շրջանում կինո-գործի
կազմակերպման առողջ սկզբունքներից են կախած
թե՝ իրեն՝ կինո-գործի հաջողությունը և թե կինոյի
հակայական նշանակությունը՝ պրոլետարական պետու-
թյան համար:

1921 թ. դեկտեմբերի 16-ին (№ 1201/g 12) նա
գրում են

«Ընկ. Լիտկենսին:

Պատճեները՝ ընկ. Բոգդանովին և ընկ. Լեժավային:
Ընկ. Վոյեվոդինի և ընկ. Լեժավայի առաջադը-
րած նախագծերի առնչությամբ հանձնարարում եմ
ձեզ կազմել հանձնաժողով, ձեր նախագահությամբ,
կազմը՝ ընկ. Բոգդանով, փոխարինելու իրավունքով,
ընկ. Լեժավա, փոխարինելու իրավունքով և ընկ. Վո-
յեվոդին՝ Ռուսաստանի կինո-գործի կազմակերպ-
ման հարցի քննության համար:

Նախագահ Վ. Ռույանով (Լենին)

Այդ մոմենտից սկսվում է ԽՍՀՄ կինո-գործի յեր-
կարատե վերակազմակերպչական շրջանը, վորը փաս-
տորեն հասնում ե մինչև մեր որերը...

...Վաղիմիր Իլյիչը վոչ միայն արժեքավոր ցուց-
մունքներ եր տալիս կինո-աշխատանքի ընդհանուր

բովանդակության և նրա անելիքների մասին, վոչ
միայն ցավում եր և հուզվում 1922 թ. վերջերում
կինո-գործի տեական անկարգ վիճակի առթիվ, այլ և
անմիջապես, առանձին գեղքերում հետաձուած եր լի-
նում այդ աշխատանքի գործնական խնդիրներին:

Եսպես, 1920 թվին, ընկ. Գոյխարդի Ոմսկից գա-
լուց անմիջապես հետո, վորտեղ նա հանգես եր յեկել
կոչակյան մինհստրների դատավարությանը, վորպես
մեղադրող, Վաղիմիր Իլյիչը, զեկուցման միջոցին ծա-
նոթանալով ընկ. Գոյխարդի բերած նյութերին (դա-
տավարության լուսանկարներին և փաստաթղթերին),
1920 թ. հունիսի 12-ին հետեւյալ նամակն ե գրում
այն ժամանակավա համառուսական ֆոտո-կինոռաժնի
նախագահ ընկ. Լեշէնկոյին:

«Ինկատի ունենալով, վոր ընկ. Գոյխարդի բերած
լուսանկարները և փաստաթղթերը կոչակի մինհստր-
ների դատավարության վերաբերմաբ չափազանց կա-
րենոր են և հրատապ, առաջարկում եմ.

այդ լուսանկարներից և դոկումենտներից անհա-
պաղ պատրաստել նկարահանումներ, ընկ. Գոյխարդի
համառուսատերություններով՝ կինեմատոգրաֆների
համար մի շաբաթ նկարներ պատրաստել՝ ամենալայն
տարածման համար:

Կատարման մասին տեղեկացնել ինձ շաբաթական
2 անգամ:

Ժեթ Նախ. Վ. Ռույանով (Լենին)

Համառուսական ֆոտո-կինո-բաժինը համարյա վո-
չինչ չեր արել Վաղիմիր Իլյիչի այս առաջարկի ծրա-
գրով...

«Լենինը և կինոն» Գ. Բոլտյանսկու.

* * *

Հայտնի յի, վոր Վլադիմիր Իլյիչը հսկայական նշանակություն եր տալիս կինեմատոպրաֆիային: Այդ մասին հիշատակեց նաև ընկ. Լունաչարսկին՝ մեր վերջին համագումարում:

Կարող եմ ավելացնել վոր գեռ 5 տարի սրանից առաջ (1921 թ.) Վլադիմիր Իլյիչը Լ. Բ. Կրասինին առաջարկել եր մացնել տողերիս գրողին՝ վորպես կինոյի ներկայացուցչի, Անդրիայի առաջին խորհրդային պատգամավորության կազմի մեջ: Յեվ այսպիսով կինեմատոպրաֆիան ներկայացված կլիներ Լոնդոնյան առաջին պատվիրակության մեջ իշարու մեր արդյունաբերության յերկու-յերեք ամենաշահագրգուված և կարևոր ճյուղերի (մեքենաշինարարություն, անտառային գործ, վուշի մշակություն): Բայց — ճակատագրական բայց — գրեթե մեկնելու նախորյակին հանկարծակի ամեն բան խանգարվեց: Մեծ բրիտանական կառավարության հետ համաձայնեցնելիս ցուցակը համարյա կիսով չափ կրճատվեց և կինոն մնաց կրճատված կիսում:

Պետք են կատել, վոր Վլադիմիր Իլյիչը հատկապես հետաքրքրվում եր ոռւսական արտադրության ֆիլմերով և հատուկ ուշագրություն եր հայտնաբերում դեպի տեխնիկական բովանդակություն ունեցող նկարները:

«Կինոն» վորպես տեխնիկային սպասարկող — խոշնրան են — ասաց Վլադիմիր Իլյիչը «Գիդրոտորֆի» առթիվ: *

«Մի քանի տող նըա մասին» Բ. Կոցինի.

* Գ. Բոլոյաննկու «Էլենինը և կինոն» գրքում առաջ են բերված մի շարք նյութեր, կապված տորֆի հանման զանազան ձևերի նկարահանման պատմության հետ: Այդ նկարներից մեկը՝ վոր ցուցադրվել եր Սովորկոմի 1920 թ. նույտ. 27-ի նիստում՝

«Կինեմատոպրաֆն ի սպաս աշխատավորության» — այսպիսի վերատառությամբ՝ «Պետրովագուկայա Պլավդա» թերթի 1920 թ. սեպտեմբերի 8-ի № 199-ում տպագրված եր հետեւյալ տեղեկությունը:

«Մի քանի ամիս առաջ ժողկոմիսորնի նախագահ վ. ի. կենինը փոտո-կինո-բաժնի վարիչ Դ. ի. ի. կեշեն-կոյի հետ ունեցած զրոյցի մեջ, ի միջի այլոց նկատել եր, վոր շատ նպատակահարմար կլիներ կինեմատոպրաֆիական ֆիլմերի միջոցով ծանոթացնել լայն մասսաներին Արևմտաքի և Ամերիկայի յերկրագործության և փարբիկաների ու գործարանների բանվորական կյանքին, ցուցադրել հողի մշակումը ժամանակակից տեխնիկական կատարելագործությունների ոգությամբ, այլ և բանվորական մասսայի առաջ լայնութեան ցուցադրել Յեվրոպայի և Ամերիկայի խոշոր գործարանների և փարբիկաների ինտենսիվ գիտակալինայի յենթարկված աշխատանքը:

Լենինի այդ ցանկությունը հայտնի դարձավ արտասահմանում: Արդյունաբերողների, այսպես կոչված «Ռուս-Ասիական» խումբը, համաձայնության մեջ մըտնելով ֆիլմերի խոշոր գործարանների հետ, նրանց ոգնությամբ ձեռք բերեց Յեվրոպայի և Ամերիկայի խոշոր գործարանների նկարահանման մենաշնորհի իրավունքը, այլ և կանագայի խոշորագույն պլանտացիաների նկարահանման իրավունքը: Ֆիլմերի մեջ տպագրվում են հատիկի ցանքի, բերքահավաքի, կալսելու, բերքի բարձելու, թափելու և ելեվատորներու լցնելու աշխատանքները:

Ավարտված են կրուպիի, Վուլկան, Սիմենս-Շուկ-կերտ և այլ գործարանների նկարահանումները:

* * *

Քաղաքական, հասարակական կամ պետական կարևոր տեղեկությունները լայն մասսաներին հասցնելու մշտական ձգտումը, ամենալայն մասսաները լուսավորելու, նրանց վորքան կարելի յե ավելի շատ գիտելիքներ տալու մշտական ցանկությունը վկազիմիր իւրիչի կողմից պարզում ե մեզ համար, թե ինչու Վ. Ի. Ս. յիշը մեր Միության ամենածանր տարիներին, յերբ կարծես, վոչ հաց եր ճարվում, վոչ շոր, վոչ վառելիք, շարունակ պնդում եր թատրոնների գոյության անհրաժեշտությունը և պահանջում, վոր թատրոնները գոյություն ունենան, վորպեսզի նրանք հնար յեղածին չափ շատ ոգտակար սնունդ տան բանվոր, գյուղացի և կարմիր բանակային մասսաներին։ Դրանով իսկ կարելի յե բացատրել այն ուշադրությունը, վոր Վ. Ի. Նվիրում եր և կինեմատոգրաֆին։

Հեղափոխությունից դեռ շատ առաջ, արտասահմանում յեղած ժամանակ Վ. Ի. ստեղ հաճախում եր կինո՛ թես մտաբերում եմ նրա խոսակցությունը Ա. Ս. Բոգ-

գնուական նշանակություն ունեցավ ինժեներ Կլասսոնի նոր, հիդրովիկ յեղանակի ոգտին։ Նիստի արդյունքները հանրագումարի բերելով Վ. Ի. հատուկ նամակում (1920 թ. հոկտեմբերի 28-ին) մատնաշումներ Կլասսոնի ցուտի շուտափույթ իրացման մի շարք միջոցներ։ Նամակի նախավերջին (7) կետը անմիջապես վերաբերվում ե՝ «արտադրական պրոպագանդային» նպատակով, կինոյի ոգտագործման առաջադրանքներին։ (7) հանձնարարել կինո՛բաժնին (Նժկոմի) ամենալայն կերպով դնել (հատկապես պետրովադում, իվանովո-Վոլոնտենսկում, Մուլվայում և տորֆահանման վայրերում) այդ ձեր վերաբերյալ կինեմատոգրաֆիական պատկեր, այնպես վոր այդ միջոցին կորդացվի հանրամատչելի գիդրովկա (ինդեռ լընկ, Սամնովսկուն՝ Խմբագրել), բացատրելով ուրիշահանման մեխանիզմիայի և երեսրիթիկացիայի հակայան նշանակությունը։

Ս. Դ.

դանովի հետ կուռկալոյում, յերբ նա ապրում եր Ֆինլանդիայում, Բոգդանովի հետ մի ամառանոցում։ Ա. Ս. Բոգդանովը շատ եր տարվում կինոյով և հսկայական նշանակություն եր տալիս նրան՝ մասսաների լուսավորության համար տարվող կուլտուրական աշխատանքում։ Յեվ ահա, մի անգամ, Պետերբուրգից վերադառնալով, չեմ հիշում, ինչ առթիվ, Ա. Ս. Բոգդանովը հրապուրիչ կերպով սկսեց պատմել, թե ինչ հսկայական նշանակություն ունի արդեն այժմ և առավել ևս պիտի ունենա, կինոն գիտական-լուսավորական իդեաների պլուագանդայի ասպարիկում, մասսաների այլ և այլ նախապահարումների գեմ կովելու, նրանց կըրթելու և գաստիարակելու համար։

Վ. Ի. Ս. յիշն ուշագիր լսում եր խոսակցությունը, արագ միացավ նրան և սկսեց անցկացնել այն միտքը, թե քանի գեռ կինոն գոնվում ե գռեհիկ սպեկուլյանտների ձեռքում, ավելի շատ չարիք ե պատճառում, քան ոգուտ, հաճախ անբարոյականացներով մասսան՝ պիտիսաների զզվելի բովանդակությամբ։ Յեվ վոր, ի հարկե, յերբ մասսաները կտիրեն կինոյին և յերբ նա կզանվի սոցիալիստական կուլտուրայի իսկական գործիչների ձեռքում, այն ժամանակ ահա նա կինոդիսանա մասսաների լուսավորության հզորագույն միջոցներից մեկը։

Այս խոսակցությունը տեղի ուներ 1907 թվին, յերբ Ռուսաստանի հեղափոխությունը նվազում եր և բոլոր մեր լավագույն ցանկությունները մնում եյին ապարայուն։ Բայց ահա, յերբ վորոտաց նոր հեղափոխությունը և Վ. Ի. Ս. յիշը փետրվարից հետո արգեն Ռուսաստանում եր, հաճախ, Հոկտեմբերից առաջ ել, իր զրույցներում վերադառնում եր այդ թեմային։

Յես մտաբերում եմ նրա զրույցնը Ֆինլանդիայում, յերբ նա հանգստանում եր ինձ մոտ, ամառանո-

ցում: Հարց բարձրացավ գյուղատնտեսության մասին և Վ. Ի. սկսեց մանրամասն պատմել, թե ինքն արտասահմանում հրաշալի ֆիլմեր և տեսել, վորտեղ նկարված ե Արևմտյան Յելլովայի և մանավանդ Ամերիկայի այլ և այլ տեղերի կյանքը, վորտեղ խոշոր ֆիրմաները, վորոնք արտադրում են գյուղատնտեսական գործիքներ, գյուղատնտեսական գործիքները ռեկլամի յենթարկելու և շահագիտական նպատակով խոշոր միջոցներ չեն խնայում կազմակերպելու և ցուցադրելու համար գյուղատնտեսական արտադրությունը՝ ուժեղ արակտորներով լավագույն յերկրագործական մեքենաներով՝ Հյուսիսային Ամերիկայի և Կանադայի գյուղատնտեսական լատիֆունդիաներում: Վ. Ի. պատմեց նույնպես, թե ինքը տեսել է հաշալի դրված ֆիլմեր բնագիտության մասին, որինակ՝ նկարներ, վորոնք խնամքով ծանոթացնում են վայրի գաղանների և թռչունների բնական լյանքի հետ և վերարտադրում են այն բոլոր բնական հարուստ գույները, վորոնցով առատ են վայրի բնության տեսարանները: Այդպիսի ֆիլմերը, ըստ Վ. Ի. լինչի դիտողության, մեծ տպավորություն ելին թողնում հանդիսատեսների վրա: Այս բոլոր ֆիլմերը՝ դասախոսությունների հետ՝ վերին աստիճանի ոդտավետ և ուշագրավ կարող ելին լինել թերապատրաստ ընթերցողի և նրա զարգացման համար:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յետ հաճախ առիթ եմ ունեցել ներկա լինելու Վ. Ի. կինոյի մասին ունեցած խոսակցություններին: Յեկ նա միշտ արտահայտվում եր այն մասին, վոր մեր կինեմատոպրաֆներն իսպառ պետք և ռեպերտուարից վարեն այն գոենկությունը, վոր առատորեն սկսել եր անցնել մեզ մոտ արտասահմանից, վորտեղ գերակռում են մեշշանական ճաշակները, վորտեղ ամեն մի սան-

միմենտալ գարշանք հանգստացնում ե հանդիսականին և հեռու յե պահում յերկրի հրատապ, քաղաքական կյանքից:

— Միթե մենք անկարող ենք նկարագրել մեր ներկայի հեղափոխական պայքարը և ուրիշ այլ պատմական մոմենտներ, կամ կրօնի դեմ պայքարելու համար մշակել բազմատեսակ սյուժեներ, վորտեղ հարկավոր չե վոչ մի ծաղր, այլ հարկավոր և միայն ճիշտ, բնագիտական մոտեցում:

Վ. Ի. միշտ հարցնում եր. — Նկարահանվելում են արդյոք կինուհնտեր, զանազան սրբերի աճյունները բացելիս:

— Ցույց տալ այն, ինչով լցված ելին տերուերների կողմից այդ խրավիլակները, ցույց տալ թե այդ շքեղ տապաններում ինչ և հանգչում, ինչ տեսակ «սրբություններ» են յեղել վորոնց այդքան դարել ակնածությամբ և վերաբերվել ժողովուրդը, և վորի համար այսպես վարպետորեն խուզում ելին ռամիկ ժողովրդի բուրդը տաճարի բեմի սպասավորները — դա միայն բավական ե, կրօնից հարյուր հազարավոր մարդկանց յետ վանելու համար, — հաճախ ասում եր Վ. Ի. լինչը:

Վ. Ի. պահանջում եր տալ իրեն այդ լուսանկարները և նա նրանցից շատ գոհ եր մնում: Յես անձամբ ցույց տվի նրան կինոլենտի նկարները, վորոնք հանգած ելին Տրոյիցլո-Սերգեյևսկի տաճարի աճյունների բացման ժամանակ:

«Ենինը և կինոն» Վ. Ի. Բոնչ-Բույելչի:

Հիշում եմ, հինգ տարի առաջ եր այդ Յես Կ. լադիմիր Իլյիչի տանն եյի և այնտեղ մենք խոսում ենք այն ժամին, թե ինչով փոխարինել կը ո՞նք: Կ. լադիմիր Իլյիչը մտածում եր, վոր թերեւս բացի թատրոնից չկա վոչ մի հիմնարկ, վոչ մի որգան, վորով մենք կարողանայինք փոխարինել կը ո՞նք: Չե վոր բավական չե փոչնչացնել կը ո՞նք և այդպիսով իսպառ ազատագրել մարդկությունը կը ո՞նամոլության սոսկալի կապանքներից, հարկավոր և այդ կը ո՞նք մի վորեիցն բանով փոխարինել և ընկ. Լենինը ասում եր, վոր կը ո՞նք տեղը պետք ե բռնի թատրոնը: Սյստեղից յերեւմ և թե ինչ հակայական նշանակություն եր տալիս թատրոնին Վ. լադիմիր Իլյիչը:

Մ. Ի. Կալինին՝ գեղարվեստի աշխատավորների համարութենական 5-րդ համագումարում արտասանած հառից (1925 թ. մայիսի 25-ին):

* * *

Վ. լադիմիր Իլյիչը շատ նյարդային վերաբերմունք եր ցույց տալիս դեպի Մեծ Թատրոնը: Յես մի քանի անգամ առիթ եյի ունեցել մատնանշելու նրան, վոր Մեծ Թատրոնը համեմատաբար եժան և նստում մեզ, սակայն և այնպես, նրա պնդումով, թատրոնին տրվող նպաստը կրծատվել եր: Վ. լադիմիր Իլյիչը գեկավար- վում եր յերկու նկատառումով: Նրանցից մեկը նա

իսկույն մատնանշեց: «Անհարմար ե, — ասում եր նա, — մեծ գումարներով պահել այդպիսի մի շքեղ թատրոն, յերբ մենք միջոցներ չունենք գյուղերում ամենահասարակ դպրոցներ պահելու համար»: * Մի այլ նկատառում ել առաջ եր բերված, յերբ յես նիստերից մեկում առարկում եյի նրա հարձակումներին Մեծ Թատրոնի դեմ: Յես մատնանշում եյի նրա անկասկած կուլտուրական նշանակությունը: Այն ժամանակ Վ. լադիմիր Իլյիչը խորամանկությամբ աչքերը կկոցեց և ասեց: «Բայց և այնպես դա զուտ պամեջիկյան կուլտուրայի մի կտոր և և դրա դեմ վոչ վոք չի կարող փիճել»:

Մրանից չի հետեւում, վոր Վ. լադիմիր Իլյիչը առհասարակ թշնամի յեր անցյալի կուլտուրային: Նրան սպեցիֆիկ պամեջիկական եր թվում ոպերայի ամրող պալատական-հանդիսավոր տոնը: Իսկ ընդհանրապես անցյալի արվեստը, մանավանդ ոռւսական ռեալիզմը

* Համեմատել Վ. Ի. ընկ. Սլավինսկու առաջարկի առթիվ արված ռեպիլիային Գլխարվեստի կաղմակերպման մասին (ԺԿԽորհի հանձնաժողովում, 1921 թ.) — «Դուք ուզում եք արվեստների կոմիսարիանու Բայց դա վաղաժամ ե, նախ պետք և վորոշի դպրոցների վերականգնման հարցը» (Բ. Կոցին, «Մի քանի տող նրա մասին»): Վ. Իլյիչի նույնականությունը արտահայտությունը առաջ ե բերում Ա. Վարոնսկին, հաղորդելով Վ. Ի. զրույցը Գորկու հետ, վորը Գրժեբինի հետ միասին Բելլինում Խորհրդային Կառավարության աջակցությամբ մի շարք գրքեր եր հրատարակում: Վ. Ի. Թուուցիկ կերպով դիմուեց ուղարկված գրքերը, հավանական թյուն տվեց շոգեմեքենաների վերաբերյալ զրքին, հետո ձեռքն առավ հնալարյան հնդկական հեքիաթների ժողովածուն: Նա թերթեց գիրքը, անգամ հարցրեց Գորկուն: — «Իմ կարծիքով՝ ասաց նա, — սա վաղաժամ առիթ ե»: Գորկին պատասխանեց: «Արանք շատ լավ հեքիաթներ են, Վ. Ի. նկատեց: — «Արա վրա փող և ծախսվում: Գորկին առարկեց Վ. Իլյիչին: — «Չե վոր սա շատ եժան բան ե»: Այն պատասխանեց Վ. Ի. բայց սըան մենք վոսկե վայրուտայով ենք վճարել: Այս տարի մեզ մոտ սով ե լինելու» (Ա. Վարոնսկի «Անցյալից»):

(նրանց թվում նաև, որինակը, պերեդլիժնիկներին), Վլաղիմիր իլյիչը բարձր եր գնահատում։
«Ենինը և արվեստը» Ա. Վ. Լունաչարովու։

* * *

Սողալով մոտեցավ 1919 թվականի անիջալ ձմեռը։ Մոսկվայում ամենուրեք ասելուսեներ ելին լինում վառելանյութի ճգնաժամի, բծավոր տիֆի մասին... Անհանգստության սրտամաշ յերկյուղը պատռմ ե վոչ միայն քաղզենու հոգուն, այլ և թափանցում ե Կրեմլի սրահները։ Մեծ ժողկոմխորհի դահլիճում մուայլ արամագրություն և տիրում։ Ընդհանուր ընկճված լուր թյան մեջ Փոքր ժողկոմխորհի ներկայացուցիչ ընկ։ Գալի ինը զեկուցում ե Պետական թատրոնների ջերմացման վիճելի հարցի մասին, վորը Փոքր ժողկոմխորհում միաձայն համերաշխություն չեր գտել։ Հարցը ինքնըստինքյան շատ փոքր եր, սակայն նա հուզուեց զեկուցողին և նրա ձայնը դողալուն մոտ եր։ Նա չի խնայում կողտ ու խիստ խոսքեր՝ «բնորոշելով Մոսկվայի բեմական արվեստի կենտրոնները վորած այս բոպեյիս բանվորա-գյուղացիական հանրապետության համար անկարենը մի բան։ Ում եստեսիքական շահերն են մինչեւ որս ել սպասարկում մեր թատրոնները։ Համենայն զեպս վոչ աշխատավոր ժողովրդի։ Ումն են նրանք մատչելի։ Բուրժուազիային և սպեկուլյանուներին։ Ի՞նչպիսի բովանդակություն ունեն ժամանակակից պյեսները։ Դարձյալ նույն բուրժուազան ոպերաները՝ «Կարմեն», «Ծրագիտատա», «Յեգինի Ոնեգին» և այլ նման բաներ։ Զկա վոչինչ վոչ ժողովրդի համար, վոչ բանվորների համար, վոչ կարմիր բանակայինների համար։ Անելի լավ կիներ Մեծ թատրոնի բեմը ոգտագործված լիներ պրոպագանդայի նպատակներով։ Իսկ մինչ այդ (և այստեղ հաետորի ձայնը բար-

ձրանում ե մինչև մռայլ պաֆոսի) մոտենում ե և մեր դոներն ե թակում սարսափելի հյուրը... Բծավոր տիֆից մահանալը մեր կենցաղային յերկույթին ե դառնում։ Պատրմաստ ենք մենք արդյոք այդ սարսափելի հյուրին դիմավորելու համար։ Շատ բաղնիքներ ունենք, վորոնք տիֆի համաճարակի ժամանակ գլխավոր պրոֆիլակտիկ միջոցն են հանդիսանում։ Յեվ կունենանք արդյոք բավական վճռականություն, թույլ տալ թանկագին վառելիքը ձգելու մոսկովյան պետական թատրոնների անկուշտ վառարանների մեջ՝ աղամանդներով զարդարված բուրժուական տիրուեհների նյարդերը խտացնելու համար այն ժամանակ, յերբ այդ փայտով տաքացվող մի ավելորդ բաղնիք, գուցե հարյուրավոր բանվորներին փրկի մահից և հիվանդությունից... — Ե՞ն, թատրոնները փակելու յեն, մտածեցի և սիրոս ճնշվեց։ Բնկ։ Գալկինը լոեց։ Ա. Վ. Լունաչարուկին չկար դահլիճում (նա, անշուշտ ջերմորեն պաշտպան կիւնդներ իր խնամյալին) և պատասխանի խոսք և առնում թատրոնների ներկայացուցիչը, վորը վոչ վոքի չի շարժում իր անգույն, կազյոննի ճառով։ Թատրոնների ճակատագիրն ըստ յերկույթին վորոշված ե։

Վլաղիմր իլյիչը հարցը քիերկության ե դնում։ Յեվ միայն կարծես կողքանց, փոքրիկ նոտարենեյի ձևով, քիերկությունից առաջ մի քանի փրազներ ե նետում։ — Ինձ թվում ե միայն, — ասում ե նա, իր ծիծաղկու աչքերը փայլեցնելով, — վոր ընկ։ Գալկինը փոքրինչ միամիտ գաղափար ունի թատրոնների զերի և նշանակության մասին։ Թատրոնը հարկավոր ե վոչ այնքան պրոպագանդայի, վորքան աշխատողների հանգստի համար՝ առորյա աշխատանքից հետո։ * Յեվ մեղ համար

* Լենինյան խոսքերի ձևակերպումն ըստ յերկույթին լիովին ձիշտ չեւ թատրոնի առաջակերպիս համար հպտա-

դեռ վաղ և բուրժուական արվեստի ժառանգությունն արխիվ հանձնելը... Այսպես, ովք ե կողմանկից ընկ. Գալինի առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի:

Ենքնին հասկանալի յե, վոր Իլյիչը «իմիջի այլոց» խոսքերից հետո ընկ. Գալինին չհաջողվեց մեծամասնություն հավաքել: Թատրոնները ազատվել եյին: «Երջադարձում» Զ. Ն. Լեպեշնսկու

* *

Նման տեսակետից («Մոսկվայի գեղարվեստական թատրոնը հնության մեռած բեկորն ե, ուրիշ վոչինչ») մենք արմատապես տարածայնվում ենք: Կարող եմ ասեմ վոր այդ տեսակետի հետ համաձայն չեր նաև Վլադիմիր Իլյիչը: Յես շատ լավ հիշում եմ այն որն ու ժամը յերբ համոզվեցի, վոր ՄԽՍԴ-ը, վորպես մասնավոր ձեռնարկ, չի կարող իր գոյությունը պահպանել և վոր նա պետք ե դառնա պետական թատրոն: Անշոշտ, առանց հատուկ զեկուցման և Վլադիմիր Իլյիչի հատուկ հավանության, յես այդ անել չեյի կարող: Յես դիմեցի նրան մի հայտարարությամբ՝ ՄԽՍԴ-ին ոգոնելու անհրաժեշտության մասին, նրան պահպանելու, մտցնելու նրան համեմատարար ավելի հանգիստ այն հանգրվանը, վորպիսին այն ժամանակ Լուսժողկոմատին կից ակադեմիկ հիմնարկներն եյին: Յեկ Վլադիմիր Իլյիչը, թեպետ նրա համար չպետք ե զարմանալի լիներ այն, վոր յես խնդրում եյի նրա գիրեկութիւնը, պարզապես զարմացավ. «Եյլ կերպ ի՞նչպես կատարելու մասին յեղած խոսքերը վերաբերվում են այն «անցյալի արքետի ժառանգությանը», վոր այլ, պրոպագանդիստական ուղարքետի ժառանգությանը 1919 թ. պայմաններում դժվար եր ոգտագործել Վ. Ի. Շատրոնի դերի և հնարավորության սկզբունքային գնահատականը ան կ. Յեռակինի, Ա. Լուսաշալսկու, Մ. Կալինինի և այլոց հիշողությունների մեջ:

Մ. Դ.

ըստ և լինել: Յեթե կա մի թատրոն, վորն անցյալից մենք ինչպես ել լինի, պետք ե փրկենք և պահպանենք, դա իհարկե ՄԽՍԴ-ն եւ:

Մոսկվ. Գեղ. թատրոնի 30-ամյակին նվիրված նիստում Ա. Վ. Լուսաշալսկու արտասանած ճառից:

* *

Մի քանի խոսք հեղափոխական թատրոններին ոժանդակելու մասին:

Սկզբում, յերբ այդ թատրոններն սկսեցին յերևան գալ — կարծեմ 1918 թվին եր այդ, — յես առաջարկ մտցրի այդ տիպի թատրոններին նյութապես ոժանդակելու մասին: Վ. Ի. Լենինն այն ժամանակ ինձ ասեց. «Յես շատ լավ հասկանում եմ, վոր այդ թատրոնները հեղափոխական վոգով եքսպերիմենտներ են կատարելու և ոժանդակության արժանի յեն, սակայն մենք այս բոպեյիս դրա համար միջոցներ չունենք: Ուստի հարկավոր ե, վոր նրանց ոժանդակեն տեղական խորհուրդները, պրոֆմիությունները, ընդհանրապես մեր հասարակայնություննը: Յերբ նրանցից մի քանիսը կկոփիւն և իրենցից մի զգալի բան կներկայացնեն, այն ժամանակ կարելի յե նորոգել խոսակցությունը: *

Ա. Վ. Լուսաշալսկու ճառից՝ թատրոնների կուսախորհակցության ժամանակ, 1927 թ. մայիսին:

* «Թաստկաբային պայմանը և արքետը» զեկուցման մեջ (Մոսկվա 17/II 1929 թ.) Ա. Վ. Լուսաշալսկին ավելի մանրամասն կանգ եր առել Վ. Ի. Լենինի հետ ունեցած իր զրույցի վրա, առաջ բերելով Վ. Ի. Խոսկերը՝ «Թող սովի ժամանակի ընթացքում եքսպերիմենտները պարունակում են անուղղական գործություններ կատարելապես անհրաժեշտ և բոլոր շանքերը գործ դնել վորակովի մեր կուսախորհակցության հիմնական նեցուկները չընկնեն, վորովիետ այդ բանը մեզ պըուետաբիտը չի ների:» («Искусство», 1929 թ. № 1—2):

67

ՄՈՆՈԽՄԵՆՏԱԼ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ

Դեռ 1918 թվին Վլադիմիր Իլյիչը կանչեց ինձ և հայտնեց, թե պետք ե առաջ շարժել արվեստը վորպիս ագիտացիայի միջոց, ըստ վորում, նա առաջադրեց յերկու նախագիծ: Նախ, նրա կարծիքով պետք ե շենքերը, պատերը և նման տեղերը, վորտեղ սովորաբար աֆիշաներ են լինում, զարդարել մեծ հեղափոխական խորագրերով: Սրանից մի քանիսը նա իսկույն և յեթ առաջարկեց:

Յերկրորդ նախագիծը վերաբերվում եր մեծ հեղափոխականների հուշարձանների դնելուն՝ չափազանց լայն մասշտաբով, հուշարձաններ՝ գիտության շինված և ժամանակվոր, ինչպես Պետրոգրադում, նույնպես և Մոսկվայում: Յենթադրվում եր, վոր ամեն մի հուշարձան բացվելու յե տվյալ հեղափոխականին վերաբերող ճառով և վոր այդ հուշարձանների տակ լինելու յեն բացատրող և պարզաբանող գրություններ: Վլադիմիր Իլյիչն այդ անվանում եր «մոնումենտալ պարագանդա»:

«Լենինը և արվեստը» Ա. Վ. Լունաչարսկու:

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏ

...Մեր ծանր ժամանակներում որպա ինդիքն և ստեղծել մի բան, վոր ընդունակ լինի ընդդիմադրել «վերապահողական» մարդկանց և «թթու ինտելիգենտներին», վորոնք ուղակի կամ զարտուղի կերպով պաշտպանում են տիրողատիզմը: Որվա ինդիքն ե՝ մարքսիստական աշխարհայցքի և այս աշխարհայցքին համապատասխանող վերնաշենքերի հանքը փորել, թեկուզ ամենածանր պայմաններում, յերկաթը հանել, պողպատը ձուլել,
«վերապահումի հերոսներ»
Վ. Ի. Լենին (1910)

Ուրեմն, դեպի աշխատանք, ընկերներ, Մեր առաջ կա մի դժվարին և նոր, հըսկայական և վեհ խնդիր՝ կազմակերպել լայնածավալ, բազմակողմանի, բազմազան գրական գործե՝ սերտ և անխղելի կապված սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման հետ:

Վ. Ի. Լենին: «Կուսակցական կազմակերպությունը և կուսակցական, գրականությունը» (1905 թ.)

Ե Ե Ն Ի Ն Ը ՈՒ Տ Ա Լ Ս Ո Յ Ը

Վ. Ի. Լենին

ԵԵՎ ՏԱԼՍՈՅԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԵԼԻՆ

(1908 թ.)

Մեծ արվեստագետի անվան համադումը հեղափոխության հետ, վորը նա պարզապես չհասկացավ, վորից նա պարզապես յետ կացավ, առաջին հայացքից կարող ե տարորինակ և արհեստական թվալ։ Հո չի կարելի հայելի անվանել այն, ինչը վոր, ակնհայտորեն, յերեսոյթը ձիւտ չի արտացոլում։ Սակայն մեր հեղափոխությանը չափագանց բարդ յերեսոյթ ե. նրա անմիջական կատարողների և մասնակիցների բազմության մեջ կան սոցիալական շատ տարրեր, վոր նույնպես բացահայտ չելին հասկանում կատարվածը, նույնպես հեռու ելին կենում պատճական իսկական ինդիրներից, վորոնք դրված ելին մեր առաջ անցքերի ընթացքով։ Յեվ յեթե մեր առջև իսկական մեծ գեղարվեստագետ ե, ապա հեղափոխության գոնես մի քանի եյական կողմերը նա պետք ե արտացոլեր իր յերկերի մեջ։

Ռուսական լեզու մամուլը, վոր լցված եր Տալսոյի 80-ամյա հոբելյանի առթիվ գրված հոդվածներով, նամակներով և դիտողությաններով, ամենից քիչ ե հետաքրքրվում նրա յերկերի վերլուծությամբ—ռուսական հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի տեսակետից։ Այդ ամբողջ մամուլը սիրտ խառնելու չափ լի յե կեղծավորությամբ, յերկու տեսակ կեղծավորությամբ՝ կազյոննի և լիրերալ։ Առաջինը այն ծախված

գրչակների կոպիտ կեղծավորությունն ե, վորոնց յերեկ հրամայված եր հալածել և. Տալստոյին, իսկ այսոր փնտրտել նրա մեջ հայրենասմիբություն և աշխատել քաղաքավարություն պահպանել Յեղոպայի առաջ: Վոր նման գրչակներին վճարված և այդպես գրելու համար, այդ բոլորին հայտնի յե և նրանք վոչ վոքի խարել չեն կարող, Ավելի շատ նրբացրած ե, ուստի և, ավելի մասակար ու վտանգավոր ե լեբերալ կեղծավորությունը: Յեթե լսեք „Քեզ“-ի* կաղետական բալալայկիներին՝ նրանց համակրանքը դեպի Տալստոյը ամենաջերմն և ամենակատարյալը: Իրոք — «մեծ աստվածաբնորի» մասին նախատեսված ճարտասանությունը և փքված ֆրազները բացարձակ կեղծիք են, վորովհետև ուսու լիբերալը վոչ տալստոյական աստծուն և հավատում, վոչ գոյություն ունեցող կարգի տալստոյական քննադատության և համակրում: Նա քսմավում ե ժողովրդականացած անվանը, վորպեսզի բազմապատկի իր քաղաքական կապիտալը, վորպեսզի խաղա համազգային ոպպողիցի առաջնորդի գերը: Նա աշխատում է ֆրազների վորոտով ու ճարճատյունով խլացնել այն հարցի պարզ ու շիտակ պատասխանելու պահանջը, թե ինչից են առաջ գալիս «տալստոյականության» աղաղակող հակասությունները, մեր հեղափոխության թնչ թերություններն ու թուլություններն են նրանք արտահայտում:

Տալստոյի դպրոցում, նրա յերկերի, հայացքների, ուսմունքների մեջ հակասություններն իսկապես աղաղակող են: Մի կողմից՝ մի հանճարեղ գեղարվեստագետ, վոր վոչ միայն ուսու կյանքի անզուգական պատկեր-

* „Քեզ“-ը կոնստիտուցիոն-դեմոկրատական կուսակցության («Կադետներ») պաշտոնական որդանն եր, վոր արտահայտում եր բոլոր արդյունաբերական բուրժուազիայի և «լիբերալ» կալվածատերերի շահերը:

ներ, այլ և համաշխարհային գրականության առաջնակարգ յերկեր և տվել, մյուս կողմից՝ կալվածատեր, Քըլիստոսի խենթակրոն: Մի կողմից, նշանակալից կերպով ուժեղ, անմիջական և անկեղծ բողոք՝ ընդդեմ հասարակական ստի և կեղծիքի, մյուս կողմից՝ Շտալտոյական», այսինքն մի մաշված, հստերիկ ճղճիմություն, վոր կոչվում և ուսու ինտելիգենտա, վոր հրապարակորեն իր կուրծքը ծեծելով ասում ե՝ «յս զգվելի յեմ, յս գարշելի յեմ, բայց յս զբաղվում եմ բարոյական ինքնակատարելագործությամբ. յես այլևս միս չեմ ուտում և այժմ բրնձե կատլետիկներով եմ սնվում»: Մի կողմից՝ կապիտալիստական շահագործության անողոք քննադատություն, կառավարական բռնությունների, դատավարական կատակերգության և պետական կառավարման մերկացումը, — բացումը, իր ամբողջ խորությամբ այն հակասությունների, վոր կան հարստության աճման և քաղաքակրթության նվաճումների ու բանվորական մասսաների աղքատության աճման, վայրենացման և տանջանքների միջև, մյուս կողմից՝ բռնությամբ «չարին չհակառակելու» խենթակրոն քարոզը: Մի կողմից՝ ամենաժուժկալ ունալիզմ, ամեն և ամենատեսակի գիմակների պատում, մյուս կողմից՝ այն ամենազազրելի բաներից մեկի քարոզը, վորպիսիք կարող են լինել աշխարհի յերեսին, այն ե՝ կրոնը, կազյոննի տերտերների տեղը բարոյապես համոզված տերտերներ դնելու ձգտումը, այսինքն՝ ամենանըրացած, ուստի և, հատկապես գարշելի տերտերականության մշակումը: Հիրավի վոր՝

Դու և խղճուկ, դու և առաս,

Դու և հզոր, դու և անույժ

Մայր Ռուսաստան:

Վոր նման հակասություններում Տալստոյը չեր կարող բացարձակորեն ըմբռնել վոչ բանվորական շար-

ժումը և այդ շարժման դերը հանուն սոցիալիզմի մղած պայքարում, և վոչ ել ոռւսական հեղափոխությունը, դա ինքնին ակներս եւ Սակայն հակասությունները Տալստոյի հայացքների և ուսմունքների մեջ պատահականություն չեն, այլ այն հակասական պայմանների արտահայտությունն են, վորոնց մեջ դրված եր ոռւսական կյանքը XIX դարի վերջին յերրորդականում: Յերեկ միայն ճորտատիրուկան իրավունքի տակից գուրս յեկած նահապետական գյուղը բառացի կերպով յատնվել եր կապիտալի և պետական գանձարանի հեղեղատին և ալան-թալանին: Գյուղացիական տնտեսության և զյուղացիական կյանքի հիմքերը, հիմքեր, վորոնք դարերի ընթացքում պահպանվում եյին, անսովոր արագությամբ փլվեցին: Յեկ հակասություններ Տալստոյի հայացքներում պիտք ե գնահատել վոչ թե ժամանակակից բանվորական շարժման և ժամանակակից սոցիալիզմի տեսակետից (նման գնահատություն անշուշտ անհրաժեշտ ե, սակայն նա բավական չե), այլ սպանալիորեն առաջացող կապիտալիզմի, մասսաների քայլայման և հողազրկման դեմ բարձրացող այն բոլորի տեսակետից, վոր պիտք ե ծներ նահապետական ոռւսական գյուղը: Տալստոյը ծիծաղելի յե վորպես մի մարդարե, վոր մարդկության ազատագրության նոր գեղատոմսեր և գտել, և դրա համար ել բոլորովին վողորմելի յեն արտասահմանյան և ոռւսական Շտալստոյականները, վորոնք ցանկացել են նրա ուսմունքի հենց ամենաթույլ կողմը դավանանք դարձնել: Տալստոյը մեծ և վորպես արտահայտիչ այն գաղափարների և այն տրամադրությունների, վորոնք կուտակվել եյին միլիոնավոր ոռւսական գյուղացիության մեջ Ռուսաստանում բուրժուական հեղափոխության թևակոխման միջոցին: Տալստոյը որիդինալ ե,

վորովհետեւ նրա հայացքների գումարը, վոր մասսակար և վորպես ամբողջություն, արտահայտում ե հենց մեր իսկ հեղափոխության, վորպես գյուղացիական բուրժուական հեղափոխության առանձնահատկությունները: Հակասությունները Տալստոյի հայացքների մեջ, այդ տեսակետից, իսկապես հայելին են այն հակասական պայմանների, վորոնց մեջ դրված եր գյուղացիության պատմական գործունեյությունը մեր հեղափոխության ընթացքում: Մի կողմից ճորտատիրական ձնշման դարերը և հետուեֆորմյան սրարշավ ավելիման տասնամյակները կուտակել եյին ատելության, չարության և կատաղի վճռականության սարեր: Թե պաշտոնական յեկեղեցին և թե կալվածատերերին ու կալվածատիրական կառավարությունը հիմքից ջնջելու, հողատիրության բոլոր հին ձեւերն ու կարգերը վոչնչացնելու, հողը մաքրելու ձգտումը, վուտիկանական-գասակարգային պետության փոխարեն ազատ և իրավաճակասարմանը գյուղացիների հանրային կյանքը ստեղծելու այդ ձգտումը կարմիր թելի պես անց ե կենում մեր հեղափոխության մեջ՝ գյուղացիների յուրաքանչյուր պատմական քայլափոխում և անկասկած՝ Տալստոյի գրվածքների գաղափարական բովանդակությունը ավելի շատ համապատասխանում ե գյուղացիական այս ձգտմանը, քան վերացական «քրիստոնեյական անարիխիզմին», ինչպես յերբեմն գնահատում են նրա հայացքների «սիստեմը»:

Մյուս կողմից՝ գյուղացիությունը, ձգտելով հանրակեցության նոր ձեւերին, շատ անգիտակից, նահապետական, «ղուլական» վերաբերմունք եր ցույց տալիս այն բանին, թե ինչպիսին պետք ե լինի այդ հանրակեցությունը, ինչպիսի պայքարով պետք ե նվաճել սեփական աղատությունը, թե վորպիսի դեկավարները

կարող են լինել նըս հետ այդ պայքարում, ի՞նչպես են վերաբերվում գյուղացիական հեղափոխության շահերին և բուրժուազիան, և բուրժուական ինտելիգենցիան, ինչու յե անհրաժեշտ ցարական իշխանության բռնի տապալումը՝ կալվածատիրական հողատիրությունը վոչնչացնելու համար: Գյուղացիության ամբողջ անցյալ կյանքը սովորեցրել ե նրան՝ ատել բարինին և չինով ֆիկին, սակայն չի սովորեցրել և չեր կարող սովորեցնել, թե վորտեղ պետք ե փնտրել այս բոլոր հարցերի պատասխանը: Մեր հեղափոխության մեջ գյուղացիության փոքր մասը իսկապես կովել ե, գեթ մի քիչ կազմակերպվելով այդ նպատակի համար և բոլորովին փոքր մասն և զենքը ձեռքին գլուխ բարձրացրել՝ իր թշնամիներին ջնջելու, ցարական ծառաներին և կալվածատիրական պաշտպաններին վոչնչացնելու համար: Գյուղացիության մեծ մասը լաց և յեղել և աղոթել ե, դատողություններ արել, յերազել, խնդիրներ ե գրել և «Ընդդրաբկուներ» (խօսական միանգամայն կան և նիկոլայիչ Տալստոյի վոգով: Յեվ ինչպես միշտ լինում ե նման դեպքերում, տալստոյական ձեռնպահությունը քաղաքականությունից, տալստոյական հրաժարիմքը՝ քաղաքականությունից, դեպի քաղաքականությունը յեղած հետաքրքրության ըմբռնման բացակայությունը անում եյին այն, վոր գիտակից և հեխափոխական պրոլետարիատի յետեկից գնում եր փոքրամասնությունը, իսկ մեծամասնությունը ավարեր դարձել անսկզբունք, պնակալեզ, բուրժուական ինտելիգենտների, վորոնք կագետների անվամբ վագում եյին արուդավիկների ժողովներին, Ստալինի*.

* Ստալինին, Պ. Ա. — Ներքին գործերի մինիստր, իսկ հետաքյում մինիստրների խորհրդի նախագահ (1906-1911 թ.) «պատմէչը քաղաքականության» բնորոշ արտահայտիչը. գյուղացիական

նախասենյակը, մուրում եյին, սակարեկում եյին, հաշտեցնում եյին, խոստանում եյին հաշտեցնել, — մինչև վոր զինվորական կողիկի աքացիի հարվածով նրանց վոնդեցին: Տալստոյական իդեաները, դա մեր գյուղացիական ապստամբության թուլության, թերությունների հայելին ե, նահապետական գյուղի թուլամորթության և «անտեսասեր մուժիկի» կոշտացած յերկչոտության արտացոլումն ե:

Վերցրեք 1905—1906 թվականների զինվորական ապստամբությունները: Մեր հեղափոխության այդ մարտիկների սոցիալական կազմը միջանկյալ ե գյուղացիության և պրոլետարիատի միջև: Վերջինս փոքրամասնություն ե կազմում. այդ իսկ պատճառով զորքերի մեջ շարժումը չի ցույց տալիս, մինչեւ իսկ մոտավորապես, այնպիսի հումառուսաստանյան միաձուլություն, այնպիսի կուսակցական գիտակցականություն, վորպիսին հանդես ե բերել պրոլետարիատը, կարծես ձեռքի մեկ շարժումով գառնալով սոցիալ-դեմոկրատական: Մյուս կողմից, չկա ավելի սխալ կարծիք, քան այն, թե իր զինվորական ապստամբությունների անհաջողության պատճառը զեկավարության բացակայությունն եր՝ սպայության միջից: Ընդհակառակը, սկսած Նարոդնայա Վոլյայի ժամանակներից, հեղափոխության հսկայական պրոդերսն արտահայտվում ե հենց նրանով, վոր պետերի գեմ զենք ե վերցրել «մոխրագույն անասունը», վորի ինքնուրույնությունն այնպես վախեցրեց լիբերալ կալվածատիրերին և լիբերալ սպայությանը: Զինվորը լի յեր համակրությամբ զեպի գյուղացիական գործը. նրա աչքերը բոցավառվում եյին՝ հողի մասին հենց միայն հիշատակելիս: Մի անգամ չի, հարցում պաշտպանում եր կուլակին վորպես միապետության հենագանի:

վոր զորքերի մեջ իշխանությունն անցել և զինվորների մասսայի ձեռքը — սակայն այդ իշխանության վճռական ոգտագործում համարյա թե չի յեղել. զինվորները տատանվում եյին. մի յերկու որից, մի յերկու ժամից հետո, սպանելով վորոն ատելի պետի, նրանք կալանքից աղատում եյին մնացյալներին, բանակցության եյին մոնում իշխանության հետ, և ապա՝ կանգնում եյին գնդակահարվելու, պարկում եյին մտրակների հարվածների տակ, կրկին լծվում եյին լուծի. մեջ — ճիշտ կե նիկոլայեկի Տոլստոյի վոգով!

Տալստոյը արտացոլել ե ցավատանջ ատելությունը, հասունացած ձգութը դեպի լավը, անցյալից փըրկվելու ցանկությունը, — և յերազկուտության, քաղաքական անդաստիարակության, թուրամորթ հեղափոխականության տհասությունը. Պատմա-տնտեսական պայմանները բացատրում են թե մասսաների հեղափոխական պայքարի ծագման անհրաժեշտությունը, թե նրանց կովելու անպատրաստությունը, նրանց տալստոյական չարին չդիմագրելը, վորոն առաջին հեղափոխական կամուլանիայի պարտության ամենալուրջ պատճառն յեղավ...

Ասում են, վոր ջարդված բանակները լավ են սովորում ինարկե, հեղափոխական դասակարգերի համեմատումը բանակների հետ ճիշտ ե, միայն — շատ սահմանափակ իմաստով. Կապիտալիզմի զարդացումը յուրաքանչյուր ժամում կերպարանափոխում. և սրում և այն պայմանները, վորոնք դեպի կալվածատեր ձորտատերերն ու նրանց կառավարությունն ունեցած ատելությամբ միաձուլված գյուղացիական միլիոններին մղում եյին դեպի հեղափոխական - դեմոկրատական պայքարը. Փոխականության, շուկայի տիրապետության և գրամի իշխանության աճումը հենց իր գյուղացիության մեջ ավելի ու ավելի դուրս ե քշում նահապե-

տական վիլիսոփիայական* իդեոլոգիան. Սակայն հեղափոխության առաջին տարիների և մասսայական հեղափոխական պայքարի առաջին պարտությունների մի նվաճումն անկասկած ե. մասսաների նախկին թափթփակածությանն ու մեղկությանը հասցրած մահացու հարվածն և այդ: Սահմանավորող գծերը դարձան ավելի խիստ: Դաստկարգերն ու կուսակցությունները սահմանաբաժնիցին: Սատրիպինյան դասերի մուրճի ներքո հեղափոխական սոցիալ-դեմոկրատների անշեղ ու կայուն ագիտացիայով, վոչ միայն սոցիալիստական պրոլետարիատը, այլ և գյուղացիության դեմոկրատական մասսաները անխուսափելիորեն կառաջադրեն ավելի կոփված մարտիկներ, վորոնք այնուի ու ավելի պակաս չափով ընդունակ կլինեն՝ տոլստովչչինայի մեր պատմական մեղքի մեջն ընկնելու համար:

„Պրոլետարիա № 35 1908 թ. սեպտեմբերի 11-24-ի²

L. Ն. ՏԱԼՍՏՈՅԸ

(1910 թ.)

Մեռավ կե Տալստոյը: Նրա համաշխարհային նշանակությունը, վորպես արվեստագետի, նրա համաշխարհային հոչակը, վորպես մտածողի և քարողիչի, թե մեկը և թե մյուսը յուրատեսակ արտացոլում են սուսական հեղափոխության համաշխարհային նշանակությունը:

Լ. Ն. Տալստոյը հանգես յեկավ վորպես մեծ արվեստագետ դեռ ճորտատիրության շրջանում: Մի շարք հանձարեղ յերկերում, վոր տվել ե իր ավելի քան կիսադարյա զրական գործունեյության ընթացքում, նա նկարագրել ե գերազանցապես հին, նախնեղափոխական Ռուսաստանը, վորը 1861 թվականից հետո ել

* Զեռագրում «Տալստոյական»:

մասցել եր կիսաճորտության մեջ, նկարագրել և դյուշական Ռուսաստանը, կալվածատիրոջ և գյուղացու Ռուսաստանը: Նկարագրելով Ռուսաստանի պատմական կյանքի այդ շրջանը, և Տալստոյը կարողացավ իր գործերում դնել այնքան խոշոր հարցեր, կարողացավ հասնել այնպիսի ուժեղ գեղարվեստական բարձրության, որը նրա գրվածքները համաշխարհային գեղարվեստական գրականության մեջ առաջնակարգ տեղերից մեկը գրավեցին: Ճորտատերերից ճզմված յերկրներից մեկը հեղափոխությունը նախապատրաստող դարաշրջանը, շնորհիվ Տալստոյի հանճարեղ լուսաբանության հանդես յեկավ վորպես մի քայլ գեղի առաջանրող մարդկության գեղարվեստական զարգացման մեջ:

Արվեստագետ Տալստոյը նույնիսկ Ռուսաստանում հայտնի յէ փոքրամասնությանը: Նրա մեծ գործերը բոլորի խոկական սեփականությունը զարձնելու համար՝ հարկավոր և կռիվ և կռիվ այն հասարակարգի դեմ, վորը միլիոններին և տասնյակ միլիոններին դատապարտել և մթության, լքման, տաժանակիր աշխատանքի, աղքատության. հարկավոր և սոցիալիստական հեղաշրջում:

Յեկ Տալստոյը տվել ե վնչ միայն գեղարվեստական յերկեր, վորոնք մասսաներից գնահատվելու յեն և ընթերցվելու, յերբ նրանք իրենց համար կյանքի մարդավարի պայմաններ կստեղծեն, կտապալեն կալվածատերերի և կապիտալիստների լուծը. նա կարողացել և նշանակալի ուժով արտահայտել ժամանակաշրջից կարգերից ճնշված լայն մասսաների տրամադրությունը, նկարագրել նրանց դրությունը, արտահայտել նրանց բողոքի և զայրույթի տարերային զգացմունքը: Պատկանելով գլխավորապես 1861-1904 թվականների

եպոխային, Տալստոյը զարմանալի ուելեփ կերպով իր յերկրում մարմնավորել և — թէ իբրև արվեստագետ, թէ իբրև մտածող ու քարոզիչ — ամբողջ առաջին ռուսական հեղափոխության պատմական գծերի յուրահատկությունը, նրա ուժը և նրա թուլությունը:

Մեր հեղափոխության առանձնահատուկ գծերից մեկն ել այն ե, վոր նա գյուղացիական բուրժուական հեղափոխություն եր՝ ամբողջ աշխարհի շատ բարձր զարգացած կապիտալիզմի և Ռուսաստանի համեմատաբար բարձր կապիտալիզմի պայմաններում: Նա բուրժուական հեղափոխություն եր, վորովհետև նրա անմիջական խնդիրն եր ցարական ինքնակալության, ցարական միապետության տապալումը, կալվածատիրական հողատիրության կործանումը, և վոչ թե բուրժուազիայի տիրապետության տապալումը: Մասնավորապես գյուղացիությունը չեր գիտակցում այդ վերջին խնդիրը, չեր գիտակցում նրա տարբերությունը պայքարի ավելի մոտ և անմիջական խնդիրներից: Յեկ գյուղացիական բուրժուական հեղափոխություն եր, վորովհետև որյեկտիվ պայմանները առաջ եյին քշել առաջին հերթին, գյուղացիության կյանքի արմատական պայմանների փոփոխման, հին, միջնադարյան հողատիրության ըեկման, և կապիտալիզմի համար «հող մաքերու» հարցը. որյեկտիվ պայմանները քիչ թե շատ ինքնուրույն պատմական գործողության համար հրապարակ եյին քաշել գյուղացիական մասսաներին:

Տալստոյի յերկերում արտահայտվել են հենց գյուղացիական մասսայական շարժման թե ուժը, թե թուլությունը, թե կորովը և թե սահմանափակությունը: Նրա ջերմ, բուռն, հաճախ անողոքաբար սուր բողոքն ընդդեմ պետության և վոստիկանական կազուննի յեկեղեցու, արտահայտում ե պրոմտիվ գյուղացիական այն

դեմոկրատիայի տրամադրությունը, վորի մեջ ճորտաւահրական իրավունքի, չլնովսկիկական կամայականության և թալանի, յեկեղեցական ճիղվիթականության, խաբեբայության և սրիկայության դարերը կուտակել են վոխակալության և ատելության սարեր։ Նրա հողային մասնավոր սեփականության անհողդողդ բացառումը տալիս է գյուղացիական մասսայի հոգեբանությունը մի այնպիսի պատմական մոմենտում, յերբ հին միջնադարյան կալվածատիրական և արքունական «նագելային» — հողատիրությունը վերջնականապես անտանելի արգելակ եր դարձել յերկրի հետագա գարգայմանը և յերբ այդ հինավորց հողատիրությունը անխուսափելիորեն յենթակա յեր ամենախիստ, անողոք վոչնչացման։ Նրա անդադրում, ամենախոր զգացումով և ամենաբոցավառ ցասմամբ լի, կապիտալիզմը դատապարտելը տալիս է այն նահապետական գյուղացու վողջ սարսափը, գյուղացու, վորին սկսում եր մերձենալ նոր, աներեւոյթ, անհասկանալի թշնամին, վոր գալիս և ինչ վոր տեղից, քաղաքից կամ ինչ վոր արտասահմանից, քարուքանդ և անում գյուղացիական կենցաղի բոլոր «հիմքերը», վոր իր հետ բերում և չտեսնված ավերածություն, աղքատություն, սովամահություն, վայրենացում, պոռնկություն, սիֆիլիս — «նախնական կոտակման» շրջանի բոլոր աղետները, վորոնք հարյուրապատիկ սրվել ելին՝ թալանի ամենանորագույն ձեերը Ռուսական հողի վրա փոխադրելուց, ձեեր, վոր մշակել եր պարոն Կուպոնը։

Սակայն ջերմ բողոքականը, ցատկուտ դատապարտողը, մեծ քննադատը դրա հետ միասին իր յերկերում հայտնաբերել և Ռուսաստանի վրա առաջ շարժվող ճգնաժամի պատճառների և ճգնաժամից դուրս գալու միջոցների մի այնպիսի անհասկացողություն, վորպի-

սին հատուկ ե միայն նահատպետական, միամիտ ուամիկին և վոչ յեվրոպականորեն կրթված հեղինակին։ Ճորտաւատիրական և վոստիկանական պետության դեմ, միապետության դեմ տարվելիք պայքարը Տալստոյի մոտ դառնում եր քաղաքականության բացառում, վորը բերում հասցնում եր չչարին չհակառակելու ուսմունքին, և վորը 1905—07 թ.թ. մասսաներին հասցրեց հեղափոխական կովկից լիովին հեռանալուն։ Պայքարը պաշտոնական յեկեղեցու գեմ համատեղվում եր նոր, մաքրված կրոնի քարոզի հետ, այսինքն, ճնշված մասսաների համար նոր, մաքրված, նրբացրած թույնի հետ։ Մասսավոր հողատիրության բացառումը հանգում եր վոչ թե ամբողջ պայքարի կենտրոնացմանը իսկական թշնամու վրա, կալվածատիրական հողատիրության և նրա իշխանության քաղաքական գենքի, այսինքն մոնարխիայի դեմ, այլ հանգում եր յերազային, ցրված, անզոր հառաչանքների։ Կապիտալիզմի և մասսաներին պատճառած նրա աղետների դատապարտումը համատեղվում եր բացարձակ անտարբեր վերաբերման հետ՝ դեպի այն համաշխարհային աղատագրական պայքարը, վոր մղում և միջազգային սոցիալիստական պլրոլիտարիատը։

Տալստոյի հայացքների հակասությունները միայն նրա անձնական մտքի հակասությունները չեն, այլ արտացոլումն են այն, վերին սատիճանի բարդ հակասական պայմանների, սոցիալական աղղեցությունների, այն պատմական տրադիցիաների, վորոնք վորոշում երին ուսւ հասարակության զանազան դասակարգերի և զանազան խավերի հոգեբանությունը՝ հետևելիորմյան և նախական պարագանում։

Յեւլ այդ պատճառով Տալստոյի ճիշտ զնահատական տալը հնարավոր և միայն այն դասակարգի տեսակետից, վորն իր քաղաքական դերով և իր պայքարով այդ

հակասությունների առաջին լուծման — հեղափոխության — ժամանակ ապացուցել ե զեկավար լինելու իր կոչումը՝ ժողովրդի աղատության և մասսաներին շահագործումից աղատագրելու պայքարում, — ապացուցել ե իր անձնազո՞ն նվիրվածությունը դեմոկրատիայի գործին և իր ընդունակությունը՝ բուրժուական, (նույն թվում նայե գյուղացիական) դեմոկրատիայի սահմանափակության և անհետևողականության դեմ կովելում։ Ճիշտ գնահատական տալ հնարավոր և միմիայն սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի տեսակետից։

Նայեցեք կառավարական թերթերում Տալստոյին տրված գնահատականներին։ Նրանք կոկորդիլոսի արցունքներ են թափում, հավաստիացնելով իրենց հարգանքը գեղի «մեծ գրողը» և միևնույն ժամանակ պաշտպանելով «սրբազնագույն» սինողը։ Իսկ սրբազն հայրերը հենց նոր կատարեցին առանձնապես գարշելի ստորություն, ուղարկելով տերտերներին մեռնողի մոտ, վորպեսպի ժողովրդին խարեն և ասեն, վոր Տալստոյը «զղացել ե»։ Մըրազան սինողը Տալստոյին յեկեղեցուց բանազրեց։ Ավելի լավ, Այդ սիրագործությունը հաշվի կառնվի ժողովրդական հաշվեհարդար կատարելիս այն փարաջավոր չինո՞միկների, Քրիստոսի ժանդարմաների, մութինկվեդիտորների հետ, փորոնք հրահրում եյին սեհարյուրակային ցարական վոհմակի կատարած հրեյական ջարդերը և այլ սիրագործությունները։

Նայեցեք լիբերալ թերթերի Տալստոյին տրված գնահատականին։ Նրանք բավականանում են այն դատարկ կայուննիւլիբերալ տափակ-պրոֆեսորական ֆրազ-ներով «քաղաքակրթված մարդկության ձայնի» մասին, «ճշմար-աշխարհի միաբերան արձագանքելու» մասին, «ճշմար-

վորոնց համար Տալստոյն այնքան խարազանում եր — և արդարացի յեր խարազանում — բուրժուական գիտությունը։ Նրանք չեն կարող շիտակ ու պարզ արտահայտել իրենց գնահատականը՝ պետության, յեկեղեցու, հոգային մասնավոր սիփականության և կապիտալիզմի վերաբերյալ Տալստոյի ունեցած հայացքների մասին, — վնչ այն պատճառով, վոր խանգարում և ցենզուրան, ընդհակառակը, ցենզուրան ոգնում և նրանց՝ դժվարությունից գուրս գալու գործում, — այլ այն պատճառով, վոր Տալստոյի քննադատության մեջ յուրաքանչյուր գրությունը մի ապտակ և բուրժուական լիբերալիզմին, — այն պատճառով, վոր Տալստոյի կողմից արդի ամենացավոտ, ամենաանիջյալ հարցերի հենց միայն անվախ, բացորոշ, անողոք կերպով կը ուժում ընդուր կը բերալ (և լիբերալ-նարողնիկական) հրապարակախոսության շաբլոն ֆրազների, հնացած աչքակապության, խուսափողական, «քաղաքակրթված» ստուժան յեկեսին լիբերալները սարի պես պաշտպանում են Տալստոյին, սարով մեկ դեմ են սինողին, — և զրա հետ միասին՝ նրանք... վեխականների * կողմն են, վորոնց հետ «կարելի յե վիճել», սական վորոնց հետ «հարկավոր ե» հաշտ ապրել մեկ կուսակցության մեջ, «հարկավոր ե» գրականության և քաղաքականության մեջ միասին աշխատել։ Իսկ վեխականներին համբուրում ե Անտոնիյ Վոլինսկին**:

* Վեխականները (ベコボフ) ուսւ բուրժուական ինտելիգենցիայի սեակցիոն և միստիկուն տրամադրված մասն ե, վորի յուրահատուկ մանիֆեստը հանդիսացավ Բերդյայիք, Խզդյեիք, Ֆելուսոփիքի և այլոց հոգվածների ժողովածուն «Вехи» (1909թ.), ուր հեղինակները հրաժարվում են հեղափոխությունը և ինտելիգենցիայի հեղափոխական տարրերից։

Ս. Դ.

** Անտոնիյ Վոլինսկի (Ա. Պ. Խըապովիցկի) — յեպիսկոպոս, կատարդի և հարցուրակային։

Լիբելալները առաջին պլանի վրա յեն քաշում, թե Տալստոյը — «մեծ խիզճն ե»։ Միթե այդ գատարկ ֆրագ չե, վոր հազար ու մի յեղանակով կրկնում են և „Նորօ Երեմե”-ն^{*} և նրա նմանները։ Միթե սա Խուսափումն չե դեմոկրատիայի և սոցիալիզմի այն կոնկրետ հարցերից, վոր դրված են Տալստոյի կողմից։ Միթե այս բանը առաջին պլանի վրա չի քաշում այն, ինչ արտահայտում ե Տալստոյի նախապաշտամունքը և վոչ թե նրա բանականությունը, ինչը նրա մեջ անցյալին ե պատկանում ե և վոչ ապագային, — նրա՝ քաղաքականության բացասումը և բարոյական ինքնակատարելագործման քարոզները և վոչ թե նրա բուռն բողոքն ամեն մի դասակարգային տիրապետության դեմ։

Մեռավ Տալստոյը և դեպի անցյալը գնաց նախահեղափոխական Ռուսաստանը, վորի թուլությունը և անզորությունը արտահայտվել են հանձարեղ արվեստագետի փիլիտոփայության մեջ, պատկերվել նրա յեկերում։ Սակայն նրա ժառանգության մեջ կա այն, ինչ անցյալին չի անցել, ինչ պատկանում ե ապագային։ Այդ ժառանգությունը վերցնում ե և այդ ժառանգության վրա աշխատում ե ոռւսաստանյան պրոլետարիատը։ Նա աշխատավոր և շահագործվող մասսաներին կը բացատրի պետության, յեկեղեցու, հողային մասնավոր սեփականության տալստոյական քննադատության նշանակությունը վոչ թե նրա համար, վորպեսզի մասսաները սահմանափակվեն ինքնակատարելագործությամբ և աստվածապաշտ կյանքի մասին հառաչելով, այլ նրա համար, վոր նրանք բարձրանան նոր հարված հասցնելու ցարական միապետությանը և կալվածատի-

* „Նորօ Երեմե”-ն կալվածատիրական - բյուբոկրատական շրջանների որդանն ե (1868-1917)։

բական հողատիրությանը, վորոնք 1905 թվին թեթևակի կոտրված եյլին և վորոնց հարկավոր և վոչնչացնել։ Նա կը բացատրի մասսաներին կապիտալիզմի Տալստոյական քննադատությունը՝ վոչ թե նրա համար, վոր մասսաները կապիտալի և փողի իշխանության հասցեյին ուղղած անեծքներով սահմանափակվեն, այլ նրա համար, վոր նրանք սովորեն իրենց կյանքի և պայքարի յուրաքանչյուր քայլափոխում հենվել կապիտալիզմի տեխնիկական և սոցիալական նվաճումների վրա, սովորեն համախմբվել սոցիալիստական մարտիկների միասնական միլիոնափոր բանակի մեջ — մարտիկների, վորոնք կտապալեն կապիտալիզմը և կստեղծեն նոր հասարակություն՝ առանց ժողովրդի աղքատության, առանց մարդը մարդու կողմից շահագործելու։

«Սոցիալ-Դեմոկրատ», № 18, 1910 թ. 16-29 նոյեմբերի

Հ. Ն. ՏԱԼՍՏՈՅԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(1910)

Թուս ըանգորները զրեթե Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում արգեն արձագանքեցին Լ. Ն. Տալստոյի մահվան առթիվ և այս կամ այն կերպ իրենց վերաբերմունքն արտահայտեցին հանդեպ մի գրողի, վոր տվել և մի շարք խիստ ուշագրավ գեղարվեստական յերկեր, վորոնք նրան ամբողջ աշխարհի մեծ զրոյների թվին են դասել — հանդեպ մի մտածողի, վոր հսկայական ուժով, համոզմունքով, անկեղծությամբ զրել և մի շարք հարցեր, վորոնք վերաբերում են ժամանակակից հասարակական կառուցվածքի հիմնական գծերին։

Հե Տալստոյն իր գրական գործունեյությունն սկսեց ճորտատիրական իրավունքի գոյության որով, բայց արդեն այնպիսի մի ժամանակ, յերբ այդ իրավունքն ակնհայտորեն ապրում եր իր վերջին որերը: Տալստոյի գլխավոր գործունեյությունն ընկնում եռուսական պատմության այն ժամանակաշրջանին, վորտարածվում եռ նրա յերկու շրջադարձային կետերի, այսինքն 1861 և 1905 թվականների միջև: Այդ ժամանակաշրջանի ընթացքում ճորտատիրական իրավունքի հետեանքները, նրա ուղղակի մնացորդները իրենցով թափանցում եյին յերկրի ամրող տնտեսական (հատկապես գյուղական) և ամբողջ քաղաքական կյանքը: Յեզ միենույն ժամանակ հենց այդ ժամանակաշրջանն եր հանդիսանում կապիտալիզմի համար ստորից ուժգնորեն աճելու և վերից պատվաստելու շրջանը:

Ինչում եյին արտահայտվում ճորտատիրական իրավունքի վերապրոմեերը: Ամենից ավելի շատ և ամենից ավելի պարզ՝ նրանում, վոր Ռուսաստանում, առավելապես գյուղացիական այս յերկրում, այդ ժամանակամիջնորդն յերկրագործությունը գտնվում եր քայլայված և աղքատացած գյուղացիների ձեռքում, վորոնք 1861 թվին կալվածատերերի ոգտին կտրված են ճորտատիրական հողաբաժինների վրա վարում եյին հնացած, նախնական տնտեսություն: Իսկ մյուս կողմից՝ յերկրագործությունը գտնվում եր կալվածատերերի ձեռքում, վորոնք կենտրոնական Ռուսաստանում հողը մշակում եյին գյուղացիների աշխատանքով, գյուղացիական չութով, գյուղացիական ձիով, և ի հատացումն «կտրված հողերի», խոտհարքների, ջրերու տեղերի և այլն: Իր եյությամբ սա անուենության հին ճորտատիրական սխառեմ եր: Ռուսաստանի քաղաքական կարգերը ևս այդ ժամանակ ամբողջապես ներծծված եյին

ճորտատիրությամբ: Այդ յերեսում եր նաև պետական կառուցվածքից՝ մինչև նրա փոփոխման առաջին ձեռնարկումը 1905 թվին, պետական գործերի նկատմամբ ազնվական-հողատերերի ունեցած գերակշռող ազգեցությունից և պաշտոնյաների միահեծանությունից: վերջինները ևս, — հատկապես վերջինները, — գլխավորապես, ազնվական-հողատերերից եյին:

Այդ նահապետական Ռուսաստանը 1861 թվից հետո սկսեց արագորեն փլվել՝ համաշխարհային կապիտալի ազդեցության ներքո: Գյուղացիները սովոր եյին մատնվում, կոտորվում եյին, քայլայվում եյին ավելի, քան յերբ և իցե, և փախչում եյին գեպի քաղաքները՝ թողնելով իրենց հողը: Ուժգնորեն կառուցվում եյին յերկաթուղիները, գործարաններ և ֆաբրիկաներ՝ շնորհիվ քայլայվող գյուղացիների «եժան աշխատանքից»: Ռուսաստանում զարգանում եր խողոր ֆինանսական կապիտալը, խողոր առևտուրը և արդյունաբերությունը:

Հին Ռուսաստանի բոլոր հին «հիմքերի» արագ, դժվարին ու սուր այդ բեկումն ահա անդրադարձել և արվեստագետ Տալստոյի գրվածքներում, մտածող Տալստոյի հայացքներում:

Տալստոյը գերազանցորեն ծանոթ եր գյուղական Ռուսաստանին, կալվածատերերի ու գյուղացիների կենցաղին: Նա իր գեղարվեստական յերկերում տվել եայդ էինցաղի այնպիսի նկարագիրներ, վորոնք պատկանում են համաշխարհային գրականության լավագույն յերկերին: Գյուղական Ռուսաստանի բոլոր «հին հիմքների» սուր խորտակումը լարեց նրա ուշագրությունը, խորացրեց նրա հետաքրքրությունը դեպի այն, ինչ կատարվում եր նրա շուրջը, բերեց հասցըց նրա աշխարհայացքի բեկմանը: Իր ծնունդով և զարդարակությամբ Տալստոյը պատկանում եր Ռուսաս-

տանի բարձր կալվածատիրական մեծունիքին, — նա խզեց իր կապերը այդ շրջանի բոլոր սովորական հայցքների հետ և իր գերջին գրվածքներում, հախուռն քննադատությամբ հարձակվեց բոլոր ժամանակակից պետական, յեկեղեցական, տնտեսական կարգերի դեմ, վոր հիմնված են մասսաների ստրկացման, նրանց աղքատության, զյուղացիների հասարակական և ընդհանուրապես մանր տնտեսատերերի կործանման, ընության և կեղծավորության վրա, ովքեր վերից վար սնում են ամբողջ ժամանակակից կյանքը:

Տալստոյի քննադատությունը նոր բան չեւ նա վոչ մի այնպիսի բան չի ասել, վոր իրանից շատ առաջ ասված չիներ թե յեփրոպական և թե ոռուսական գրականության մեջ նրանց կողմից, ովքեր աշխատավորների կողմն են յեղել կանգնած: Սակայն Տալստոյի քննադատության յուրահատկությունը և նրա պատմական նշանակությունը կայանում է նրանում, վոր նա այնպիսի ուժով, վորը հատուկ է միայն հանճարեղ արվեստագետներին, արտահայտում և մատնանշված շրջանի Ռուսաստանի և հենց զյուղական, զյուղացիական Ռուսաստանի ամենալայն ժողովրդական մասսաների հայցքների բնելումը, Կորոլիեական Տալստոյի մոտ ժամանակակից կարգերի քննադատությունը տարբերվում և ժամանակակից բանվորական շարժման ներկայացուցիչների մոտ յեղած նույն կարգերի քննադատությունից հենց նրանով, վոր Տալստոյը կանգնած է նա հապետական միամիտ զյուղացու տեսակետի վրա, Տալստոյը նրա հոգեբանությունը փոխադրում է իր քննադատության, իր ուսմունքի մեջ, Տալստոյի քննադատությունը նրա համար և աչքի ընկնում զգացնունքի այնպիսի ուժով, այնպիսի կրքոտությամբ, համոզելու կարողությամբ, թարմությամբ, անկեղծությամբ, «արմատին

հասնելու», մասսաների դժբախտությունների իսկական պատճառը գտնելու անաշառ ձգտումով, վոր այդ քննադատությունը խսկապես արտացոլում է այն միջնավոր զյուղացիների հայցքների բեկումը, վորոնք նոր միայն աղատվել են ձորտությունից և տեսել են, վոր այդ աղատությունը նշանակում է ավերման, սովոր այդ աղատությունը նշանակում է ավերման, սովամահության, քաղաքային «խիտրովցիների» անտունանտիրական կյունք և այլ նոր սարսափներ: Տալստոյը արտացոլում և նրանց տրամադրությունը այնպիս ձշտորեն, վոր ինքն իր ուսմունքի մեջ մտցնում է նրանց միամտությունը, նրանց ոտարացումը քաղաքականությունից, նրանց միստիցիզմը, աշխարհից հեռանալու ցանկությունը, «չարին չհակառակելը», կապիտալիզմի և «փողի իշխանության» հասցեին ուղղված անզոր անեծքները: Միլիոնավոր զյուղացիների բողոքը և նրանց հուսահատությունը — ահա թե ինչն է ձուլվել Տալստոյի ուսմունքի մեջ:

Ժամանակակից բանվորական շարժման ներկայացուցիչները գտնում են, վոր բողոքելու բան շատ կա, սակայն հուսահատվելու բան չկա: Հուսահատությունը յուրահատուկ և այն դասակարգելին, վորոնք կորչում են, իսկ վարձու բանվորների դասակարգը անխուսափելիորեն աճում է, զարգանում է և ամրապնդվում է ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ, նույն թվում նաև Ռուսաստանում: Հուսահատությունը յուրահատուկ և նրանց, ով չի հասկանում չարի պատճառները, չի տեսնում յելքը, ընդունակ չի կավելու: Ժամանակակից արցունաբերական պլրութարիատը նման դասակարգերի թվին չի պատկանում:

„Խաշ ույտ“ (Պրոֆմիությունների կենտրոնական բյուրոյի որդան) 1910 թ. նոյեմբեր 28, № 7,
գ. Լենինի ստորագրությամբ:

ՏԱԼՍՏՈՅԸ ՅԵՎ ՆՐԱ ԵՊՈՒԱՆ

(1911)

Եպոխան, վորին պատկանում ե Լ. Ն. Տալստոյը և վորը նշանակալից ուլյեփ կերպով արտացոլվել ե ինչպես նրա հանձարեղ գեղարվեստական յերկերում, ուոյնպես և նրա ուսմունքի մեջ՝ դա 1861 թվից հետո, մինչև 1905 թվականի ժամանակաշրջանն եւ ծիրա ե, Տալստոյի գրական գործունեյությունն սկսվել եր ավելի վաղ և ավարտվեց ավելի ուշ, քան թե այդ շրջանի սկիզբն ու վախճանը, սակայն լ. Տալստոյը վորպես արվեստագետ և ժամանող, կատարելապես կազմակերպվել ե ինչն այդ շրջանում, վորի փոխանցիկ բնույթն ե, վոր ծնել ե թե Տալստոյի յերկերի և թե ռուսականության» բոլոր հատկանշական գծերը:

«Աննա Կարենինա»-յի մեջ լ. Տալստոյը լեինի բերանով պայծառորեն արտահայտել ե, թե ինչուն և կայացել ոռուսական պատմության անցումը այդ կես տարի ընթացքում։

... «Լեինը գիտեր խոսակցությունները՝ հնձի, բանվորներ վարձելու և այլնի մասին, վոր ընդունված ե ինչ վոր ստոր բան համարելու այժմ գրանք լեինին թվում եյին միակ կարեռը»։ Դա կարեռ չեր գուցե ճորտափառական իրավունքի ժամանակ, կամ, գուցե՝ Անգլիայում։ Ցերկու գետքում ել իրենք պայմանները վորոշ են, սակայն մեզ մոտ, յերբ այդ ամենը հեղաշրջվել ե և նոր միայն դասավորվում ե, այժմ Ռուսաստանում ամենակարեռն այն հարցն ե, թե այդ պայմաններն ինչպես կդասավորվեն» — մտածում եր լեինը (Ցերկ. ժող. հատ. X, յերես 137):

«Մեղանում այդ ամենը հեղաշրջվել ե և նոր միայն դասավորվում ե»։ — դժվար ե պատկերացնել 1861—1905 թվականների ավելի հաջող բնութագիր, Այն, ինչ «հեղաշրջվել ե», դա լավ հայտնի յե, կամ, առնվազն միանգամայն ծանոթ ե յուրաքանչյուր ոռուս մարդու։

Դա ճորտափիրությունն եւ նրան համապատասխանող ամբողջ «հին հասարակակարգը»։ Այն, ինչ «նոր միայն դասավորվում ե», բոլորովին անծանոթ, ոտար և անհասկանալի յե բնակչության լայն ժամանակաշրջան միայն դասավորվող» բուրժուական հասարակակարգը պատկերանում ե Տալստոյին, աղոտ կերպով, վորպես խրտվիլակ — վորպես Անգլիա։ Հենց այդպես, խրտվիլակ, վորովհետև Տալստոյն, այսպես ասած, սկզբունքորեն բացասում ե այդ «Անգլիայի» հասարակակարգի հիմնական գծերն իր համար պարզելու, այդ հասարակակարգը կապիտալի տիրապետության հետ, դրամի դերի հետ, փոխանակության առաջացման և զարգացման հետ շաղկապելու ամեն մի փորձ։ Նարոգնիկների նման, նա չի ցանկանում տեսներ աչքերը փակում ե, յերեսը գարձնում ե այն մտքից, թե Ռուսաստանում «դասավորվում ե» վոչ այլ ինչ, քան բուրժուական հասարակակարգ։

Ճշմարիտ ե, վոր յեթե վոչ «միակ կարևորը», ապա Ռուսաստանի ամբողջ հասարակական քաղաքական գործունեյության տեսակետից 1865—1905 թվականների համար (և ինց մեր ժամանակի համար ևս) կարեռագույնն այն հարցն եր, թե «ինչպես կդասավորվի» այդ հասարակակարգը — բուրժուական հասարակակարգը, — վոր շատ բազմազան ձեեր եր ընդունում «Անգլիայում», Գերմանիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և այլն։ Բայց հարցի այսպիսի վորոշ, կոնկրետ պատմական դրումը Տալստոյի համար բոլորովին ոտար ե։ Նա դատում է վերացականորեն։ Նա ընդունում է միմիայն բարոյականության «հավիտենական» սկզբունքների, կրօնի հավիտենական ճշմարտությունների տեսակետը, չզիտակցելով, վոր այդ տեսակետը սոսկ իդեալոգիական արտացոլումն ե հիս («հեղաշրջված») 93

«*Այսուցելն»*—ում Տալստոյը հայտարարում է, վոր քաղաքակրթությունը» իրեն բարիք ճանաչելը հանդիսանում է ցերեկակայական ճանաչողություն», վորը մարդկային բնության մեջ «վզոչնչացնում է» բարիքի բնադրային, յերանելի, և նախնական պահանջը»: «Մենք մի և միմիշայն մի անսսխալական ղեկավար ունենք, — բացականչում է Տալստոյը, — դա Համաշխարհային Կոգին է, վոր թափանցում է մեր մեջ» (Յերկ. II, 125):

«Մեր ժամանակի ստրկության» մեջ (գրված ե
1900 թվին) ավելի յեռանդուն կրկնելով իր բարձրա-
գույն դիմումը Համաշխարհային Վոդուն, Տալստոյը
և կարծեցյալ գիտություն» ե համարում քաղաքատնտե-
սությունը, վորովհետեւ վերջինս իրը «որինակ» վերց-
նում ե «ամենաբացառիկ պայմաններում գտնվող փոք-
րիկ Անգլիան, փոխանակ վերցնելու աշխարհի մարդ-
կանց գրությունը՝ վող պատմական ժամանակի ըն-
թացքում։ Թե ինչպիսին ե այդ «ամբողջ աշխարհը»,
այդ մեզ համար պարզվում ե «Հառաջադիմությունը և
կրթության բնորոշումը» հոդիոդվածից (1862 թ.)։ Այն
հայացքը, վոր պաշտպանում են «Պատմագիրները» թե-
րը, հառաջադիմությունը մարդկության համար ընդ-
հանուր որենք ե», Տալստոյը ջախջախում ե հենվելով
«ամբողջ այսպես կոչված Արևելքի» վրա (IV, 162):
«Մարդկության առաջ շարժման ընդհանուր որենք
չկա, — հայտարարում ե Տալստոյը, — ինչպես այդ պատ-
շուցում են անշարժ արևելյան ժողովուրդները»:

94 ցուցում են անշարժ արսօնյան օրինակութեարք
Անա հենց արևելյան հասարակակարգի, ասիական
հասարակակարգի խղեռողիքան ել հանդիսանում ետք-
ստոյականությունը՝ իր ռեալ պատճական բովանդակու-
թյամբ։ Այստեղից ել առաջանում են թե ասկետիզմը

թէ բոնությամբ չարին հակառակելը, թէ պեսսիմիզմի խոր հնայունները, թէ այն համոզմունքը, — վոր «ամեն ինչ վոչինչ ե», բոլոր նյութականը վոչինչ ե» («Օ սմիւլ յիշին», եջ 52), — թէ «Հոգութ-հավատը, «ամեն ինչի սկզբի ու հիմքի», — վորպիսի հիմքի համեմատ մարդը միայն «մշակ» ե, վոր «գրված ե իր հոգու փրկության գործին» և այլն։ Տալսայոյը հավատարիմ ե այդ իդեոլոգիային թէ «Կրեյցերյան սոնատում», յերբ նա ասում է՝ «կնոջ աղատությունը վոչ թարնթացների մեջ ե և վոչ ել պալատների, այլ ննջարանի մեջ», և թէ 1862 թվի հոգվածում, վորը հայտարարում ե, թէ համալսարանները պատրաստում են միայն «գրգոված, հիվանդ լիբերալներ», վորոնք «ամեններն ժողովրդին պետք չեն», «աննպատակ կորված են նախ ին միջամայրից», «իրենց համար կյանքում տեղ չեն դտնում» և այլն (II, 136—137):

Պեսսիմիզմը, չհակառակելը, «Հոգուն» դիմելը մի հղեղողիա յե, վոր անխուսափելիորեն հանդես և զահիս այնպիսի մի ժամանակաշրջանում, յերբ ամբողջ ին հասարակարգը «հեղաշրջվել է» և յերբ մասսան, լոր գաստիարակված և յեղել այդ հին կարգերում, որը կաթի հետ ներս և ծծել իր մեջ այդ կարգերի վկրունքները, սովորությունները, տրադիցիաները, ավատակիքները, չի տեսնում և չի կարող տեսնել թե նչպիսին և նոր «կազմավորվող» կարգը, թե ինչ- իսի հասարակական ուժեր և ինչպիսին նրան «կազմավորում», թե հասարակական ի՞նչ ուժերն են ընդուակ ազատություն բերելու «բեկման» եպիխաներին առողջ անհամար, հատկապես սուր աղետներից:

1862—1904 թ.թ. շրջանը նուսաստանի համար հենց յգպիսի մի բեկման դարաշրջան եր, յերբ հինն անարձ քանդում եր բոլորի աչքի առաջ, իսկ նորը դեռ

կազմվում եր, ըստ վորում այդ կազմավորումը ստեղծագործ հասարակական ուժերը ամենաբազմազան ասպարեզներում առաջին անգամ լայն, համազգային մասշտաբով, մասսայաձև, բացարձակ գործողություններում իրենց ցուցադրեցին միայն 1905 թվին։ Իսկ Ռուսաստանի 1905 թվի դեպքերին հաջորդեցին համանման դեպքեր հենց այն «Արևելքի» մի ամբողջ շարք պետություններում, վորի «անշարժության» վրա մատնանշում եր Տալմատոյը 1862 թվին։ 1905 թվականը սկիզբն եր «արևելքան» անշարժության վախճանի։ Հենց այդ պատճառով ել այդ տարին իր հետ բերեց տալսույթյականության պատմական վախճանը, վախճանը այն ամբողջ եպօխայի, վորը կարող եր և պետք և ծնել Տալմատոյի ուսմունքը, վոչ իրոք մի անհատական բան, վոչ իրոք քամահաճույք կամ որիգինալություն, այլ վորպես մի իդեոլոգիա կյանքի այն պայմաններում, վորոնց մեջ վորոշ ժամանակի ընթացքում իսկապես գտնվում ելին միլիոններն ու միլիոնները։

Տալմատոյի ուսմունքն անպայմանորեն ուսուպիական և իր բովանդակությամբ ուսակցիոն և բառիս ամենածիշտ և ամենախորը նշանակությամբ։ Սակայն այս տեղից բնափ չի հետեւում վոչ այն, վոր այդ ուսմունքը սոցիալիստական չի յեղել վոչ ել այն, վոր նրա մեջ չին յեղել քննադատական տարրեր, վորոնք ընդունակ լինելին արժեքավոր նյութ տալու առաջավոր դասակարգերի լուսավորության համար։

Սոցիալիզմ ել կա, սոցիալիզմ ել, կապիտալիստական ձևի արտադրություն ունեցող բոլոր յերկրներում կա սոցիալիզմ, վորն արտահայտում և բուժության փոխարինության յեկող զասակարգի իդեոլոգիան և կա սոցիալիզմ, վոր համապատասխանում և այն դասակարգերի իդեոլոգիային, վորոնց փոխարինելու յե-

դալին բուրժուազիան։ Որինակ՝ ֆեոդալական սոցիալիզմը վերջին տեսակի սոցիալիզմն եւ այդ տեսակ սոցիալիզմի բնույթը վաղուց, ավելի քան 60 տարի առաջ՝ Մարքսի կողմից արժեքավորված և սոցիալիզմի այլ տեսակների արժեքավորման շարքում։

Ենունեաւու։ Քննադատական տարրերը յուրահատուկ են և, Տալմատոյի ուսուպիական ուսմունքին այնպես, ինչպես նրանք հատուկ են բազմաթիվ ուսուպիական սիստեմներին։ Սակայն չպետք եւ մոռանալ Մարքսի խորը դիտողությունը, թե քննադատական տարրերի նշանակությունն ուսուպիական սոցիալիզմի մեջ «հակառակ հարաբերության մեջ և կանգնած՝ պատմական զարգացման հանդեպ»։ Բանի ավելի յեւ զարգանում, քանի ավելի վորոշակի բնույթ և ստանում այն հասարակական ուժերի գործունեյությունը, վորոնք «կազմավորում» են նոր Ռուսաստանը և ազատություն են բերում ժամանակակից սոցիալական աղետներից, այնքան ավելի արագ և քննադատական ուսուպիական սոցիալիզմը «զրկվում ամեն մի գործնական իմաստից և ամեն մի տեսական արդարացումից»։

Ծրանից քառորդ դար առաջ Տալմատոյի ուսմունքի քննադատական տարրերը կարող ելին գործնականում յերբեմն ոգուած տալ ազգաբնակության վորոշ խավերին, և ակառակ տալմատոյականության ուսակցիոն և ուսուպիական գծերին։ Կերպին տառանամյակում ասենք դա այդպես չեր կարող լինել, վորովհետև պատմական զարգացումը 80-ական թվականներից մինչև անցյալ դարի վերջը նվազ քայլեր չի արել դեպի առաջ։ Իսկ մեր որերում, նրանից հետո, յերբ մի շարք վերը մատնանշված դեպքերը վերջ դրին «արևելքան» անշարժության, մեր որերում, յերբ այնպիսի հսկայական չափերով տարածվեցին գիտակցորեն-ուսակցիոն նեղ-

դասակարգային, շահաղիտական դասակարգային խմաստով, «վեխսովեցների» ուևկալցիոն գաղափարները լիբերալ բուժուազիայի մեջ, — յերբ այդ գաղափարները վարակել եյին մինչև իսկ գրեթե մարքսիստների մի մասին, ստեղծելով «լիկվիդատորական» հոսանքը* — մեր որերում Տալստոյի ուսմունքի իդեալականացման յուրաքանչյուր փորձը, նրա «Հնակառակելու», նրա «հոգուն» դիմելու, նրա «բարոյական ինքնակատարելագործման» կոչերի, նրա «խղճի» և ընդհանրական «սիրո» դոկտրինայի, ասկետիզմի և քվիյետիզմի ** և այլ քարոզների արդարացման կամ մեղմացնելու ամեն մի փորձը ամենաանմիջական և ամենախորը վեաս և հասցնում։

„Յանական անհաջողությամբ։

ՏԱԼՍՏՈՅԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Տալստոյը հսկայական ուժով և անկեղծությամբ խարազանում եր տիրող դասակարգերին, մեծ կոնկրետությամբ դիմակաղերծ եր անում ներքին կեղծիքը այն բոլոր հիմնարկների, վորոնց ոգնությամբ պահպանվում ե ժամանակակից հասարակությունը — յեկեղեցին, դատարանը, միլիտարիզմը, «որինական» ամուսնությունը, բուրժուական գիտությունը։ Սակայն նրա ուսմունքը

* «Լիկվիդատորներ» — մենչևեների մի խումբ, գորը 1908—1914 թ.թ. սեկտիստի տարիներին կանգնած եր ամեն տեսակ ընդհատակա, անլեզարդ հեղափոխական տշխատանքի վոչնչացման կողմը։

** «Քվիյետիզմ» — միստիկ-կրոնական մի ուսմունք և, գորը (XVII դ.) «բարի գործերի» ծիսականության և պաշտամունքին հակառակ եր աշխարհի պասսիվ ընդունումը («Աղօթոքը վոչնչ շի ցանկանում և վոչնչ չի ինդրում, սակայն անձնատուր և լինում աստծուն և բալարարվում ե նրա կեցության հայեցումով»), միացած մարդու ուժերին լիսակտար կերպով չհավատալու, հետև և այն։

Ս. Դ.

միանգամայն հակասական յեղակ ժամանակակից հասարակակարգի գերեզմանափորի, պրոլետարիատի աշխատանքի և պայքարի նկատմամբ։ Հապա ում տեսակետն եր արտացոլվում էեկ Տալստոյի քարոզի մեջ։ Երա բերանով խոսում եր ուսւական ժողովրդի այն բազմամիլիոն մասսան, վորը արդեն ատում և ժամանակակից կրանքի տերերին, բայց վորը դեռ չի հասել նրա դեմ մզվելիք գիտակցված, հետևողական, մինչև վերջ տարվող, անհաջող պայքարին։

Պատմությունը և Ուսւական մեծ հեղափոխության յելքը ցույց տվին, վոր հենց այդպիսին եր այդ մասսան, վոր գտնվում եր — մի կողմից՝ գիտակից, սոցիալիստական պրոլետարիատի և մյուս կողմից՝ հին ուժիմի վճառական պաշտպանների արանքում։ Այդ մասսան, — գլխավորապես գյուղացիությունը, — հեղափոխության մեջ ցույց տվեց, թե ինչքան մեծ և նրա ատելությունը դեպի հինը, թե ինչքան կենդանի կերպով և զգում նա ժամանակակից ուժիմի բոլոր ձնշումները, թե ինչքան մեծ և դրանցից աղատվելու, նոր կյանք գտնելու իր տարերային ձգտումը։

Յեղ միենայն ժամանակ այս մասսան հեղափոխության ժամանակ ցույց տվեց, վոր իր ատելության մեջ նա բավականաշափ գիտակից չի, իր պայքարում անհետնողական և, ավելի լավ կյանք վորոնելու հարցում սահմանափակված և նեղ սահմաններով։

Մինչև իր խորքերը փոթորկվող հսկա ժողովրդական ծովը իր բոլոր ուժեղ կողմերով արտացոլվել և Տալստոյի ուսմունքի մեջ։

Ուսումնասիրելով լի Տալստոյի գեղարվեստական յերկերը, ուսու բանվոր դասակարգը ավելի լավ կճանաչի իր թշնամիներին, իսկ քննելով Տալստոյի ուսմունքը՝ ամբողջ ուսու ժողովրդը պետք ե հասկանա,

թե ինչումն եր կայանում իր սեփական թուլությունը, վոր թույլ չտվեց նրան՝ մինչև վերջ հասցնել իր ազատագրման գործը։ Այս պետք ե հասկանանք, վորպեսպի առաջ գնանք։

Այդ առաջարժմանն ե, վոր խանդարում են բոլոր նրանք, ովքեր Տալստոյին հայտարարում են իրը «ընդհանուր խիզ» և «կյանքի ուսուցիչ»։ Դա կեղծիք ե, վոր գիտակցաբար տարածում են լիբերալները, ցանկանալով ոգտագործել Տալստոյի ուսմունքի հակառակ, հեղափոխական կողմը։ Այդ կեղծիքը, Տալստոյի, վորպես «կյանքի ուսուցիչ» մասին լիբերալների հետ միասին կրկնում են մի քանի նախկին սոցիալ-դեմոկրատներ։

Այն ժամանակ միայն ոռւս ժողովուրդը կհասնի ազատագրման, յերբ կհասկանա, վոր վոչ թե Տալստոյից պետք ե սովորի ավելի լավ կյանքի ձգտելը, այլ պրոլետարիատից, — այն դասակարգից, վորի նշանակությունը Տալստոյը չեր հասկանում և վորը միմիայն ընդունակ ե քանդելու Տալստոյին ատելի հին աշխարհը։

«Рабочая газета» № 2, 31 (18) դեկտեմբերի, 1910 թ.

ԺԱՐԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՏՐՈՒՄ ԵՆ

I

Են ինն իր առանձնասենյակում գրասեղանի առաջնուած արագ գրում ե և առանց գրիչը թղթից վերցնելու, ասում։

«Բարե՛ ձեզ, ինչպես եք, առաջ եք, Յես հիմա կվերջացնեմ... Այստեղ մի ընկեր տիրում ե, յերեսում ե, հոգնել ե։ Պետք ե ոգնել։ Տրամադրությունը փոքր բան չի»։

Սեղանին դրված ե «Պատերազմ և խաղաղություն»

100 վեպի հատորը։

«Հա, Տալստոյն ե։ Ուզեցի կարդալ վորսորդության տեսարանը, բայց մեկ ել հիշեցի, վոր պետք ե գրել ընկերոջը։ Իսկ կարգալու բոլորովին ժամանակ չկա։ Այս գիշեր միայն կարդացի ձեր գրքույկը Տալստոյի մաս սին։»

Ժպտալով, աչքերը կկոցելով նա հաճույքով ձգվեց գահավորակի մեջ և ձայնը ցածրացնելով, արագ շարունակեց։

«Ի՞նչ քարաժայու ե, հա։ Ի՞նչ վիթխարի հսկայամարդ եւ Այ, սա արվեստագետ ե, սիրելիս։ Յեվ գիտեք, ելի ինչն ե նրա մեջ ապշեցնողը։ Նրա մուժիկային ձայնը, մուժիկային միտքը, իսկական մուժիկն ե նրա մեջ։

«Այդ կոմսից առաջ գրականության մեջ իսկական մուժիկ չի յեղել։ Զի յեղել։»

Հետո, նայելով ինձ ասիացու աչքերով, հարցրեց։ «Ո՞ւմը կարելի յեն նրա շարքում դնել Յելլոպայում։ Ինքն իրեն պատասխանեց։

«Վահ վոքի։»

Յեվ շինուալ ձեռքերը, ծիծաղեց, գոհ, փակելով աչքերը, վորպես կատուն արեի տակ»։

«Վլադիմիր Լենին» Մ. Գորկի

II

Մենք կանգ առանք հուշարձանի մոտ և սքանչանում եյինք Զամասկվարեչիյեյի տեսարանով։

Վլադիմիր Իլյիչը հանկարծ կտրուկ շրջվեց և նայեց այնտեղ, վորտեղից յերեսում եր իվան Մեծը, Ուսպենսկի։ տաճարը...

— Վարտեղ եյին Տալստոյին նզովքի յենթարկելը, յեկեղեցուց անջատելիս, — հարցրեց նա։

— Այ, նախ այդ Ուսպենսկի տաճարում, իսկ հետո, ինչպես ընդունված ե, բոլոր յեկեղեցիներում...»

— Այ, հենց այդտեղ ել պետք եւ դնել նրա հուշ-
արձանը, — ասաց նա հանկարծ:

— Այ, սրան վայր ձգել — ցույց տվեց նա Ալեք-
սանդր Ա-ի ծիրանակիր կերպարանքը, — այս ամենը
կերպարանափոխել, — նա աչք ածեց այն ամենը, ինչ
վոր կար արձանի շուրջը, — և այստեղ՝ Տալստոյին, յեկե-
ղեցու գատապարտողին, ցարերի ջարդոտողին, հարստու-
թյան, սիփականատերերի, ճոխության մտրակողին...

Յեկ Վլադիմիր Իլյիչը սկսեց վոգեորությամբ խո-
սել Տալստոյի մասին, վորին մենք քիչ ենք ճանաչում,
վորը դասակարգայնորեն անշուշտ մերը, չե, սակայն
վորն իր ժամանակակից իրականության հանճարեղ,
անխնա վերլուծմամբ տվել ե ժողովրդական կյանքի
խորաթափանց և ցնցող պատկերների զարմանահրաշ
նմուշներ...

Մենք անցանք Ռւսակենսկի տաճարի առաջից և շու-
տով վերադարձանք Ժողովրդական ժողովությամբ:

Բազմիցս անգամ յես առիթ եմ ունեցել լսելու Վլա-
դիմիր Իլյիչից այն մասին, վոր մեզ անհրաժեշտ ե ուշի-
ուղով վերանայել Լ. Ն. Տալստոյի բոլոր յերկասիրու-
թյունները և բացի լիակատար ակադեմիական հրա-
տարակությունից, լույս ընծայել նրա բազմաթիվ պատ-
մվածքները, հողվածները, հատվածները առանձին բրո-
ցուրներով և գրքույկներով ու տարածել նրանց հար-
յուր հազարավոր որինակներով ամեն տեղ, ինչպես
զյուղացիների, նույնպես և բանվորների մեջ։ Դեռևս
1918 թվին, անմիջապես նրանից հետո, յերբ Խորհ-
ուրդային կառավարությունը փոխադրվեց Պետրոգրադից
Մոսկվա, Վ. Գ. Չերտկովի, — վորին Լ. Ն. Տալստոյը
հանճարաբել եր իր գրվածքների լիակատար հետիմահ
հրատարակությունը, — առաջարկին ի պատասխան Վլա-
դիմիր Իլյիչը կարգադրեց այդ խնդիրն ամբողջովին

կարձ ժամանակում դնել Լուսժողկոմի կոլեգիայում,
վորտեղ այդ խնդիրը հենց այն ժամանակ սկզբունքո-
րեն բարեհպատճ մտքով եր վճռվել և ինչպես հայտնի
յէ, ներկայումս իրականանում ե, շնորհիվ Ժողովրդական
հատուկ վորոշման։

Վլադիմիր Իլյիչը ինչպես և Գ. Վ. Պլեխանովը, շատ
եր սիրում կարդալ Լև Նիկոլայիչի գրվածքները և
նույնիսկ ժամանակ եր գտնում կարդալու Լև Նիկոլա-
յիչի նամակների և հուշատեարերի հատորները, վո-
րոնք այդ ժամանակ արգեն լույս եցին տեսել:

Քննադատորեն վերաբերվելով Լ. Ն. Տալստոյի փի-
լիսովայությանը, համարելով, վոր չարին չնակառա-
կելու, պարզանալու (օրոք են) և նրա այլ քարոզներն
անկասկած ուեակցիոն են, Վլադիմիր Իլյիչն այստեղ իւ
կարողանում եր խորը անալիզով մոտենալ հանճարեղ
արվեստագետի մտքերի, պատկերների և հայացքների
ամբողջ սիստեմին։

«Լենինը և Տալստոյը» Վ. Բոնչ-Բըույկիչի:
Հիշողությունները վերաբերում են 1918 թվի գարնանը։

ԳՈՐԿՈՒՆ ԳՐԱԾ ԽԱՍՊԱՆԵՐԻՑ

... Յես չգիտեմ, ի հարկե, թե ըստ ամբողջի ինչ-
պես և ինչ գուրս կզար ձեզ մոտ * Բացի այդ, յես
դառնում եմ, վոր արվեստագետն իր համար կարող ե-
շատ ոգտակար բաներ քաղել ամեն մի փիլիսոփայու-
թյունից: Վերջապես, յես միանգամայն և անոպայման
համաձայն եմ այն բանին, վոր գեղարվեստական
ստեղծագործության հարցերում խոսքը ձերն ե**: Ի,
վոր այդ տեսակի հայացք քաղելով թե՛ ձեր գեղար-
վեստական փորձից, և թե հենց թեկուզ իդեա-
լիստական փիլիսոփայությունից, դուք կա-
րող եք գալ այնպիսի յեղակացությունների, վորոնք
բանվոր դաստակարգին ահագին ոգում կբերեն:

25 Գիւղով, 1908 թ.

իսկ ճեղափոխական գրողի ճամար Ռուսաստանում (Նոր Ռուսաստանում) թափառելու հնարյակորությունը՝ կնշանակի հնարյակորություն՝ ճետահարյուր անգամ ավելի խփելու Ռումանոֆլեբրին և կոմպանիային...

10 մարտի 1913թ. «Լենինյան ժողովածու» 1

* Գրված և Գորկու մեղ Հասած այն հոգվածի առթիվ, զո՞ր բատ յերեսութիւն արտացոլում եր Գորկու տարածայնութիւնները պահենենք նետ՝ փերիսափայության բնագավառում: Ա. Դ.

... Իզուր են ջանում բուրժուական թերթերը։ Ըս-
կեր Գորկին չափաղանց ամուր և կապվել իր հսկա
գեղարվեստական յերկերով Ռուսաստանի և ամբողջ
աշխարհի բանվորական շարժման հետ, վորպեսզի նրանց
պատասխանի վոչ այլ կերպ, քան արհամարհանքով։

«Պըլետարիյ» № 50, 28/XI—1909 թ. (անստորագիր):

«ՀՐԱՄԱՐԱԿԱԽՈՍԻ ՆՈԹԵՐԻՑ» **

... Մենք այժմ պետք ե քննենք նոր սլաշտվորմի յերկրորդ որիգինալ զիճը:

Դա—նոր խմբակի հրապարակած ինչդիրն եւ «ստոլ-ձել» և «տարածելը մասսաների մեջ նոր, պլութարա-կան կոլտուրան — զարգացնել պլութարական գի-տությունը, ամրացնել իսկական ընկերական հարա-բերություններ պլութարական միջավայրում, մշակել

* Առաջնորդմ. կուսակցությունից:

** Հոգվածը կրված և „Современное положение и задачи
партии“ ըլքոյուրի առնչությամբ (Մի խումբ բայց կենսելի մշա-
կած պլատֆորմը, „Վորեա“ Խմբակի հրատ.), „Վորեա“ Խմբակ՝
15 հոգուց բաղկացած (Մ. Գորկի, Ս. Լունաչարսկի, Ս. Բոդրոցով,
Ֆ. Կալինին, Մ. Պակրովսկի, Գ. Ալեքսեյնսկի և ուր.) արտացոլում
եր այն փելիսով փայտական (մախիզմ) և տակտիկական (ատղավիզմ)
շեղությունը բոյլշեվիզմից, վորոնք կուսակցության մեջ ծագել ելին
1907 թ. և հետագա տարիների սեալիքիայի շնչառում:

Մատիրմը — մի փորձ և հաշտեցնելու սպա-օգութիւնը և
եալիստական վելիսոփայությունը՝ մատերիալիստական մաքր
ութեռիայի հետ (ավելի մանրամասն աես լենինի «Մատերիա
զմ և եմադիրուկրիստյանութ-ը»):

Ատղավիստները (отзовисты) пեակցիոն Յ-ըդ զնապաման լուսավորության մայլից սոց.-դեմ. պատղամավորներին յետ կանչելու կողմնակից ներին ելին:

պրոլետարական փիլիսոփայություն, ուղղել արվեստը դեպի պրոլետարական ձգտումներն ու փորձը:

Բոլորին հայտնի յէ, վոր իրականում «պրոլետարական փիլիսոփայության» տակ նկատի յե ունեցված հենց մասի դմբը:

«Պրոլետարական կուլտուրայի» մասին բոլոր ֆրազները գործով քողարկում են հենց պայքարն ընդեմ մարքսիզմի: Նոր խմբակի «որիգինալությունն» այն ե, վոր նա կուսակցական պլատֆորմի մեջ փիլիսոփիայությունն մտցրեց, չասելով ուղղակի, թե նա փիլիսոփայության մեջ իսկապես վրա հոսանքն ե պաշտպանում:

Ասենք, չեր կարելի ասել վոր ամբողջապես բացասական և հանդիսանում այն ռեալ բովանդակությունը, վոր ունեն պլատֆորմի առաջ ըերած խոսքերը: Նրանց տակ ծածկված ե նաև վորոշ դրական բովանդակությունն: Այդ դրական բովանդակությունը կարելի յե արտահայտել մեկ բառով — Մ. Գորկի:

Իրոք, ինչու թագցնել այն փաստը, վորի մասին արդեն ճղավեց բուրժուական մամուլը (հերյուրելով և այլանդակելով այն), վոր Մ. Գորկին նոր գրուպպայի կողմանիցներին և պատկանում: Իսկ Գորկին՝ անպայման պրոլետարական արվեստի խոշորագույն ներկայացուցիչն ե, վոր շատ բան ե արել նրա համար և ավելի շատ բան կարող ե անել: Սոցիալ գեմոկրատական կուսակցության յուրաքանչյուր ֆրակցիա իրավամբ կարող ե պարձենալ Գորկու՝ իրեն պատկանելով, սակայն այդ հիման վրա պլատֆորմայի մեջ դնել «պրոլետարական արվեստը», նշանակում և այդ պլատֆորմային տալ աղքատության վկայական, նշանակում և իր գրուպպան հանգեցնել մի գրական խմբակի, վորն ինքն իրեն «հեղինակավորության» մեջ և մերկացնում:

...Սակայն հենց «վակերյողականները» հեղինակությունների հետ լավ չեն վարդում: Գորկին — հեղինակությունն ե պրոլետարական արվեստի ցեխում, դա անվիճելի յէ: Փորձել «ոգտագործել» (անշուշտ գաղափարական իմաստով) այս հեղինակությունը՝ մախիզմը և ատզավիզմը ամրապնդելու համար, նշանակում ե տալ մի նմուշ այն բանի, թե ինչպես չպետք ե վարվել հեղինակությունն երի հետ:

Պրոլետարական արվեստի գործում Մ. Գորկին մի հսկայական պլյուս ե, չնայած, վոր նա համակրում է մախիզմին ու ատզավիզմին: Սոցիալ-դեմոկրատական պրոլետարական շարժման զարգացման գործում այն պլատֆորման, — վորը կուսակցության միջից առանձնացնում ե ատզավիստների և մախիստների խմբակը, վորպես հատուկ խմբակային խնդիր, առաջ քաշելով իրը թե «պրոլետարական» արվեստի զարգացումը, — հանդիսանում ե մինուս, վորովհետև այդ պլատֆորման խոշոր հեղինակության գործունեյության մեջ ցանկանում ե հաստատել և ոգտագործել ճիշտ հենց այն՝ ինչ հանդիսանում ե նրա թույլ կողմը, ինչ վոր՝ վորպես բացասական մեծություն՝ մտնում ե նրա կողմից պրոլետարիատին տրվող ահազին ոգտի գումարում:

«Дискуссионный листок» № 1, 19/6 մարտի 1910 թ.

«ՆԱՄԱԿՆԵՐ ՀԵՌՎԻՑ»

4-րդ նամակ (25/12 մարտի 1917 թ. Յուրիի)

...Տողերիս գրողն առիթ ե ունեցել Կապրի կղզում Գորկու հետ ունեցած տեսակցությունների ժամանակ նախազգուշացնել և կշտամբել նրան իր քաղաքական սխաների համար: Գորկին հետ եր մղում այդ կշտամբանքները իր աննմանելի սիրալիր ժպիտով և պարզա-

սիրտ հայտարարումով՝ «Յես գիտեմ, յես վատ մարք-սիստ եմ: Յեկ հետո, մենք, բոլոր արվեստագետներս, փոքր ինչ «շաշ» մարդիկ ենք»: Հեշտ չե այդ բանի դեմ վիճելը»:

Կասկած չկա, վոր Գորկին վիթխարի գեղարվեստական տաղանդ ե, վոր ամբողջ համաշխարհային պրո-լետարական շարժմանը շատ ոգուտ ե բերել և բերելու յի: Սակայն ինչու յի Գորկին քաղաքականությունից բռնում*:

«Լենինյան ժողովածու» II.

ԺՈՂՈՎԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՆ

I

«Վաղիմիր Իլյիչը Գորկուն գնահատում եր վոչ միայն վորպես նոր հեղափոխական Ռուսաստանի ամենամեծ արվեստագետի: Լենինը Գորկու մեջ տեսնում եր ընդհանուր գործի մեծ դաշնակցին, զինակցին, վոր կովում ե այլ զենքով, սակայն մարտնչում ե նույն թշնամու դեմ և միենալոյն նպատակի համար: Գորկու զենքը — գեղարվեստական խոսքը — Վաղիմիր Իլյիչը շատ բարձր եր գնահատում և ահագին նշանակություն եր տալիս նրան: Ավելի ևս խստաբորբոք եր լինում Վաղիմիր Իլյիչը, յեր նրան թվում եր, վոր այդ զենքը ճիշտ չե ուղղվում, վոր դաշնակցը նշանից վրիպում ե: Ինչքան ավելի բարձր եր գնահատում Վաղիմիր Իլյիչը Գորկու ույժը, այնքան ավելի յեր ուղում տեսնել Գորկուն իր կողքին՝ ընդհանուր պայ-քարում, այնքան ավելի ուշագիր եր վերաբերվում

* Քրված ե Մ. Գորկու՝ հեղափոխության սկզբում բռնած անօ-բոշ գերքի առնչությամբ: Տես ընկ. Մակինի հիշողությունները (էջ 111):

նրա գրական-քաղաքական լուրաքանչյուր յելույթին, այնքան ավելի հոգատարությամբ եր նախազգուշաց-նում նրան այն գաղափարական ճահճուտներից, վո-րոնք պատում են սլորետարական իդեոլոգիայի մշակ-ման ուղին:

Սակայն Վլադիմիր Իլյիչը վոչ միայն գնահատում եր Գորկուն, նա պարզապես սիրում եր նրան, վորպես մի խոշոր մարդու, դուրս յեկած հենց այն «ստորին խավե-րից», վորոնց հաղթանակի մեջ Վլատ. Իլյիչը մարդկու-թյան պատմության հերթական ետապն եր տեսնում»:

«Առաջարան լենինի և Գորկու նամակազգության»
Լ. Բ. Կամենեկ.

II

Պետք ե ասել, վոր Լենինը պարզ գիտակցում եր, վոր ամեն ինչ ել պրոլետարական չե Գորկու մոտ, բայց նա գտնում եր, վոր մի ինչ վոր հեղափոխական-պրոլետարական կարևոր հիմնական հոսանք կա նրա մեջ:

«Պրոլետարական արվեստի զործում Մ. Գորկին մի ահազին պլյուս ե, չնայած վոր, նա համակրում ե մախիզմը և ատզավիզմը»:

«Գորկին — պրոլետարական արվեստի զործում հե-ղինակություն ե, դա անվիճելի յե, — ասում ե ապա Վաղիմիր Իլյիչը: — Փորձել ոգտագործելու այդ հե-ղինակությունը՝ մախիզմը ամրապնդելու համար — զա մի նմուշ ե այն բանի, թե ինչպես չի կարելի վարփել այս հեղինակության հետա: Մի այլ տեղում լենինն ասում ե, թե Գորկին առհասարակ շատ թույլ բնավո-րության տեր մարդ ե, վոր չի կարող կայուն գիծ տանել: Անձամբ ինձ հետ ունեցած զրույցի ժամանակ, արդեն ավելի ուշ, լենինն ասում եր, վոր Գորկու

բնության արտիստականությունը ինքնին անհնար և դարձնում նրա համար կայունությունը, վոր նա չափազանց լարված նյարդերի տեր և լավ քաղաքագետ լինելու համար, վոր Գորկու պես զգայուն նյարդեր ունեցողը պետք ե ապրի քաղաքական ընդհարութեցից հեռու, և նա ինքն եր խնդրում Գորկուն, գնալ արտասահման: * Բայց դա չեր խանգարում, վոր նա Գորկուն պրոլետարական գրող համարեր: Նա միայն գտնում եր, վոր նրա պրոլետարական տեսնդեցները մանր-բուրժուականով են փսորված: Գորկին պրոլետարական գրող ե՝ խիստ մանր-բուրժուական խառնուրդով:

«Ենինը և նրա վերաբերմունքը դեպի գիտությունն ու արվեստը». Ա. Գ. Լոնտչարսկու.

III

Միտս են գալիս մի շարք փաստեր, զրույցներ ու միջադեպեր, վորոնք կապել են Վլադիմիր Իլյիչին Գորկու հետ հեղափոխության առաջին որերին և վկայում են այն մեծ բարեկամության և մտերմության մասին, վոր կար մեր եպոխայի այս յերկու ականավոր մարդկանց մեջ:

Հիշում եմ, թե ինչպես Վլադիմիր Իլյիչի տուած Գորկու հարցը ծառացալ 1918 թվին:

Հարցը վերաբերվում եր նրա ճեռքով հրատարակվող «Новая жизнь»-ին, վոր կիսաթշնամաբար եր վերաբերվում մեզ և դարձել եր բայլընիդմի մեջ «կուլ-

* «Գորկու մասին» ժողովածույի („Օ Գորյոկոմ”, Ռուսական 1928) մեջ Պ. Ս. Կողանը, վոր այցելել եր Ա. Մ.-ին Կապրի կղզում, առաջ ե բերում Գորկու խոսքերը. — «Ենթայ յես Ռուսաստանում չեմ: Ենինն ինձ ստիպեց գնալ Գերմանիա բժշկությունը Այնտեղ, սանատորիայում բժիշկներն անհրաժեշտ գտան իմ բնակությունը հարավում»:

Ա. Դ.

տուբայիք սպառնալիք տեսնող ձախ-արմատական (ռազմիկալ) ինտելիգենցիայի կենտրոնը:

Այս հարցի վերջնական լուծման համար դիմել եյնք Վ. Ի.-ին:

Մեր առաջ կանգնած եր բանվորական պետության գաղափարականորեն անխնա ղեկավարը: Կամկածների վոչ մի ստվեր, դեն եյին նետված ամեն տեսակ անձնական համակրություն ու մտերմություն:

— Ի հարկե, «Եռվայա ժիգնը» պետք ե փակել: Այժմվա պայմաններում, յերբ պետք ե ամբողջ յերկիրը բարձրացնել հեղափոխության պաշապանության համար, ամեն մի ինտելիգենտական հուետեսություն չափազանց ֆլասակար և: Իսկ Գորկին մեր մարդն ե... Նա չափազանց կապված ե բանվոր դասակարգի և բանվորական շարժման հետ, նա ինքը դուրս է յեկել «ստորին խավերից»: Նա անպայման կվերադառնա մեզ մոտ... Դա տեղի ունեցավ նրա հետ 1908 թվին, «ատզավիստների» ժամանակ... Պատահում են նրա հետ այդպիսի քաղաքական դիգգագներ...

Մի քանի անգամ Վ. Ի. Իլյիչը վստահորեն կրկնում եր, վոր Գորկին անպայման կվերադառնա մեզ մոտ:

Նա Գորկու մասին շատ բարեյացակամ տոնով եր խոսում, առանձնահատուկ քնքությամբ, ինչպես իր մոտիկ մարդու մասին:

Ֆեվ Վլադիմիր Իլյիչը լավ եր ձանաչում Գորկուն. իսկապես Գորկու նկատմամբ նա չսխալվեց: Արդեն տարեվերջում Գորկին սկսեց ընդհուպ աշխատել մեզ հետ և անմոռանալի 19 թվականը Ալեքսեյ Մաքսիմովիչին գտավ յեռացող լարված աշխատանքի մեջ՝ մի շարք կուլտուրական ասպարեզներում:

Վլադիմիր Իլյիչը միշտ խիստ պնդելով, պահանջում եր կատարել այն բոլորն, ինչին նա հավանու-

թյուն եր տալիս Գորկու առաջարկներից և միշտ խորհուրդ եր՝ տալիս՝ բոլոր գրքային և գրական հարցերէ լուծմանը մասնակից անել Ալեքսեյ Մաքսիմովիչին։

Շատ մեծ ուշադրությամբ Վլադիմիր Իլյիչը տեղիկանում եր այն մասին, թե ինչպես են տարածվում Գորկու աշխատությունները և միշտ առում եր, թե հարկավոր ե Գորկու բոլոր գործերը հրատարակել։

Նա մեզանից պահանջում եր անհապաղ ուղարկել Գորկու յուրաքանչյուր նոր լույս տեսած գիրքը։

Յերբ լույս տեսան Գորկու հիշողությունները Տալստոյի մասին, մենք իսկոյն ուղարկեցինք այդ գըրքույնը Վլադիմիր Իլյիչին։ Իլյիչը մեզ հետո պատմում եր, վոր նա հենց նույն գիշերը մի շնչում կարդաց գիրքը, վորը նրան չափազանց դուր եր յեկել։

— Դուք զիտե՞ք, — ասում եր նա մեզ, հայտնելով իր տպավորությունները, — Տոլստոյը Գորկու մոտ կենդանի յե ստացվել։ Թվում ե, վոր այդպես ազնիվ ու համարձակ ձևով Տալստոյի մասին վոչ վոք չի գրել։

Մոսկվայում շատ խոսակցությունն կար ինտելիգենցիայի այն բաղմամարդ միտինգի առնչությամբ, վոր տեղի յեր ունեցել Լենինգրադի ժողովրդական տանը։ Գորկու նախագահությամբ։ Այդ մեզ հարած ինտելիգենցիայի առաջին խորհրդային պայծառ դեմոնստրացիան եր։

Գորկուն մեծ ովացիա յեր սարքվել և Վլադիմիր Իլյիչն ասել եր Ռիկովին և Բուխարինին, թե մեզ մոտ, Մոսկվայում ևս անհրաժեշտ ե Գորկու հետ միասին նույն տեսակ մի միտինգ կազմակերպել։

«Լենինը և Գորկին»։ Բ. Մակենի։

IV

Գորկու հետ ունեցած իր ծանոթության ամբողջ ընթացքում, վորը շարունակվում եր յերկու տասնյակ տարուց վոչ պակաս, Լենինը բարձր եր գնահատում և ջերմ սիրում եր Գորկուն։ Լենինի դեպի Գորկին ունեցած նման վերաբերմունքը մենք նկատում ենք այն շրջանում, յերբ նրանք աշխատում եյին միտենդ, նայև այն մոմենտներին, յերբ Գորկին համընթաց չեր գնում Լենինի հետ։

Յերբ Գորկին Լենինի հետ համաձայն եր լինում վոչ ամբողջապես, Լենինն անկեղծորեն վշտանում եր և քիչ յեռանդ և ապացույցներ չեր գործադրում Գորկուն համոզելու համար։ Նա բանակովում եր նրա հետ նամակագրությամբ, բայց նրան հարգելուց չեր դադարում։

Լենինը միշտ ուշադրությամբ լսում եր Գորկու քննադատությունը մեր կուսակցական հրատարակությունների նկատմամբ։ Միշտ նրա հետ խորհրդակցում եր այս կամ այն պարբերական թերթի, լրագրի հիմնման ժամանակ, միշտ աշխատում եր, վոր նա մասնակցի նրանց, մասնակցության եր հրավիրում բանվոր-պրոպագանիստների դպրոցին։ Մենք առաջ ենք բերում Լենինի նամակներից մի քանի հատվածներ, վորոնք բնութագրում են այդ հարաբերությունները։

«...Նախագծում ենք հոգուտ բաժանորդագրության ուժեղացրած ազիտացիա զարգացնել բանվորների մեջ, վրաբեսովի հավաքված դրամներով ամրապնդենք թերթը* և լայնացնենք, ապա թե վոչ Դումայի սկսվելուն պես հոդվածների համար ամեներն տեղ չի մնում։ Հույս ունեմ, վոր դուք ևս կմասնակցեք բաժանոր-

* Խոսքը «Պրավդայի» մասին եւ
8-918

դագրության ագիտացիային՝ թերթը «գուրս քաշելու» համար, ի՞նչ ձեռվկ՝ Յեթե կա մի հեքիաթ կամ մի վորեն հարմար բան, ապա այդ մասին յեղած հայտարարությունը շատ լավ ագիտացիա կլինի: Յեթե չե, խոստում ուղարկեք՝ տալու մասին՝ մոտ ապագայում և հենց 1913 թվին: Վերջապես թեկուզ ձեր մի յերկտող նամակը բանվորներին՝ ակտիվ կերպով ոգնելու (բաժանորդագրությամբ, տարածելով, ժողովարությամբ) բանվորական թերթին, նույնպես հիանալի ագիտացիա կլիներ։ (23/XII-1912) »... «Անլեզալից և «Պրավդայից» պետք ե սկսելինք մենք: Սակայն դրա վրա կանգ առնել չենք ուզում: Մրա համար ել մեկ վոր դուք ասեցիք, թե «ժամանակն ե մեր ժուրնալն ունենալու» ապա թույլ տվեք սույն խոսքերի համար պատասխանի կանչել կամ այս րոպեյիս նշել դրամների վորոնման պլանը մի հաստ ժուրնալի համար՝ այս ինչ ծրագրով, այս ինչ խմբագրությամբ, աշխատակիցների այս ինչ կազմով, կամ թե հենց այս պլանով սկսել «Պրոսվեչենիյե-յի* ընդլայնումը»... (I-1913 թ.):

«... Զափալանց ուրախացրեց ինձ և մեզ բոլորիս, վոր դուք ձեռնարկում եք «Պրոսվեչենիյե-յին: Իսկ յես, — խոստովանեմ, — մեկ մտածում եյի, հենց վոր գրեմ մեր փոքրիկ պարբերական թերթիկի կամ թերթկիկի մասին, Ա. Մ.-ի հավասը կրոբչի: Զդշում եմ, զդշում նման մտքերի համար: Այ, խսկապես ինչ հրաշալի կլինի, յեթե քիչ-քիչ մոտ բերենք բելետրիստներին և շարժենք «Պրոսվեչենիյեն», ձրաշալի յե: Ընթերցողը նոր ե, պրոլետար, ամսագիրը եժան կդարձնենք, կսկսենք բելետրիստիկա լույս ընծայել»: (II-1913) «... ինչպես են հոդվածի կամ պատմվածքի

* «Պրոսվեչենիյե» բոլեկիյան լեգալ ամսագիր եր, վոր լույս եր տեսնում Պետերբուրգում 1911 թ. դեկտեմբերից:

գործերը «Պրոսվեչենիյե» մայիսյան գրքույկի համար: Իւ. ձ այնտեղից գրում են, վոր կարելի յեր 10-15 հազար հրատարակել (այ թե վանց ենք քայլում), յեթե ձեզանից մի վորեն բան ունենայիք: Գրեք, կլինի արդյոք: Իսկ հետո արտասպում ե «Պրավդան» և ստացվում է 40 հազար ընթերցող: Այս... «Պրոսվեչենիյե» զործերը կարող եյին լավ գնալ թե չե սատանան ատանի, վոչ մի ամսագիր չկա բանվորների համար, ո. գ. համար, հեխափոխական դեմոկրատիայի համար, զգելի անպիտք բաներ են սկսել լույս տեսնել...» (V-1913) «... Տեսնվելը մեզ հարկավոր ե շատ: «Պրավդայի և փակվելը սոսկալի ծանր դրություն և ստեղծում: Գուցե մի վորեն բան մտածենք: Հետո Բեռլինում դուք կարող եյիք շատ բան անել մեզ համար, այսինքն «Պրավդայի» համար: Ուստի շատ խնդրում եմ, իսկույն և եթ մի յերկու խոսք գրեք այն մասին, հնարավոր ե արդյոք մեր տեսակցությունը այստեղ կամ մատնանշված քաղաքներում ողոստոսի սկզբին: Յեթե հնարավոր չե, յես ձեզ այն ժամանակ կգրեմ ավելի մանրամասն բոլոր գործերի մասին, մատնապես դպրոցի* մասին (կազմակերպչի պրավալը մեզ սոսկալի կոտրեց: ուրիշին ենք վորոնում): (25 VIII-1913թ.): «... Ի՞նչ նորություններ կան ձեզ մոտ «պլանների» մասին: Գրեք: Իսկ մեր դպրոցի բանվորներին ել պատասխանեցեք, կավ տղաներ են: Մեկը պոյեան ե, խեղճը շարունակ վոտանավորներ ե գրում և չունի դեկավարող, ոգնական, դաստիարակ և խորհրդատու» (IV-1911 թ.).

Առաջ բերված կտորները անսովոր կերպով ընորոշում են իրեն կենինին և նրա վերաբերմունքը դեպի

* Կուսակցական բանվորական դպրոցը կապի կզկում:

Գորկին, Նա միշտ աշխատում եր Գորկուն պահել
բոլոր կուսակցական գործերին տեղյակ, բացառություն
չանելով տմենակոնսպերատիվները:

Լենինի բարեկամական ջերմ վերաբերմունքը դեպի
Գորկին արտացոլվում եր նրա նամակներում ևս
Առաջ բերենք միայն միքանի հատվածներ. «...Այդ
ինչ եք, սիրելիս, ձեզ վատ պահում: Հալից ընկել
եք, հոգնել, նյարդերդ ցավում են: Այդ միանգամայն
անկարգ բաներ են: Չե՞ վոր Կապրիյում, այն ել ձմեռը,
յերբ հավանական ե, ժողովուրդ քիչ ե լինում, հար-
կավոր եր կանոնավոր կյանք վարել, Անինամ եք,
ինչ ե, դուք ձեղ բաց եք թողել: Հավատացեք; Լավ չե-
ինքներդ ձեղ ձեռքերդ առեք և սահմանեցեք ավելի
խիստ «պրիժիմ» (ուժիմ), ճիշտ: Ներկա ժամանակնե-
րում հիվանդանալը բոլորվին անթույլատրելի բան ե
(II-1913)... «Այն, ինչ գրում եք ձեր հիվանդության
մասին, ինձ սոսկալի վրդովեցնում ե: Լավ եք վար-
վում արդյոք դուք, ապրելով առանց բժշկության
Կապրիյում: Գերմանացիների մոտ կան հրաշալի սա-
նատորիաներ, վորտեղ բուժում են և միանգամայն
լավացնում թոքային տկարությունները, հասնում են
սպիցման, լավ կերակրում են, հետո սովորեցնում
են կանոնավոր կերպով ցրտին, կոփում են մըսելու
դեմ, և բաց են թողնում պիտանի, աշխատունակ մար-
դիկ» (30/IX-1913 թ.):

Այսպիսի վերաբերմունք ուներ Լենինը դեպի Գոր-
կին մինչև իր կյանքի վերջին որերը: Յես 1919 թ.
ամառը հաճախ առիթ եյի ունենում Մոսկվայից Պի-
տեր գնալու: Ամեն անգամ մտնում եյի Գորկու մոտ:
Մի Գորկին գրգռված պատմում եր ինձ մի քանի
ընկերների գործած հիմարությունների մասին: «Հաս-
կանում եք, փչացնում են լավ գործը», Յես գիտեյի,

վոր այն միջոցին «կատու յեր անցել» Ալեքսեյ Մաքսի-
մովիչի և Վլադիմիր Իլյիչի միջև ու նրանք այդ ժա-
մանակ իրար չեյն գրում: Սակայն յես ուղղակի նրան
ասի. «Ինչու գուք այդ մասին չեք գրում Իլյիչին. Նա
վոնց վոր հարկավոր ե, ձիգ կտար նրանց, իրենց տեղ-
ները կնստացներ և սխալները կուղղեր: Զեզ հարկա-
վոր և գնալ Իլյիչի մոտա»: Գորկին քիչ արտմեց ու
կարձ լուռթյունից հետո վճռական առաց: «Այս, յես
շուտով պատրաստվում եմ Մոսկվա գնալու, հասկա-
նալի յե, վոր նրա մոտ կանցնեմ»: Յես Մոսկվա վերա-
դառնալով, նախազգուշացրի Իլյիչին և նա շատ ուրա-
խացավ այդ հանդիպումի համար: Յես շատ եյի ուղում
ներկա լինել այդ նոր տեսակցությանը: Մի քանի որից
Գորկին իրոք յեկալ և յես, նրա հետ միասին ուղևոր-
վեցի Վլադիմիր Իլյիչի մոտ: Նրանք լուռ գրկախառնվե-
ցին և յերկար պինդ համբուրգեցին: Յես Ալեքսեյ Մաք-
սիմովիչը աշքերին տեսա արցունքներ, չհաջողվեց
թագցնել այդ նաև Վլադիմիր Իլյիչին: Յես սենյակից
դուրս յեկա: Նրանք յերկուսով յերկար զրուցում եյին,
և հին մտերմությունը վերստին նորոգվեց:

Լենինի և Գորկու փոխհարաբերությունները մեծ հե-
տաքրքրություն են ներկայացնում վոչ միայն նրանց
անձնավորության, այլ և մեր կուսակցության պատ-
մության ուսումնասիրության համար: Այդ պատճա-
ռով մեր կուսակցության պատմաբանների լուրջ ին-
դիրն ե — այդ հարաբերությունների լուսաբանմանը
հատուկ ուշադրություն դարձնել:

«Լենինը Գորկու մասին» Յա. Գանեցկու:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻՑ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

I

... Դեռևս նեկրասովը ու Սալտիկովը խրատ եյն տալիս ուսու հասարակությանը կրթված ճորտատեր կալվածատիրոջ կոկված և ոժված արտաքինի տակ տարբերել նրա գիշատիչ շահերը, սովորեցնում եյն ատել նման տիպերի կեղծավորությունն ու անգթությունը...*

„Պամյատ գրաֆ Գօյդեն, („Գոլօս յանու, ժողով. 1907թ.)

* Վ. Ի. ԼԵՆԻՆ գեղի Ն. Ա. Նեկրասով և Մ. Յ. Սալտիկով-Շենդին ունեցած զրական վերաբերմունքի մասին վկայում են ստորև գետեղած մի շարք հիշողություններ: Միջանկյալ պետք են նշել, վոր Վ. Ի. իր գրական, հրապարախոսական գործերում հաճախ դիմել և գեղարվեստական գրականության գեմքերին: Հաճախ են ոստազործում Վ. Ի. կողմից Շ է գ ը ի ն ը (Յուղուշկա Գալավլյով վորպես նենց յերեսպաշտության սիմվոլ, Ուզրյում-Բուրչելը — ինքնակալության եմբլեմա, Բալալյակիների դատարկախոսությունը ևն), Գ. ո գ ո ւ ը («Ենրագլու Մանիլովը», «Բանված նոզգերի յուրահատուկ — հպարտ տեսքը», «մենշևիկ իվան իվանովիչը, վոր մի որ անել եր կադես իվան նիկիֆորվիչին» և այլ նման որինակ Տ ու ը գ ե ն ե ը («Արկադիյ նիկոլայիչի, բարեկամ, այդպես գեղեցիկ մի խոսիք, հիշատակւմներ «Պորտորիփ որագրից», «Ասյա»-ից, «Ծուռիւ-ից»՝ Արձակ վոտանավորներից), Գ ր ի բ ո յ ե գ ո վ ը «լիբերալների մոլչալինյան իմաստությունը», «ինչ կասի կաղետական Մարյա Ալեկսեյինան», «անկարելույն չափ ստոր վարվելու Փամուսովյան պատրաստակամությունը», «Խելքից պատուհաս»-ից առանձին քառյակների մեջ բերում), Ն ե կ ը ա ս ս վ ը: Ավելի սակագ են հանդիպում ցիմատաներ կամ գործող անձանց մասին հիշատակումներ Պուշկինի և. Տալմաոյի, Կոխովի, Գ. Ռուպլինակու գրածներից և միայն յեղակի դեպքերում ոստազործում են՝ ես-

* * *

... Շշեղրինը մի ժամանակ կլասիկ կերպով ծաղրել եր Ֆրանսիային, կոմմունարների գնդակահարողներին, Ֆրանսիային, վոր սովում եր ուսու բանկիր բռնակալ-ների առջև, Ֆրանսիային, ուր հանրապետություն և առանց հանրապետականների: Ժամանակ ե նոր Շշեղրին ծնվելու, վորպեսզի ծաղրի Վասիլյեին* և մենաշկեներին, վորոնք պաշտպանում են հեղափսխությունը հեղափոխականների «բացակայությամբ», հեղափոխության «բացակայությամբ» լոգունգով... «Պիետանովը և Վասիլյեվը» («Պրոլետարիյ» № 11, հունվ. 7 1907թ.):

* * *

... Ավսոս, վոր Շշեղրինը չապրեց մինչև սուսական «մեծ» հեղափոխությունը: Նա յերեխ մի նոր գլուխ կավելացներ իր «Պարոնայք Գալավլյովներ» գրքում: Նա կպատկերացներ Յուղուշկային, վոր հանգստացնում ե ծեծված, ջարդված, սոված, ստրկացած մուժիկին...

«Հաղթանակող սոսորությունը կամ կադետացող ես-երնեւը» («Հափ Թխո» № 9, ապրիլի 4, 1907թ.):

* * *

... Մանավանդ անտանելի յե լինում տեսնել, յերբ այնպիսի սուրբյեկտներ, ինչպիսիք են Շշեղրետովը, Ստրովին, Գորեղեսկուլը, Խղոյքնը և այլ կադետական միարանությունը, բռնում են նեկրասովի, Շշեղրինի և այլոց փեշերից: Նեկրասովը ինքը թույլ լինելով, քելես, Շեղապիր, Մոլյեր, Վոլտեր, Դերժավին, Ռոստրոպիչ, Բեշետիկով, Զելյով, Ա. Դոլի, և. Անդրեյեվ, Սկիտալեց, Պետրով, Ա. Բարյոյուս, Վ. Մայակովսկի:

* Վասիլյեվ — աջ մենշևիկ:

տատանվում եր Զերնիշևսկու և լիբերալների մեջ, և
սակայն նրա ամբողջ համակրանքը Զերնիշևսկու կողմն
եր: * Նեկրասովը նույն անձնական թուլության հետեւ
վանքով մեղանչում եր լիբերալ հաճոյակատարությամբ,
սակայն ինքն իսկ դառնորեն լալիս եր իր «մեղերը»
և հրապարակորեն զգում եր նրանց համար:

Не торговал я лирой, но бывало,
Когда грезил неумолимый рок,
У лиры звук неверный исторгала
Моя рука...

(Հայերեն թարգմ. «Գեմ վաճառել յես քնարս, սա-
կայն յեղել ե, յերբ սպառնացել և անողորմ ճակատ-
գիրը, ձեռքս սխալ հնչյուն և հանել քնարից...»)

«Սխալ հնչյուն» — ահա այսպես եր անվանում նեկ-
րասովը իր աղատամիտ-հաճոյակատար մեղերը: ** Իսկ
Շեղբինը անխնա ծաղրում եր լիբերալներին և ընդ-
միշտ նրանց գրոշմեց ռատորության հարմար» «Փոր-
մուլյայով...

«Ենքս մի արշավանք դեմոկրատիայի դիմ» (1912):

II

...Սինկլիրը զգացմունքի սոցիալիստ և, առանց թեո-
րետիկ կրթության: Նա հարցը «հասարակ» կերպով և
գնում, վրդովկելով վերահաս պատերազմից և նրանից
փրկություն գործներով սոցիալիզմի մեջ... Միամիտ,

* Զերնիշևսկու մասին գնահատականները սխտեմատիկ զետեղ-
ված են „Լենին օ Չերնիշևսկու գրքում (կազմ. Արկ. Լոմակին,
ի. ի. Ստեղանով-Սկվարցովի խմբ. Ռուսպետհատ, 1928):

** Խորքը Մուրավյով-Ֆեղդիչի (Մորավյեվ-Վեշատել) պատվին
դրված ողաջի (ներող) մասին ե, փոր տպվել եր նեկրասովյան
«Սովետենիկ» ամսագրի 1866 թ. պարիլ ամսա համարում: Ողան
նեկրասովը գրել եր փակման սպառնակրից ամսագիրն պատերա-
համար (մանրամասն տես կ. ի. Պ. Զուկովսկու «Նեկրասով» գրքում
«Պoэт и палач» հոդվածը):

տեսականապես չմտածված, սակայն խորապես ճիշտ
նախադգուշացնում ե սոցիալիզմն ապականելուց և կոչ
ե անում դեպի հեղափոխական կոփվը: *

«Անգլիական պացիֆիզմը և անզինական անսիրակիությունը
տեսության նկատմամբ» (1914 թ.):

III

Մասսաների մեջ հեղափոխական գիտակցության
աճման ամենուրեք նկատվող մասսայական յերկույթի
հատկապես զննական հաստատումներից մեկը կարելի
յե համարել Սորի «Բարբյուսաի „Le feu“ («Կրակում»)
և „Clarté“ («Պայծառություն») վեպերը: Առաջինն ար-
դեն բոլոր լեզուներով թարգմանված և և տարածված
և Ֆրանսիայում 230.000 որինակի չափ: Բոլորովին
տգետ, իդեաներով և նախապաշարումներով ամբող-
ջովին ճնշված քաղքենու և մասսովիկի հեղափո-
խական դառնալը հատկապես պատերազմի ազդեցու-
թյան տակ՝ ցույց և արված արտասովոր ուժով տա-
դանդապիր և ճշմարիտ կերպով:

«III-րդ ինտերնացիոնալի խնդիրները» (1919 թ.):

IV

ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԳՐՔՈՒՅՑԿ

Դա — գրեթե մինչ խելացնորություն հասնող զայ-
րացած սպիտակ գվարդիական Արկադիյ Ավերչենկոյի
«Ճյուղի հոյեյ և սպիտակ գրքույցին և
(տպ. Փարիզ, 1921): Հետաքրքրական և դիտել թե ինչ-

* Դրված ե նշանավոր ամերիկացի գրող Ըստոն Սինկլիրի
(«Քիմմի Հիգինս»-ի, «100%»-ի և հեղինակը) «պատերազմի դեմ
մասնիքնետ»-ի առնչությամբ: Ըստոն Սինկլիրն իր համոզմունք-
ներով հետզհետե ավելի յե մոտենում կռմմունիզմին:

պես մի ատելու թյուն, վոր հասել և յեռման կետին,
առաջ և բերել այդ մեծատաղանդ գրքի թե ուշագրավ
ուժեղ և թե ուշագրավ թույլ տեղերը. Յերբ հեղինակը
իր պատմվածքները նվիրում է իրեն անհայտ թեմային,
դուրս և գալիս հակագեղարվեստական։ Որինակ այն
պատմվածքը, վոր նկարագրում է կենինին և Տրոցկուն
ընտանեկան կյանքում։ Շատ կլիներ, բայց նման չեն,
սիրալիք քաղաքացի Ավերչենկո։ Հավատացնում եմ
ձեզ, վոր ամեն մի, նույն թվում կնշանակի և ընտա-
նեկան կյանքում, կենինը և Տրոցկին շատ թիրություն-
ներ ունեն։ Միայն նրանց մասին տաղանդավոր ձևով
գրելու համար պետք է նրանց ճանաչել։ Իսկ դուք
նրանց չեք ճանաչում։ *

Թրա տեղ, գրքույկի մեծ մասը նվիրված է այս
թեմաներին, վորոնց Արկադի Ավերչենկոն շատ հրա-
շալի ծանոթ ե, ապրել ե, շատ և մտածել շատ և զգա-
ցել, թեվ զարմանալի տաղանդով նկարագրված են
հին կալվածատիրական և գործարանատիրական հա-
րուստ կշտացած և լափող Ծուսաստանի ներկայացուցչի
տպագրություններն ու տրամադրությունները։ Այս-
պես, իսկ հենց այսպես պետք և թվա հեղափոխու-
թյունը հրամանատար դասակարգերի ներկայացուցիչ-
ներին։ Հրաշունչ ատելությունը Ավերչենկոյի պատ-
մվածքները դարձնում ե մեկ-մեկ — և մեծ մասամբ —
ապշելու չափ պայծառ կան ուղղակի գերազանց բա-
ներ, որինակ „Տրավ պրимятая сапогами“^{**} — քաղա-

* Նկատելու յե, վոր իր զբքի յերկրորդ հբատարակության մեջ
Ավերչենին չեր գետեղել լենինի և Տրոցկու մասին պատմվածքը—
անկասկած Վ. Ի. — Քննահատականի տպակորության տակ: Ճիշտ է,
այդ պատմվածքը նա փոխարինել եր մի այլ վոչ նվազ բութ ցդա-
նակազ հեղափոխության թիկունքին:

** զԿոշիկներով կոխկրտված խռով:

քայիսական պատերազմն ամլրած ու ապրող յերեխաների հոգեբանության մասին։ Սակայն իսկական պաֆոսին հեղինակը հասնում է միայն այն ժամանակ, յերբ խոռում ե ուտեղլու մասին։ Ինչպես եյին ուտում հարուստ մարդիկ հին Ռուսաստանում, ինչպես եյին նախաճաշում Պետրովրագում, վոչ, Պետրովրագում չե, այլ Պետերբուրգում, 14 ոռուբլի հիսունով և 50 ոռուբլով են։ Այդ բանը հեղինակը ուղղակի հեղտասիրությամբ են կարագրում։ ահա այդ նա գիտե, ահա այդ նա ապրել ե և լավ զգացել, այստեղ ահա, նա սխալ թույլ չի տա։ Թործի գիտակցությունը և անկեղծությունը չափ ու սահմանից դուրս եւ

Վերջին պատմվածքի մեջ „Օսկոլки բազմության վճարությունը առաջարկված է նաև Հրիմում, Սևաստոպոլում նախկին սենատորը — «հարուստ եր, առատաձեռն լապեր ուներ»... «այժմ հրետանու պահեստում որպաշտագով փոխադրում են գասավորում և ոռումքեր» նաև «հակայական մետաղուրդիական այն գործարանի նախկին զիրեկատորը, վոր Վիքորզսկի կողմերում առաջինն եր համար լում: Այժմ նա կոմիսսիոն խանութի գործակատար են և վերջերս նույնիսկ վորոշ փորձառությունն են ձեռք բերել՝ կանանց կիսամազ կապուտները և բանկական պլյուշի արջուկները գնահատելու մեջ, վորում են կոմիսիայի»:

Յերկու ծերուկներն ել մտաբերում են հին պետեր-
ուրդյան մայրամուտները, փողոցները, թատրոնները,
հարկե «Մեղվեդ»ի, «Վենայի» և «Մալըի Յարոսլա-
վեցի» են կեր ու խումբ։ Յեվ հիշողություններն ընդ-
առավում են բացականչություններով՝ «Ի՞նչ ենք արել
ենք նրանց, ումն եյինք մենք խանգարում...», «Ի՞նչ ով-
ր նրանց այս բոլորը խանգարում...» «Ի՞նչո՞ւ նրանք
ուսաստանն այսպես...»

Արկադի Ավելչենկոն չի հասկանա թե ինչն: Բանվորներն ու գյուղացիներ հասկանում են ըստ յերեսյան, առանց գժվարության, և բացատրությունների կարիք չունեն:

Մի քանի պատմվածքներ, ըստ իս, արժանի յեն արտասովման: Տաղանդը պետք է խրախուսել:

«Պըավդա» № 263 22/XI—1921 թ.

V

... «Իզվեստիա»-յում յերեկ յես պատահաբար կարդացի քաղաքական թեմայով գրված Մայակովսկու — վոտանավորը: * Յես չեմ պատկանում այդ պոետական տաղանդի յերկրագուների թվին, թեպետ լիովին խոստովանում եմ այդ բնագավառում իմ վոչ կոմպետենտ լինելը: Սակայն վաղուց յես չեյի զգացել այնպիսի բավականություն՝ քաղաքական և վարչական տեսակետից: Իր վոտանավորում նա թունդ ծաղրում ե նիստերը և ծանակի յե յենթարկում կոմմունիստներին, վոր նրանք շարունակ նիստ են անում և գերանստում: Զգիտեմ ինչպես և բանաստեղծության իմաստով, բայց քաղաքականության մասին, վստահում եմ, վոր դա միանդամայն ճիշտ է:

Մետալիստների համառուսական համագումարի կոմիտեակցիայի նիստի ճառից. (6/III—1922 թ.):

* „Прозаседавшиеся“ („Известия ВЦИК“, 5/III—1922 թ. արտասոված է Վ. Վ. Մայակովսկու յերկերի ժողովածվի մեջ, Ռուսական 1928):

Վ. Ի. Լենին

ՌՈՒՍ ԼԵԶՎԻ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Խոհեր հանդատի ժամկեն, այսինքն ժողովակերպում ճառեր լուելիս) *

Ուստի լեզուն մենք փչացնում ենք: Ոտար բառերը գործ ենք ածում առանց հարկի: Սխալ ենք գործածում նրանց, ինչու ասել ոգեթեկաներ», յերբ կարելի յե ասել թերություններ, կամ պակասություններ, կամ բացեր:

Ի հարկե, յերբ մի մարդ, վոր նոր ե սովորել կարդալն առնասարակ և հատկապես թերթեր կարգալը, սկսում ե ջանքով կարդալ այն, նա ակամա յուրացնում ե լեզվի լրագրական դարձվածքները: Սակայն մեզանում հենց լրագրական լեզուն ևս սկսում ե փշանար: Ցեթե նոր կարդալ սովորածին ներելի յե, վորպես նորույթ, ոտար բառեր գործածելը, ապա գրականագետներին այդ ներել չի կարելի:

Ժամանակը չի արդյոք առանց հարկի ոտար բառեր գործածելու դեմ պատերազմ հայտարարել:

Խոստովանում եմ, վոր յեթե առանց կարիքի ոտար բառեր գործածելն ինձ զայրացնում ե (վորովհետեւ դա

* Վ. Ի. Լենինի «Խոհեր» վառ նկարգիր են հանդիսանում Վ. Բոնչ-Բրույելիչի հիշողությունները ... Յերբ վաղիմիր Ի. Լ. Հ. լուիս առիթ եր ունենում աշխատելու վորեւ գրվածքի, զեկրետի կամ դիմումի վրա, վորոնք պետք ե ուղղված լինելին լայն մասսաներին, սապա նա ինքը միշտ հիշում եր և պահանջում եր նույնը հիշել բոլորից, վոր այդ ամենը գնում ե հենց մասսաների մեջ և ուստի պետք ե հատուկ խնամքով քննվի, զբանական հանդիսավոր հանրամատչելի, բայց վոչ գուհիկ լեզվով: Ցեթե տեսնում եր, վոր շարագրվածի մեջ հանրամատչելիությունը բացակայում ե, ապա միշտ հարցնում եր. «Միթե չեք կարող ձեր միտքը ուր ըստ լեզվով շարագրել այնպես, վոր նրանք իսկապես մատչելի լինեն բոլորին: Ռուսաց լեզուն շատ հարուստ եւ Ցեթե դուք այդ չեք անում, ապա

դժվարացնում ե մեր ազգեցությունը մասսաների վրա),
առաջ թերթերում գրողների մի քանի սխալները կա-
րող են համբերությունից հանել: Որինակ՝ զործ են
ածում „բցդրություն“ բառը՝ հրահրելու, գրդելու, զար-
թեցնելու իմաստով: Իսկ ֆրանսերեն „bouder“ (բուղե)
բառը նշանակում է՝ «բարկանալ-փքվիք: Ուստի „բց-
դրություն“ իսկապես նշանակում է «բարկանալ փքվ-
իք»: Ֆրանս-Նիժեգորոդյան բառագործածությունն
ընդորինակել կնշանակի ընդորինակել վատթարա-
գույնը ոռւսական կալվածատիրական դասակարգի այն
վատ ներկայացուցիչներից, զոր ֆրանսերեն եր սո-
վորում, բայց նախ կարգին չսովորեց, և յերկրորդը՝
աղավաղում եր ոռւսերեն լեզուն:

Ժամանակը չի արդյոք պատերազմ հայտարարել
սսերեն լեզվի աղավաղման դիմ:

1919 թ. հրապարակված ե «Պրավդա»-յում
№ 76, 3/IV—1924 թ.

ինքներդ եք մեղաքոր, և վոչ թե այն լեզուն, վորով դուք
դուք եք»: Յեկ նա պահանջում եր ամեն մեկից, և վորքան ավելի
պատասխանառու ընկեր եր լինում, այնքան առավել ևս խստորեն,
զոր հեղինակը ինամքով աշխատի իր գրվածքների վրա, առավել
պարզության համարով:

Նա չեր կարող տանել... մեզանում յուրացրած լրագրական
լեզուն, զորը հաճախ այնքան աղքատ, մըթին, տաղտկալի յեր ու
անհասկանալի, զոր Վլադիմիր Շլյեչը թերթը կարգավիս բազմիցս
բացականչում եր. «Եյս ի՞նչ լեզվով ե գրված: «Տարաբարշնա»
ե, զորյապյուկ ե և վոչ թե Տոլստոյի կամ Տուրգենևի լեզուն»:

ԱՐՎԵՍՏԸ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻԶԻ ԿԵՆՑԱՂՈՒՄ

— «Վարքան հրապուրիչ ասպարեղ ե
արվեստի պատմությունը: Ինչքան ոչ-
խասանք կա այստեղ կոմմունիստի հա-
մար... Յեկ յես ցավեցի, զոր ժամանակ
չեմ ունեցել և չեմ ունենա արվեստով
զբաղվելու:

Վ. ի. Լենինը՝ Ա. վ. Լունաչարսկուն:

ԻԼՅԻԶԻՆ Ի՞ՆՉՆ ԵՐ ԴՈՒՐ ԳԱԼԻՍ
ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Ն. Կ. ԿՐՈՒՊԾԿԱՅԱ

Կլադիմիր Իլյիչի հետ ինձ առաջին անգամ ծանոթացնող ընկերն ինձ ասաց, վոր Իլյիչը գիտնական մարդ, կարդում և բացառապես գիտական գրքեր, կյանքում վոչ մի վեպ չի կարդացել, յերբեք վոտանավորներ չի կարդում, Յես զարմացաւ ինքս յերիտասարդ ժամանակ կարդացել եյի բոլոր կլասսիկներին, գիտեյի անգիր գրեթե ամբողջ կերմոնտովը և այլն. այնպիսի գրողներ, ինչպես Զերնիշն Ալին, Լ. Տոլստոյը, Ռուպենովին մտել եյին կյանքիս մեջ վորպես վորոշ նշանակալից բաներ: Զարմանալի թվաց ինձ այն, վոր ահա մի մարդ կա, վորի համար այդ բոլորը բնավլ հետաքրքրական չեւ

Հետո, աշխատանքի մեջ յես մոտից ճանաչեցի Իլյիչին, ծանոթացած նրա գնահատականներին՝ մարդկանց մասին. դիտում եյի նրա խորազննին մոտեցումը կյանքին, մարդկանց, և կենդանի Իլյիչը դուրս մղեց այն մարդու դեմքը, վորը յերբեք ձեռքը չեր առել գրքեր, վորոնք խոսում են այն մասին, թէ մարդիկ կենդանի յեն:

Սակայն կյանքը այն ժամանակ այնպես եր դասավորվել վոր մինք այդ նյութի մասին խոսելու պարագանակներինը ունենում չետո արդեն, Սիրիում, յես իմացա, վոր Իլյիչը ինձանից վոչ պակաս կարդացել եր կլասսիկները, այլև քանիցս անգամ կարդացել եր գիտուք Տուրքենեց: Յես հետո Սիրիս եյի բերել Պուշկինը, կերմոնտովը, Նիկոլայովը, Կլադիմիր 129

Իւլիչը այդ բոլորը եր մահճակալի. մոտ զբարձ չեղելի կողքին և գիշերները նորից ու նորից կարդում եր այդ զրքերը: Ամենից շատ նա Պուշկինն եր սիրում, Բայց ձեւ չեր միայն, վոր նա գնահատում եր: Որինակ նա սիրում եր Զերնիշևու Կու ։ Կո ծերածում («Ե՞նչ անել») վեպը, չնայած նրա նվազ գեղարվեստական նայիվ ձեին, Յես զարժացած եի, թէ ի՞նչպիսի ուշադրությամբ եր կարդում նա այդ վեպում զըտնված ի՞նչ տեսակ նրբագույն գծեր եր նշում: Ասենք, նա սիրում եր Զերնիշևու ամբողջ պատկերը և իր սիրիյան ալբոմի մեջ կային այդ հեղինակի յերկու լուսանկարները: Մեկի վրա Իւլիչի ձեռքով գրված՝ նրա ծննդյան և մահվան թվականը: Իւլիչի ալբոմում կային նաև եմիլ Զոլայի լուսանկարները, իսկ ուսւներից՝ Զերցենինը և Պիսարենինը: Վաղիմիր Իւլիչը ժամանակին շատ եր կարդացել Պիսարենը և սիրում եր: Մտաբերում եմ, Սիրիբում կար նաև Գյոթեյի «Թառուստը» գերմաներին և Հայնեյի վոտանավորների հատորիկը:

Սիրիրից վերադառնալով, Մոսկվայում, Վլադիմիր Իւլիչը մի անգամ գնացել եր թատրոն, նայել եր «Կառապան Հենցելը», հետո ասում եր, վոր շատ հավանել եր այն:

Մյունիստում, Իւլիչի հավանած գրքերի մեջ հիշում եմ Հերգարդտի „Bei mama“ («Մայրիկի մոտ») վեպը և Պոլենցի „Buttner bauer“-ը «Գյուղացի հյուտները»:

Հետո, ավելի ուշ, յերկրորդ հմիվրացիային, Փարիզում, Իւլիչը հաճույքով կարդում եր Վիկտոր Հյուգոյի „Châtiments“ բանաստեղծությունները՝ նվիրված 48 թ. հեղափոխությանը, վոր Հյուգոն ժամանակին գրել եր աքսորափայրում և գաղտնաբար այն ներմուծել եյին Ֆրանսիա: Այս բանաստեղծությունների մեջ միամիտ ձոռոմանություն շատ կա, բայց նրանց մեջ այնու-

հանդերձ զգացվում են հեղափոխության հովերը: Իւլիչը հաճույքով հաճախում եր զանազան կաֆեներ ու քաղաքամերձ թատրոններ՝ լսելու հեղափոխական յերգասաններին («Հանսոննետոչնիկ»), վորոնք բանվորական թաղերում յերգում եյին ամեն բանի մասին՝ և այն մասին, թէ ի՞նչպիս գինովցած գյուղացիները պատգամավորների պալատն են ընտրում անցորդ ագիտատորին, և մանկանց դաստիարակության մասին, և գործադրկության մասին և այլն: Հատկապես Իւլիչը հավանում եր Մոնտեգյուզին: Կոմմունարի զավակ Մոնտեգյուզը՝ բանվորական արվարձանների սիրելին եր: Ճիշտ ե, թեպես նրա անպատրաստից հորինած յերգերի մեջ — միշտ կենցաղային գունավորումով — վորեիցե վորոշ իդեոլոգիա չկար, սակայն անկեղծ վոգերություն շատ կար: Իւլիչը համախ յերգում եր նրա վողջունի յերգը՝ 17 գնդին, վորը հրաժարվել եր գործադրությունների վրա կրակել: „Salut, salut à vous, soldats de 17-me“ («Վողջնեյն, վողջնեյն ձեզ, զինվորներ 17-րդ գնդի»): Մի որ ուսւական յերեկոյթին, Իւլիչը խոսակցության բռնվեց Մոնտեգյուզի հետ և տարրինակ ե, վոր այս բոլորվին տարբեր մարդկեկ՝ Մոնտեգյուզը պատերազմը բռնկվելուց հետո անցավ շովինիստների բանակը — համաշխարհային հեղափոխության յերազանքներով տարվեցին: Ինչպիս յերեքմն վինում ե, պատահում են վագոնում իրար քիչ ծանոթ մարդկեկ և վագոնի անիմսերի թխկթխկոցի տակ սկսում են խոսել ամենանվիրական բաների մասին, վոր յերբեք չեյին ասի մի այլ ժամանակ, հետո բաժանվում են և ել կյանքում իրար չեն պատահում: Այստեղ ել նույնն եր: Մանավանդ խոսակցությունը Փրանսերեն լեզվով եր, — իսկ բարձրածայն յերազել ոտար լեզվով ավելի դյուրին ե, քան հարազատ լեզվով: Որական 131

մի քանի ժամով մեզ մոտ գալիս եր մի ֆրանսուհի — հավաքարար: Մի որ իլյիչը լսեց նրա յերգելը: Այդ մի ազգասիրական — ելզայան յերգ եր: Իլյիչը խընդըեց հավաքարարուհուն նորից յերգել այն և խոսքերն ասել իսկ հետո հաճախ ինքն եր յերգում: Յերգը վերաշնուրմ եր այս խոսքերով:

„Vous avez pris Elsass et Lorraine,
Mais malgres vous nous resterons française
Vous avez pu germaniser nos plaines,
Mais notre coeur, vous ne L'aurez jamais!“

(«Դուք առաք ելզասը և Լոռենը, բայց հակառակ ձեզ մենք մնում ենք ֆրանսիացի, դուք կարող եյթք գերմանացնել մեր դաշտերը, բայց մեր սիրտը չեք ունենադուք յերբեք»: Սյդ 1909 թիվը եր, ուսակցիայի ժամանակ. կուսակցությունը ավերված եր, սակայն նրա հեղափոխական վոգին չեր ընկճված: Յեկ այդ յերգը համահնչյուն եր Իլյիչի տրամադրությանը: Պետք եր լսել, թե ինչպես հաղթական եյին հնչում նրա բերաշնուրմ յերգի խոսքերը՝

„Mais notre coeur, vous ne L'aurez jamais!“

Հենց եմիգրացիայի այս ամենածանր տարիներին, վորոնց մասին իլյիչը միշտ մի տեսակ տրամությամբ եր խոսում, — արդեն Ռուսաստան գալով, նա մի անդամ ել կրկնեց, ինչ առաջ ել ասում եր շատ անդամ: «Յեկ ինչու մենք այն ժամանակ ժընեից Փարիզ գնացինք», — այդ ծանր տարիներին նա յերազում եր ամենահամառ կերպով Մոնտեզուզի հետ, հաղթական յերգելով ելզայան յերգը, և անքուն դիշերներին կարդալով Վերհարնը:

Հետո, ավելի ուշ, պատերազմի ժամանակ, Վլադիմիր իլյիչը հրապուրվում եր Բարբյուսի „Le feu“

(«Կրակ») գրքույկով, հսկայական նշանակություն եր տալիս նրան: Սյդ գրքույկը այնքան համահնչյուն եր այն ժամանակվա տրամադրությանը:

Մենք սակավ եյինք գնում թատրոն, Գնում եյինք, պատահում եր, բայց պիտի վոչնչությունը կամ կեղծ խաղը միշտ ազդում եր Վլադիմիր Իլյիչի նյարդերի վրա: Կդնայինք սովորաբար թատրոն և առաջին գործողությունից հետո կվերադառնայինք: Ընկերները ծիծաղում եյին մեզ վրա, թէ զուր տեղն ենք փողիչացնում:

Բայց մի անգամ իլյիչը մնաց մինչև վերջը: այդ կարծեմ 1915 թվի վերջին եր, Բերնում — խաղում ե ին և. Տոլստոյի «Կենդանի դիակ» („Ժիվօյ տրու“) պյեսը: Թեպիտ պյեսը գերմաներեն եր գնում, սակայն իշխանի դերը կատարող գերասանը ոռու եր, նա կարողացավ արտահայտել և. Տոլստոյի դիտավորությունը: Իլյիչը լարված և հուզված հետեւում եր խաղին:

Յեկ վերջապես, Ռուսաստանում. նոր արվեստը իլյիչին խորթ եր թվում, անհասկանալի: Մի անգամ մեզ կանչեցին Կրեմլ՝ համերգի, վոր կազմակերպված եր կարմիր բանակայիների համար: Դերասանուհի Գրողովուկայան արտասանում եր Մայակովսկու „Հաշ բօց—բօց, սերգու—հաշ բարակ“ («Մեր աստվածը—վազքն և, սիրու—մեր թմբուկը») և առաջանում եր ուղղակի իլյիչի վրա, իսկ նա նստած եր, անակնկալից փոքր ինչ շփոթված, տարակուսված, և թեթևացած շունչ քաշեց, չերք Գրողովսկայային փոխարինեց մի ինչ վոր դերասան, վոր կարդում եր Զեխովիի «Զարագործը»:

Մի յերեկո իլյիչն ուզեց տեսնել, թե ինչպես ե ապրում կոմմունայում յերիտասարդությունը: Վորոշինք այցելել մեր վիուտեմասուհի Վարյա Արման-

դին: * Այդ կարծեմ Կը ապօակինի թաղման որն եր, 1921 թվին: Մոլի տարին եր այդ, բայց յերիտասարդության մեջ մեծ վոգեռություն կար: Կոմմունայում նրանք քնում եյին գրեթե չոր տախտակների վրա, հաց չունեյին նրանք: «Դրա փոխարեն, մենք կը ուղարկանք, — շողզողուն գեմքով հայտնեց կոմմունայի հերթապահ անդամը — վիսուտեմուի ուսանողը: Իլյէլ համար նրանք այդ կը ուղարկայից յեփեցին պատվական կաշա, թեակետ և նա անալի յեր: Իլյէլ նայում եր յերիտասարդներին, նրանց շողուն գեմքերին, իրեն շրջապատած նկարիչ, նկարչունիներին — նրանց ուրախությանը արտացոլվում եր նաև իր գեմքին: Նրանք ցույց եյին տալիս նրան իրենց նայիվ նկարները, բացատրում նրանց իմաստը, հարցերի տարափ եր տեղում: Իսկ նա ծիծաղում եր, խուսափում պատասխաններից, հարցերին հարցերով եր պատասխանում: — Ի՞նչ եք կարգում գուք: Պուշկինը կարգում եք: — Ո՛, վճչ, — թոցրեց մեկը, — չե՞ վոր նա բուրժույ եր: Մենք Մայակովսկի յենք կարգում: Իլյէլ ժպտաց՝ — իմ կարծիքով Պուշկինն ավելի լավ ե, Դրանից հետո իլյէլ մի քիչ մեղմացավ Մայակովսկու հանդեպ: Այդ անունը լսելիս նրա միտն եր ընկնում վիսուտեմասյան յերիտասարդությունը՝ վորը կենսուրախ ե, պատրաստ ե մեռնելու խորհրդային իշխանության համար, բայց վորը արդի լեղվում խոսքեր չի գտնում իրեն արտահայտելու համար և այդ արտահայտությունները վորոնում և Մայակովսկու քիչ ըմբռնելի բանաստեղծությունների մեջ: Հետագայում Իլյէլ մի անդամ գովեց Մայակովսկուն մի վոտանավորի համար, վորտեղ նաև ծաղրում եր խորհրդային բյուրոկրատիզմը:

* Նկարչական-տեխնիկական արհեստանոցի ուսանողունի:
Ծ. թ.

Ժամանակակից գործերից, հիշում եմ, Իլյէլին դուր յեկավ Երենքուրզի մի վեպը, վոր նկարագրում ե պատերազմը: * Գիտե՞ս, այդ իլյա Լախմատինն ե (Երենքուրզի առաջիկա մականունը), հաղթական ձեռվ պատմում եր նա: — Լավ ե դուրս բերել:

Մենք մի քանի անգամ գնացինք Գեղարվեստական թատրոն**: Մի անգամ գնացել եյինք «Զրհեղեղը» տեսնելու: Իլյէլ սաստիկ հավանեց: Ուզեց հիտեյալ որն և եթ սորից զնալ թատրոն, Գորկու «Հատակում»-ն եր գնում: Իլյէլ Ալեկսեյ Մաքսիմովիչին սիրում եր վորպիս մի մարդու, վորի վերաբերմամբ մտերմություն եր զգացել Լոնդոնյան համագումարում: սիրում եր նրան վորպիս արվեստագետի, գտնում եր վոր ինչպիս արվեստագետ, Գորկին շատ բան կարող ե հասկանալ խոսքի կիսից: Գորկու հետ համկապես անկեղծորեն եր խոսում: Ուստի ինքնըստինքյան Գորկու գործը խաղալու նկատմամբ առանձնապես խստապահանջ եր: Բնմագրության ավելորդ բնմականությունը բարկացնում եր Իլյէլին. «Հատակում»-ից հետո նա յերկար ժամանակ թողեց թատրոն գնալը: Նրա հետ մենք մի անգամ ել զնացել եյինք «Դյաղյա Վանյա»-ն՝ Զեխովի: Հավանեց այն: Յեկ վերջապես՝ վերջին անգամ նա թատրոն գնաց արդեն 1922 թ.՝ դիտելու Դիկինսոնի

* Խոսքը Երենքուրզի «Խուլիս Խուրենիտո» վեպի մասին և Հետաքրքրությամբ վերաբերվեց Վ. Ի. նաև Երենքուրզի «Ա աշտարքը բյությամբ» պատմում ե») գրքին, վորի մասին վկայում ե Վ. Ի. նկատողություններից մեկը Պետանցվի «Հա նկարություններ» և Վ. Ի. նկատողություններից մեկը Պետանցվի «Հա նկարություններ» և Վ. Ի.

** Ստորև թված ներկայացմաներից Գորկու «Հատակում» և Զեխովի «Դյաղյա Վանյա»-ն Մոսկվայի և գեղարվեստական Թատրոնի բնմագրումներն են, իսկ «Զրհեղեղը» Բերգերի և «Ճպուռ վառարանի վրա» («Сверчок на певи») ըստ Դեկկենսի Միաս Ա-ի (Մոսկ. գեղ. թատրոնի նախկին 1-ին Սառուկիան): Ս. Դ.

«Дպուռը» („Сверчок на печи“): Առաջին գործողությունից արդեն Իլյիչը ձանձրացավ, ներվերին երխփում Դիկկինսոնի մեջանական սանտիմենտալությունը իսկ յերբ խաղալիք վաճառող ծերուկն սկսեց խոսակցել իր կույր աղջկա հետ, չհամբերեց Իլյիչը, գործողության կիսից զնաց:

Իլյիչի կյանքի վերջին ամիսներին, նրա ցուցմունքով յետ կարդում եյի նրա համար գեղարվեստական գրականությունն, սովորաբար յերեկոյան գեմ: Կարդում եյի Շշիքինը, կարդում եյի Գորկու «Խմ համալսարանները»: Բացի այդ, նա սիրում եր լսել վոտանափորներ, մանավանդ Դեմյան Բեդնուն: Սակայն նրան դուք եյին դալիս Դեմյանի վոչ թե սատիրիկ վոտանափորներն, այլ պաֆոսային գրամծքները:

Фашинистам бр, կարգում ես նրա համար քայլակ-
ները, իսկ նա մտախոհ նայում է պատուհանից մայր
մտնող արեին: Հիշում եմ մի վոտանավոր, վոր վեր-
ջանում ե այս խոսքերով՝ „Никогда, никогда комму-
нары не станут рабами!“ * («Всегда, всегда ком-
муны не станут рабами!»):

Կարգում ես, — կարծիս Իլյիչին կրկին յերգում ես
տալիս — յերբեք-յերբեք մինք հեղափոխության վոչ
մի նվաճումը չենք հանձնի...

թուլանում են, նա ել չի գնում, այլ սողում ե, իսկ
նրա կողքին սողում ե նույնպես սովոր մեսնող մի
գայլ. նրանց միջն կոփ ե մղվում, մարդը հաղթանա-
կում ե — կիսամեռ, կիսախելագար զրության մեջ նա
հասնում ե նպատակակետին: Այս պատմվածքը իլյի-
շին չափազանց դուր յեկավ: Հետեւալ որը խնդրում
եր շարունակել լոնդոնի պատմվածքների ընթերցումը:
Սակայն Զեկ Լոնդոնի ուժեղ գործերը չափազանց թույ-
լերի հետ են խառնված: Հետեւալ պատմվածքը բոլո-
րովին այլ տիպի յեր՝ բուրժուական բարոյագիտու-
թյամբ թափանցված. մի ինչ վոր նավապետ խոստա-
ցել եր ցորենով բարձած նավի տիրոջը՝ ձեռնոտու կեր-
պուէ ծախել այն. նա իր կյանքը զոհում ե լոկ իր
խոստումը կատարելու համար: Ծիծաղեց իլյիշը, և
թափահարեց ձեռքով:

Այլևս չվեճակվեց ինձ կարդալ նրա համար:

1927.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ ԵՂ

...Ցես ցույց տվի նրան իմ մի քանի անդրիների
լուսանկարները և իմիջի այլոց «Հաղթանակ»-ի լու-
սանկարը: Նա կտրուկ կերպով ասավ ինձ, վոր «Հաղ-
թանակ»-ը նա չի հավանում, հավատացնելով, վոր յես
չափաղանց գեղեցկացրել եմ այս:

Յես հաստատում ելի, վոր կրած զոհերը «Հաղթանակը» գեղեցիկ են դարձնում, բայց նա չեր ուղում համաձայնվել: «Դրա մեջ ե բուրժուական արվեստի պակասությունը՝ նա միշտ սիրունացնում ե»: Յես բարկացած նայեցի նրան. — «Դուք գտնում եք վոր իմ արվեստը բուրժուականն ե»:

* Ասու. Կոյագեհ վոտանամոռու

«Այս, — պատասխանեց նա և ցույց տվեց Դիկի
բյուստը: — Յես ձեզ չեմ պախարակում նրա համար,
վոր դուք նրան գեղեցկացրել եք, բայց յես խնդրում
եմ ինձ չբարեղարգել...» *

«Ինչպես եյի քանդակում Լենինին» Կլեր Շերիզան
1920 թ. հոկտ. 3-ի հուշագիրը:

* *

Լենինն իր կյանքի ընթացքում շատ քիչ ժամանակ
ուներ՝ արվեստով քիչ թե շատ ուշադիր պարապելու
և նա իրեն այդ տեսակետից պրոֆան եր համարում:
Յեվ վորովհետեւ նրան միշտ խորթ ու ատելի յէ գիշ-
լետանտիզմը, ուստի նա չեր սիրում արվեստի մա-
սին արտահայտվեր: Այնու հանդերձ նրա ճաշակները
շատ վորոշակի եյին: Նա սիրում եր ուսւ կլասիկնե-
րին, սիրում եր ռեալիզմը գրականության, նկարչու-
թյան մեջ և այլն:

Դեռ 1905 թվին, առաջին հեղափոխությանը նա
առիթ ունեցավ գիշերելու ընկ. Դ. Ի. Լեշենկոյի բնա-
կարանում, վորտեղ ի միջի այլոց կար կնակիուսայան
հրատարակությունների մի ամբողջ ժողովածու, նվիր-
ված աշխարհիս խոշորագույն նկարիչներին: Հետեւ առավոտը Վլադիմիր Լյուիչը ասաց ինձ: «Ինչպիսի հրա-
պուրիչ բնագավառ ե արվեստի պատմությունը: Ինչ-
քան աշխատանք կա այստեղ կոմունիստի համար: Գի-
շերս մինչև առավոտ չկարողացա քնել շարունակ մի
գրքից հետո մյուսն եյի նայում: Յեվ ցավում եյի,
վոր յես ժամանակ չիմ ունեցել և չեմ ունենա ար-

* Հիշողությունների հեղինակը՝ անգլունի արխուոկրատունի
լորդ Չեքիլի յեղբոր աղջիկը, քանդակագործ, վորը 1920 թ. աշ-
նանը Խորհրդային Ռուսաստան եր յեկել. Դիկը՝ Շերիզանի վոր-
դին եւ:

վեստով պարապելու համար», իլյիչի այս խոսքերը
չափազանց պարզ մնացին հիշողությանս մեջ:
«Լենինը և արվեստը» Ա. Վ. Լունաչարսկու:

* *

Դրանից (1902 թ. գալնանից) մի փոքր առաջ
բյուստելուն եր Պլեխանովը, վորի հետ յես Բել-
գիայրվ ճանապարհորդում եյի: Հենց վոր վերջանում
եյին հեղափոխական ժողովները, Պլեխանովը ինձ
քաջ եր տալիս դիտելու պատկերասրահները, վորոնց
մեծ սիրահար եր նա:

Լենինը գրանով չեր հետաքրքրվում: Նա ամբող-
ջապես կլանված եր բանվորական շարժումով:

Ցյալովսկին, վոր իր ժամանակին հրատարակել
եր «Բաղրամիկներ» գիրքը՝ ըստ ախրանկայի փաստա-
թղթերի, հաղորդեց ինձ, վոր 1917 թվին պահնորդա-
կան բաժնի թղթերը նայելիս, նա Լենինի մասին
յերկու գործ եր գտել, Գործերից մեկը պարունակում
եր ժանդարմներից մեկի ձեռքով կազմած այն գրքերի
ցուցակը, վոր էենին իր հետ արտասահման եւ
տարել: Այս ցուցակից յերեւմ ե, վոր գեղարվեստա-
կան գրականությունից նա միայն յերկու գիրք եր
վերցրել՝ Նեկրասովի՝ բանաստեղծությունները և Գյո-
թեյի «Թառապետը»: Մնացած գրքերը անտեսագիտա-
կան եյին:

Այն ժամանակ ինձ շատ հետաքրքրեց այն, վոր
Լենինը չեր հետաքրքրվում պատկերասրահներով
և թանգարաններով, վորոնցով այնքան հարուստ և
բյուստելու: Այս, ինչին վոր նայում են սովորական
տուրիստները՝ զանազան հուշարձաններ և այլն, նրան
չեր հետաքրքրում: Նա անցնում եր նրանց մոտով,
նույնիսկ առանց նայելու. գրա վոխարեն՝ նրան հետա-

Քրքրում եյին ամենամանրամասն հարցերը, վորոնք
վերաբերում եյին բելգիական բանվորական կուսակ-
ցությանը:

«Հշողություններ լենինի մասին» Ն. Մեջերյակովի:

* * *

Այժմ բոլորն ել գիտեն, վոր Իլյիչը, ինչպես վոչ վոք,
իմանում եր զրել և խոսել ամենալայն ժողովրդական
մասսաների համար, նա տանել չեր կարող ֆրազայի
արտաքին «սիրունությունը», ատում եր միտքը «արդ
ու զարդելու» ամեն մի փորձ, սիրում եր հաճախ առաջ
բերել Բազարովի խոսքերը «Արկադի Նիկոլայիչ», բա-
րեկամ. մի խոսիր այդպես գեղեցիկ»: Գտնում եր, վոր
խճճված վոճը խճճված միտք ե արտահայտում: Իսկ
մտքի շփոթությունն որդանապես տանել չեր կարող:

Այդ եր պատճառը, վոր ոռուսական գեղարվեստա-
կան գրականությունից մյուսներից ավելի շատ սիրում
եր Տուրտոյին, Պուշկինին, Նեկրասովին,
Չեխովին և իր մշտական գրադարանում պահում եր
«կլասսիկներին»: Հրապարակախոսներից մեծ հարգան-
քով ու սիրով եր վերաբերվում Չերնիշևուն,
վորին շատ լավ գիտեր և վորից հաճույքով քաղվածք-
ներ եր անում:

«Եմիչի գրական ժառանգությունը և յերկերի
ժողովածուն» Լ. Բ. Կամենկի:

* * *

Այն ժամանակ* Վլադիմիր Իլյիչը գեղարվեստա-
կան գրականության և նրա գեղեցիկությունների մեծ
յերկրպագուն չեր և համբերությամբ լսում եր իմ կա-
տակները իր «անզարգացած» ճաշակի մասին: Մտա-
* 1897 թ. Շուշնսկոյե գյուղում, ուր աքսորված եր Վ. Իլյիչը:

բերում եմ, վոր հատկապես նա սեր չեր տածում դեպի
Նազոսնը և ընդհակառակը՝ շատ բարձր եր գնահատվում
Տուրգենևին և Զոլային,

«Վաղիմիր Խլիչի մասին» Գ. Մ. Կրժիժանովսկու:

Վ. ԻԼՅԻՉԻ Մ. Ա. ՅԵՎ Մ. Ի. ՈՒՅՑԱՆՈՎՆԵՐԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

... Յես նույնիսկ մտածում եյի այսպիսի մի բան
անել՝ գուրս զրել ինձ համար „Նիվա“-ն*: Յերեխա-
ների (Պրոմտինսկու) համար շատ զվարձալի կլիներ
այդ (ամեն շաբաթ՝ նկարներ), իսկ ինձ՝ „Նիվա“-ի
խոստացած՝ Տուրգենևի յերկերի լիակատար ժողովա-
ծուն, վորպես պլրեմիս, 12 հատորում: Յեվ սույն բո-
լորը յոթ ըստը վիտագրությամբ! Շատ զայթակղե-
ցուցիչ ե: Յեթե միայն Տուրգենևը մարդավարի լինի
հրատարակված, (այսինքն՝ առանց աղավաղութեարի,
բացերի, կոպիտ վրիպակների), այն ժամանակ լիովին
արժե գուրս զրել: Արդյոք մերոնցից վորեն մեկը չի
տեսել „Նիվա“-ի անցյալ տարիների պրիմիաները: Կար-
ծեմ նա Դոստոևսկու յերկերն եր տվել Տանելի՞ յեր
արդյոք:

23/II—1898 թ. Շուշնսկոյե գյուղ:

* * *

Մենք նրա մերձավորներից լսել եյինք, վոր նա
(Լենինը) սիրում եր Տուրգենևին: Նա ինքը
ասում եր տողերիս հեղինակին 1919 թ. սկզբում, վոր

* „Նիվա“-ն պատկերազարդ շաբաթաթերթեր (հիմ. 1869 թ.),
վոր եր հավելվածներում եման գներով տալիս եր կլասսիկների և
հանրածանոթ հեղինակների յերկերի ժողովածուները:

թերթում և ՇՀԿ գրինը և այդ միջոցին հանգստանում ե...

«Ենինը և զբականությունը»:
Վ. Պոլանսկու (Պ. Ի. Լեբենելի),

* * *

Կոչ վոք, ի միջի այլոց, իրեն չի ներկայացնում իշխին, զորպես բանաստեղծության մեծ սիրահարի և այն ել կլասսիկ, հնությամբ հնչող պոեզիայի։ Հաղվագյուտ հանգստյան բողեներին նա չեր հրաժարվում բանալ Շեքսպիրի, Շելտերի, Բայրոնի, Պուշկինի մի վորեն հատորիկը և նույնիսկ այնպիսի պոետներին, ինչպես Բորատինսկի կամ Տյուտչեն Նույնիսկ յիթե չեմ սխալվում, Տյուտչել նրա հատուկ ուշադրության առարկան եւ։

«Ծրջադարձին» Պ. Ն. Լեպեշինսկու, Գրված եւ 1921 թ.։

* * *

„На литературном посту“ («Գրական գիրքում») ամսագրի 1 և 2 համարների վեցամյակած համապատասխան Վ. Ի. Լենինի համար 1919 թ.՝ Բոնչ-Բրույերի հիշողությունները „Что читал В. И. Ленин в 1919 году“ («Ի՞նչ եր կարդում Վ. Ի. Լենինը 1919 թ.»): Վերլուծելով „Книжная летопись“ («Գրական տարեգիր») ամսագրի լուսանցքներում Վ. Ի. Նկատողությունները, ընկ, Բոնչ-Բրույերը սատնանշում եւ, զոր գորքերի կիսից ավելին պատկանում և այն ժամանակվագործնական քաղաքականության խնդիրներին, այն քաղաքականության, վոր առնչությունն ունի մեր թշրիմիների գործունեյության հետո և վոր «գրականության մեջ արտացոլված հրատապ հարցերը առաջին տեղն են գրավում»։ 1917 թ. «Տարեգրքում» յեղած ցանկի 142 գրքերի թվում, զորոնք հետաքրքրել են Վ. Ի. Լենին, մենք գտնում ենք միայն մեկ գեղար-

վեստական դրվածք։ 1918 և 1919 «Տարեգրքում» 80 անվան մեջ ընդգծված են՝ 7 գիրք՝ բելետրիստիկայից և 1-ը արվեստի հարցերին վերաբերող։ Անհրաժեշտ եղած հրաժարկվում ելին Վ. Ի. Ն. անմիջական կերպով հեղինակների և հրատարակությունների կողմից և բնականաբար զրանք «Տարեգրքի» մեջ չելին նշանակվում։ Վ. Ի. կողմից «Տարեգրքում» թված գրքերի ըոլոր և անհապաղ ձեռք ելին բերվում և հանձնվում ելին Վ. Լ. Իլյիչին։ Մ. Գլյասսերի հիշողություններում* առաջ եւ բերված Վ. Ի. տված զրքերի մի բնորոշ «պատվեր»։ Այդ պատվերի տակը անունների մեջ մտնում են, — „Новая наука и марксизм“ Որժիցինի, „Марксизм, как предмет преподавания“ Սեմյովսկու, „Наши финансы за время гражданской войны и нэпа“ Այլիկու, հողածների ժողովածուն՝ „Основные проблемы теории денег“, „Перелом в развитии мирового промышленного кризиса“ Ֆալկների, „Мы сами!“ Ֆիպերովիչի, „Против идеализма“ Ակսելլովի, „Миф о Христе“ Դրեվի, „Конец русского царизма“ Կուրլովի, „На темы дня“ Կանաչիկովի և „Пролетарское мифотворчество“ („Об академических уклонах современной пролетарской поэзии“) Մոձալևսկու**։

* *

Հենց այսուեղ ել ծագեց այն հարցը, վոր Վագիմիր Իլյիչը ցանկացել եր իր ձեռքի տակ ունենալ կլասսիկ-

* «Ենինի մասին» հուերի ժողովածու, Լ. Կամենեի խմբագրությամբ Խուսպեհան 1924 թ.

** Վ. Ի. «Ընթերցման շրջանի» մասին մի շարք նյութերը տեսնակ գրադարանապետանի Շ. Մանուչարյանի հիշողությունների մեջ „Что и как читал Ленин“: (Записки Института Ленина. III դրակ. 1928 թ.):

Ների յերկերի ժողովածուն և Դալի բացատրական բառարանը: Կլասսիկներից ուղարկված եյին՝ Դաստանսկի, Գոգով, Քանչարով, Լերմոնտով, Նեկրասով, Տալստոյ և Ն., Դրիբայեղով, Տուրգենև, Պուշկին, Բայի այդ, Վ. Ի. ուղեց ունինալ Մերեթկովսկու, Կարաբենկոյի, Ռազիշչիկի, Պրուտկովի, Մայկովի, Նադսոնի, Լեսկովի, Գ. Ուսպենսկու, Ս. Տ. Աքսակովի, Պիսարի, Սալտիկով-Շչերենի, Լեխտովի, Կոյլցովի, Տյուտչեի, Գրիգորովիչի, Դարբալյուրովի, Պամյալովսկու, Ֆետի, Ապուխտինի, Ա. Կ. Տալստոյի, Զեխովի, Զլատովրատսկու յերկերի ժողովածուն:*

Վագիմիր Իլյիչի գրասենյակում գրված եր մի պահարան, վորտեղ և կազմած, դասավորված եյին այդ գրքերը: Բայի այդ, հետագայում այստեղ ավելացվել եյին Ն. Գ. Զերնիշեսկու, Բելինսկու, Պլեխանովի, Զասուլիչի յերկերի ժողովածուները: Դալի բառարանը Վլ. Իլյիչը գետեղել եր պտտվող պահարանի մեջ և շատ հաճախ աչքի յեր անցնում այն:

«Ինչ եր կարդում Վ. Ի. 1919 թվին» Վլ. Բոնչ Բրույերի:

* * *

1913 թ. հուլիսին Վ. Ի. մտել եր Բերնի եմիգրանտների գրադարանը և հարցնում եր, թե արդյոք կան

* Հուշերի հեղինակն այս ցուցակի մեջ անքան ել ստույգ չե: Մեր հատուկ դիմումին ի պատասխան Գ. Մ. Կրժիժանովսկին ընդգծեց. «Վորոշակի հիշում եմ, վոր աքսորում Վ. Ի. չեր սիրում մանավանդ նազունին: Ինչ վերաբերում ե ֆետին, ապա ինչպես նկատում ե Ն. Կ. Կրուպսկայան—«Մեկն իր հիշողությունների մեջ զրել ե, թե Վ. Ի. սիրում եր ֆետին: Դա ճիշտ չե: («ԱՅ ՅՈՒ ԱՄԱԿԱՆ»): Իսկ ընդհանրապես այս անվանացուցակը զուգակից վում ե այն էլլասսիկների ասսորտիմենտիք հետ, վորով այն ժամանակա լժեկ գրքային բազան մտակարարում եր գրադարան-ները: Վ.

այնտեղ Նեկրասովի յերկերը: Գրադարանապետը մատուցելով գրքերը, ժպտալով ասաց:

— Ի՞արկե, չը վոր գրադարանը նարողնիկան ե: Այն ժամանակ Լենինը բարկացավ և տաքացած պատասխանեց:

— Գիտցեք, վոր վոչ մի սոցիալ-դեմոկրատական և վոչ ել ընդհանրապես սոցիալիստական գրադարան առանց Նեկրասովի յերկասիրությունների յերևակայել չի կարելի...

«Յերբորդ սերնդի դատը». Բ. Կ.

* * *

Սիրելով Նեկրասովին, Վ. Ի. Լենինը չափազանց մեծ հետաքրքրությամբ վերաբերվեց Ն. Ա. Նեկրասովի յերկերի նոր ժողովածույի հրատարակմանը: (Պետական հրատարակություն, 1920): «Պրավդա»-յի խմբագրությանը զրած իր նամակի մեջ 1928 թ. փետրվարի 27-ին Մ. Գորկին մատնանշում ե

«Հիշում եմ, վոր Վ. Ի. Լենինը աչքի անցնելով Նեկրասովի նոր հրատարակությունը, Կ. Ի. Զուկովսկու խմբագրությամբ, գտավ վոր սա ըլավ, մտածված աշխատանք ես, իսկ աշխատանքը գնահատելու Վլադիմիր Իլյիչի կարողությունն անժխտելի յե»:

Նեկրասովի նոր հրատարակության նույն տեսակ զնահատականը հայտնել եր խմբագրին Վ. Վ. Վարովսկին, վորի հետ զրուցե իս Վ. Իլյիչը հատուկ գոհունակությամբ եր ընդգծում ժողովածուի մեջ Նեկրասովի անտիպ և ցարական ցենզուրայից արգելված վոտանավորները զետեղելու

* * *

Թնդաց Հոկտեմբերը... Մենք հենց նոր տեղափորվել եյինք Մոլոնյում: Վ. Ի. կողմից ինձ հանձնա-

բարված եր ժողկոմիորհի վարչության կազմակերպումը: Մարդ քիչ կար, գործերին ծանոթ՝ ավելի քիչ: Սկսեցի թախանձագին կանչել Դեմյան Բեղնուն՝ մասնակցելու վարչական աշխատանքներին: Դ. Բեղնին և գալիս եր և չեր գալիս: Նա զգում եր զոր այժմ բացվում ե նրա գործունեյության ասպարեզը, վորպես դրականագետի, վորպես Հոկտեմբերյան հեղափոխության պոետի, նա չեր ուզում վարչական աշխատանք ստանձնելի Վ. Ի. սկզբում բարկանում եր նրա վրա, սպառնում եր, դայրանում: Դեմյան Բեղնին սկսեց դրել և «Պարավա»-յում առկայժեցին նրա մարտական վոտանավորները: Վ. Ի. առաջ ել, մինչ հեղափոխությունը, շատ լավ և մեծ ուշադրությամբ եր վերաբերում Դ. Բեղնու ստեղծագործությանը և գեռ ևս արտասահմանից մի անգամ չե, վոր խրախուսել և գովասանական նամակներ եր գրել նրա հասցեյին: Յեզ ահա, յերբ լույս տեսան Դ. Բեղնու այդ նոր հեղափոխական գրավածքները, Վ. Ի. խակույն ըմբռնեց նրա նշանակությունը առաջիկա պայքարում, և յերբ նորից խոսք բացվեց նրան վարչական աշխատանքի կանչելու մասին, ինձ ասեց:

— Թողեք նրան... նա չի ուզում... Իսկ նա լավ եւ գրում... Դա մեղ համար կարեոր ե... Թողեք գրի, այդ կլինի նրա հեղափոխական աշխատանքը...

Ահա այն զգայուն մոտեցումը, ահա այն առաջին դատողությունը գրականագետի աշխատանքը հեղափոխական պայքարին սպասարկելու անհրաժեշտության մասին, վոր յես լսեցի Վ. Ի. լոյից Հոկտեմբերյան հեղափոխությունից մի քանի որ հետո:

«Վ. Ի. լենինը և գրականագետների աշխարհը»
Վլ. Բոնչ-Բոռովելիչ:

* * *

Իլյիչը սիրում և գնահատում եր ծիծաղը վոչ միայն ընտանեկան կենցաղում: Ծիծաղը, ծաղը վորպես կովի մի զենք՝ հակառակորդի դեմ, վորպես մի միջոց՝ նրան թուլացնելու, խեղճացնելու, հարգանքի անարժան դարձնելու — իլյիչը շատ բարձր եր գնահատում:

Դեմյան Բեղնու նկատմամբ՝ վորպես սատիրայի լավագույն վարպետի, իլյիչը՝ կուսակցական մամուլի մեջ պոյետի առաջին գրական յելույթներից սկսած, ջերմագին վերաբերմունք եր ցուցադրում: «Սա մեր հեղափոխության բարանն ե» (տարան), գրում եր արտասահմանից լենինը:

Մի որ, 1918 թվին, մենք Յա. Մ. Սվերդլովի ու Դեմյանի հետ միասին մտանք Վլադիմիր իլյիչի մոտ: Դեմյանը իր հետ վերցրել եր այն ժամանակ նոր գրած իր „Յամլա օբետօնայ“ պոեմը, վորում ոգտվելով վարավոնական տառապանքի յերկրից հրեաների դուրս գալու մասին յեղած բիբլիական ավանդությունից, նկարագրում եր պրոլետարական Հոկտեմբերյան յելքի առաջին քայլերը կապիտալիստական ստրկության յերկրից: Իլյիչը կերպունկայի շուրջը անհանգիստ պտույտ եր, գալիս... և հետը ուշադրությամբ լսում եր հեղինակի վոտանավորի ընթերցանությունը: Մի քանի տեղ Իլյիչը ուրախ և վարակիչ կերպով ծիծաղում եր, մեղ ևս գրավելով:

Յեվհանկարծ դեմքի միամիտ-մանկական արտահայտությամբ աշքերը կկոցեց, նայելով Դեմյան Բեղնուն:

— Ներեցնք, բանից դուրս ե գալիս, վոր Մովսեսը յես եմ:

Յեվհանկարծ դեմքից իր անձայն ծիծաղով: Այնքան ծիծաղելի թվաց նրան ժամանակակից պրոլետարա- 147
10*

կան առաջնորդի զուգահեռը բիրլիական մարզարեյլի հետ, վորը ժողովրդին անապատի միջով տանում է դեպի ավետյաց յերկիր:

«ԵԱՀԸ և սատիրան» Լ. Սոսնովսկու:
* *

Մի գրական դիսպուտում ընկ. Մեշչերյակովը հաղորդեց հետեւյալ վիաստը: Մայակովսկին ուղարկել եր իր գրքույցից լենինին՝ մի մակագրությամբ, վորտեղ գործածված եր կոմմունիզմ-ֆուտուրիզմ բառերի միացյալ ձեւ՝ կոմֆուտ եր, թե ինչ վոր նման մի բան: Թերթելով գրքույցից Վ. Ի. Նկատեց՝ «Դե, յեթե սա կոմմունիզմ է, ապա գուցե միայն խուլիզանական կոմմունիզմ»:

Ճռամարանությունը, ձեականությունը, արհեստականությունը չեր կարող տանել Վ. Լադիմիր Իլյիչը, վորը պարզության մարմնացումն եր: Նրան ավելի մոտ եր՝ ժամանակով հեռու, բայց աշխարհազգացումով մոտ արեային-կենսուրախ Պաշկինը: Աղբյուրի պետքինող կենսուրախության համար կենինը սիրում եր ժողովրդական մեծ յերգիչ Բերանժեյին: Միենույն հատկության համար սիրում եր նա մեր Դեմյան Բեդնուն: Իզուր չե, վոր «Պրոֆեկտոր»-ի լուսանկարը տպագորել ե Իլյիչի գրասեղանի վրա նրա սիրած գրքերի միջև, վոր նա կարդում եր մահվանից առաջ, Դեմյան Բեդնու բանաստեղծությունների հատորը, վոր պարզորոշ յերեսում ե լուսանկարի մեջ:

«Ինչի համար եր սիրում Պուշկինը վ. Ի. Անդրեյ»
Լ. Սոսնովսկու:
* *

Մի անգամ, վ. Իլյիչը՝ մտնելով սենյակս, սեղանիս վրա տեսավ Բայլմոնտի թե Բլոկի նորագույն բանաստեղծությունները: *

— Ինչպես, դուք ել եք տարվում այս ցնդաբանությամբ: Սա հո դեկադենտականություն ե: Ի՞նչ եք դտել դուք դրանում:

Ցես շփոթվեցի, սկսեցի առարկել, ցույց տվի նրան իմ կարծիքով ինչ վոր ուշագրավ տողեր: Իլյիչը նայեց զրբի մեջ:

— Հըմ, վատ չե հնչում, սահուն ե գրված, բայց և այնպես սրա մեջ քիչ իմաստ կա:

Իմանալով, վոր յես Պապովյանի գրադարանից գրքեր եմ վերցնում, Վ. Ի. ինդրեց ինձ իր համար ևս բելեմբիստիկայից մի բան բերեմ:

— Միայն վոչ այս նորերից: մի վորեւ հին բան: Այս յեթե գտնեք Զորջ Ելիոտի վորեւն մի վեպը...
«Առաջին հանդիպումները Լենինի հետ», Յա. Բերգինի:

— * * *

Ինձ մոտ մեծ գրադարան կար և այն ժամանակվաամբողջ Լուս /ողկոմատը (1918) ինձանից գրքեր եր վերցնում: Նաղեժդա Կոնստանտինովսան ևս մի անգամ դիմեց ինձ, խնդրելով տալ նրան՝ կարդալու մի բան, Վ. Լադիմիր Իլյիչի համար. «Վ. Լադիմիր Իլյիչը գործի ընդմիջումներին սիրում ե վոտանավորներ կարդալ, մանավանդ նա սիրում ե Պուշկինը և Բերանժեյի յերգերը»: Ցես ունեյի Պուշկինի լիրիկայի հատորիկը և Բերանժեյի յերգերը: Այս յերկու գրքերին յես ավելացրի Ալեքսանդր Բլոկի բանաստեղծությունների մի հատորիկը:

Յերկը շաբաթից հետո Նադեժդա Կոնստանտինովսան բերավ ինձ գրքերը: Իմ հարցին, թե ինչպես հա-

* Անդրեյական կին գրող Եվգենի-Կրոսսի կեղծ անունն ե: Նա դրեւ և վեպեր անցյալ գարի 60-ական և 70-ական թվերին: Կարճ կերպով գրան կարելի յե բնութագրել գորպիս «անդրեյական Տուրգենևի»:

վանեց Վլադիմիր Իլյիչը Բլոկի ստեղծագործությունը, Նաղեժդա Կոնստանտինովան ասաց՝ «ԶԵ, Վլադիմիր Իլյիչը նոր պոյետաներին չի սիրում»:

«Յերեք հանդիպում Վ. Ի. հետ». Վ. Բոգուշևկու:

* *

Հեղափոխության ժամանակ գրյացած նոր գեղարվեստական և գրական Փորմացիաները, մեծ մասամբ վրիպում եյին Վլադիմիր Իլյիչը ուշադրությունից: Նա ժամանակ չուներ՝ գրանով զրադիվելու: Բայց և այնպես, կասեմ, վոր Մայակովսկու «Сто пятьдесят миллионов»-ը Վլադիմիր Իլյիչին վորոշակի կերպով դուր չեկավ: Նա գտավ, վոր այդ գիրքը շինծու յեւ և արհեստական* (Շտուկարքայ): Զի կարելի չցավել, վոր նա արդեն չեր կարող արտահայտվել մեր այլ, ավելի ուշ և ավելի հասուն շրջադարձի մասին, վոր տեղի ունեցավ հեղափոխության վերաբերմամբ՝ գրականության մեջ:

...Մի քանի անգամ յես առիթ ունեյի պատահելու նրան արդեն հեղափոխությունից հետո զանազան գեղարվեստական ժյուրիների առթիվ: Այսպես, որինակ, հիշում եմ, ինչպես նա ինձ կանչեց և մենք նրա ու ընկ. Կամենսկի հետ միասին գնացինք դիտելու հուշարձանների պրոյեկտների ցուցահանդեսը, վոր կազմակերպված եր Սելքսանըր III-ի՝ փրկչի տաճարի մուտքանված փառահեղ պատվանդանից վայր գլորված արձանը փոխարինելու նպատակով: Վլադիմիր Իլյիչը խիստ քննադատորեն եր դիտում այդ բոլոր հուշարձանները: Նրանցից վոչ մեկը նրան դուր չեկավ: Մի առանձին զարմանքով նա կանգնել եր Փուտուրիստա-

* Դրա փոխարեն, նույն Մայակովսկու գրած վոտանավորը՝ Քաշբուկի մասին, շատ ծիծառեցրեց Վլադիմիր Իլյիչին և նա մեքանի տող նույնիսկ կը կնում եր: Ա. Լունաչարսկի:

կան ձեր մի հուշարձանի առաջ, իսկ յերբ հարցրին իր կարծիքը, նա ասաց. «Յես սրանից վոչինչ չեմ համեկանում, հարցրեք Լունաչարսկուն»: Իմ հայտարարությանը, թե յես վոչ մի արժանի հուշարձան չեմ աեսնում, նա շատ ուրախացավ և ինձ ասաց. «Իսկ յես կարծում եյի, թե դուք մի վորեիցեք Փուտուրիստական Խրտվիլակ պետք եւ կանգնեցնեյիք»:

Մի ուրիշ անգամ հարցը կարլ Մարքսի հուշարձանին եր վերաբերում: Հայտնի քանդակագործ Մ-ն հատուկ համառություն եր հայտնաբերել: Նա ցուցադրել եր հուշարձանի մեծ պրոյեկտ՝ «Կարլ Մարքսը չորս փոքրի վրա կանգնած»: Այդպիսի մի անսպասելի ձեւը մեզ բոլորիս տարորինակ յերեաց, նմանապես և Վլադիմիր Իլյիչին: Քանդակագործը սկսեց փոփոխել իր հուշարձանը և յերեք անգամ այն փոփոխեց, վոչ մի կերպ չէրաժարվելով կոնկուրսի հաղթանակից: Յերբ ժյուրին իմ նախագահությամբ վերջնականապես մերժեց նրա նախագիծը և կանգ առավ Ալյոշինի ղեկավարությամբ մի խումբ արվեստագետների կոլլեկտիվ նախագծի վրա, այդ միջոցին քանդակագործ Մ. Ներս խոժեց Վլադիմիր Իլյիչի առանձնասենյակը և գանգատվեց նրան: Վլադիմիր Իլյիչն իր սրտին մոտ ընդունեց նրա բողոքը և ինձ հատկապես զանգահարեց, վոր նոր մյուրի հրավիրվի: Ասաց, վոր ինքը կգա նայելու Ալյոշինյան նախագիծը և քանդակագործ Մ-ի նախագիծը: Ալյոշինյան պրոյեկտից շատ գոհ մնաց, քանդակագործ Մ-ի պրոյեկտը մերժեց:

Այդ նույն թվին մայիսելյան տօնին նույն տեղում, վորտեղ նախագծված եր կանգնեցնել կարլ Մարքսի հուշարձանը, Ալյոշինյան խումբը փոքր մասշտաբով կառուցել եր հուշարձանի մոդելը: Վլադիմիր Իլյիչը հատկապես զնաց այնտեղ: Մի քանի անգամ

պտտվեց հուշարձանի շուրջը, հարցրեց թե ինչ մեծություն և ունենալու այն և ի վերջո հավանություն տվեց, ասելով սակայն. «Անատոլիյ Վասիլյեսիչ, հատկապես ասացեք արվեստագետին, վոր մազերը նման դուրս բերի, վորպեսզի այն տպավորությունը լինի Կարլ Մարքսից, վոր ստացվում ե նրա լավ նկարներից, թե չե, կարծես նմանությունը քիչ ե»։ Հիշում եմ յես նաև, ինչպես արվեստագետ Այլումանը նվիրել եր Վլադիմիր Իլյիչին Խալտուրինի բարելյեֆը։ Վլադիմիր Իլյիչը շատ հավանեց բարելյեֆը, սակայն նա ինձ հարցրեց, թե Փուտուրիստական չե՞ արդյոք այդ գործը։ Ֆուտուրիզմին նա ընդհանրապես բացասաբար եր վերաբերվում։ Յես ներկա չեմ յեղել նրա խոսակցությանը Վիուտեմասում, վորի հանրակացարանն եր այցելել նա մի անգամ. այնակե եր ապրում, յեթե չեմ սիալվում, նրա յերիտասարդ ազգակցուհիներից մեկը։ Ինձ հետո պատմեցին այդ յերկար զրույցի մասին՝ նրա և վիլուտեմասականների միջև. իսկ վերջիննիրս իհարկե՛ բոլորն ել ձախերից եյին։ Վլադիմիր Իլյիչը կատակներով «պրծնում» եր նրանցից, մի փոքր ել ծիծառում եր նրանց վրա, բայց միենույն ժամանակ հայտնել եր, վոր այդ բաների մասին լուրջ խոսել հանձն չի առնում, վորովհետև իրեն բավականաչափ կոմպետենտ չի զգում։ Իսկ յերիտասարդությանը շատ հրաշալի գտավ և ուրախանում եր նրանց կոմմունիստական տրամադրությունից։

Ա. Վ. Լունաչարսկու հիշուղություններից։

* * *

... Մեկն ըստ յերկույթին նրան ասել եր, վոր յես փուտուրիստ եմ, Նա հարցրեց, թե արդյոք իր կիսանդրին «Փուտուրիստակամն» և լինելու Յես նրան բա-

ցատրեցի, վոր կուզենայի ստեղծել նրա նկարը և վոր այդ նպատակը վորոշում ե աշխատանքի վճար։ Այդ ժամանակ նա խնդրեց ինձ ցույց տալ իրեն վորեն փուտուրիստական բան, և յերբ յես կատարեցի նրա ցանկությունը, ասաց՝ «Արանից յես բան չեմ հասկանում, այստեղ մի մասնագետ ե հարկավոր»։

Մի անգամ յես նրան ցույց տվի Լունաչարսկու իմ կաղապարած ըյուսումի լուսանկարը։ Նա աչքերի մեջ ինչ վոր տարրուինակ բան գտավ։ Գուցե այդ նրանից ե, նկատեցի յես, վոր նա սովոր եր Լունաչարսկուն ակնոցը քթին գրած տեսնել։

Մի որ նա ինձ հարցրեց, թե արդյոք իմ աշխատանքը նորմմալ ե ընթանում եմ որական գործադրած ժամանակի տեսակետից և նորմայից ավելի կամ պակաս չեմ գործ դնում այն։

«Ինչպես եյի քանդակում լենինին»։

Ն. Այլումանի (1920 թ. մայիս)։

* * *

— ...«Ինձ թվում ե, — ասում եր Վ. Ի. — թե մենք ել ունենք մեր բժիշկ Կարլատագուները։ Մենք չափից դուքս մեծ «կործանիչներ ենք նկարչության մեջ»։ Գեղեցիկը պետք ե պահպանել վերցնել նրան իրբենուց, յելնել նրանից, յեթե նույնիսկ նա «հին» ե։ Ինչո՞ւ պետք ե մենք յերեսներս շրջենք ճշմարիտ — գեղեցիկից, հրաժարվենք նրանից, վորպես հետաքա զարդեցիկից, հրաժարվենք նրանից, միայն այն հիման վրա, վոր նա հին ե։ Ինչո՞ւ պետք ե խոնարհվել նորի առջե, վորպես մի աստծու, վորին պետք ե հպատակլիւել միայն նա համար, վոր «գա նոր ե...» Անժություն ե, բայց դա անմտություն։ Այստեղ կա շատ գեղարվեստացարձակ անմտություն։ Այստեղ կա շատ գեղարվեստական յերեսպաշտություն և անշուշտ անդիտակցական յերկրպագություն։ Արևմուտքում իշխող գեղարվեստա-

կան մողայի հանդեպ: Մենք լավ հեղափոխականներ ենք, բայց մենք մեզ, չգիտես ինչու, պարտավոր ենք զգում ապացուցել, վոր մենք ել ենք կանգնած «ժամանակից կուլտուրայի բարձրության վրա»: Յես համարձակություն ունեմ ինձ «բարբարոս» հայտարարելու: Իմ ուժից վեր և եքսպլիսսիոնիզմի, փուտուրիզմի, կուբիզմի և այլ «իդերի» արտադրությունները համարել գեղարվեստական հանճարի բարձրագոյն արտահայտությունը: Յես նրանց չեմ հասկանում: Յես նրանցից վոչ մի ուրախություն չեմ զգում»:

Յես չկարողացա ինձ զսպել և խոստովանվեցի, վոր ինձ ել և պակասում մի վերընդունող որդան, վորպեսզի կարելի լինի հասկանալ, թե ինչու վոգեսրության գեղարվեստական արտահայտությունն պետք է ծառայեն քթի փոխարեն յեռանկյունիները և ինչու հեղափոխական ձգտումը դեպի ակադիվություն պետք և մարդու մարմինը, — վորտեղ որդանները մի բարդ ամբողջությամբ կապված են իրար, — դարձնի մի ինչ վոր կակուղ, անձն պարկ, դրված յերկու վոտնացուպերի վրա՝ յերկու հնգատամյա յեղաններով: Լենինը սրտանց բարձր ծիծաղեց: — «Այսա, թանգագին Կլարա, վոչինչ չես անի, մենք յերկուսս ել ծեր ենք: Մեզ համար բավական ե, վոր մենք գոնե հեղափոխության մեջ մնում ենք յերիտասարդ և առաջին շարքերումն ենք գտնվում: Նոր արվեստին մենք չենք հասնի, մենք նրա յետից քարշ պետք ե զանք»:

«Հիշողություններ Լենինի մասին», կ. Յետկին:

* * *

... Բաղմակողմանիության մտքով՝ Լենինը չափանց լիքը մարդ եր: Իր հետ արտասահման վերցնելով տնտեսագիտական գրքեր, այնուհանդերձ նա իր հետոն

առավ նեկրասովն ու Գյոթեն, Լենինը սիրում եր պոյեղիան, նա շատ եր սիրում յերածշտությունը: Յերածշտության համար, մի ժամվա ընթացքում լավ յերածշտի լսելու համար նա յերբեմն նույնիսկ աշխատանքը թողնում եր, վորով նրա մոտիկները ոգտվում եյին, վորպեսզի նրան ստիպեն գոնե մի քիչ հանգստանալ...

«Լենինի մասին հիշողություններից» Ն. Մեշչերյակովի:

* * *

Իր կյանքի վերջին շրջանի ընթացքում Վլադիմիր Իլյիչն հաղիվ եր պատահում ոգտվել արվեստի վայելքներից: Նա մի քանի անգամ յեղել եր թատրոնում, կարծեմ բացառապես Գեղարվեստականում, վորը շատ բարձր եր դասում: Այդ թատրոնի ներկայացումները նրա վրա մշտապես շատ լավ տպավորություն եյին վործում:

Վլադիմիր Իլյիչը շատ եր սիրում յերածշտությունը, բայց նրանից տրամադրությունը փչանում եր: Մի ժամանակ իմ բնակարանում լավ համերգներ եյին կազմակերպվում: Յերբեմն յերգում եր Շալյապինը, նվազում եյին Մեյչիկը, Ռոմանովի կվակին, Ստրադի վարիուսի կվարտետը, Կուսեվիցի Կին (կոնտրաբաս) և այլն: Յես շատ անգամ կանչում եյի Վլադիմիր Իլյիչին, բայց նա միշտ զբաղված եր լինում: Մի անգամ պարզապես ինձ ասաց, «Անշուշտ, շատ դուրեկան ե լսել յերածշտությունը, սակայն յերենակայեցիք, նա փչացնում ե տրամադրությունն: Յես այն մի տեսակ գժվարությամբ եմ տանում»: Մտաբերում եմ, ընկ. Ցյուրուպանակ, վորին մի յերկու անգամ հաջողվել եր Վլադիմիր Իլյիչին իր մոտ տանել՝ ընտանեկան կոնցերտի նույն դաշնակահար Ռոմանովի կու մասնակցությամբ, նույնպես ինձ ասում

155

եր, վոր Վլադիմիր Իլյիչը շատ մեծ բավականություն եր ստանում յերաժշտությունից, սակայն ըստ յերեւ-թին հոգված եր:

«Ենինը և տրվեստը» Ա. Լունաչարսկու.

* *

...Մի անգամ յերեկոյան, Մոսկվայում, Յե. Պ. Պետ-կովայի բնակարանում, Լենինը՝ լսելով Բեթհովենի Սո-նատը իսայ Դոբրովեյնի նվագածությամբ, ասաց:

«Յես „Appasionata“-ից լավ վոչինչ չգիտեմ. պատ-րաստ եմ ամեն որ լսել այս: Զարմանահրաշ, վոչ մարդ-կային յերաժշտություն ե: Յես միշտ հպարտությամբ, գուցե նայիվ, մանկական, — մտածում եմ. ահա թե ինչ հրաշքներ կարող են գործել մարդիկ»: Յել աչքերը կլոցելով, քմծիծաղով ավելացրեց՝ արտմած.

«Բայց — յերաժշտությունը հաճախ լսել չեմ կարող. ջղերիս վրա ազդում ե, ցանկանում ես ախորժելի հի-մարություններ ասել և շոյել մարդկանց գլուխը, վորոնք ապրելով ապականված դժոխքում, կարող են այդպիսի գեղեցկություն ստեղծել: Իսկ այսոր վոչ վոքի գլուխը չի կարելի շոյել, ձեռքդ կ'խածեն — և պետք ե զլիներին խփել խփել անխնա, թեպետ մենք, սկզ-բունքով դեմ ենք մարդկանց վրա գործ գրված ամեն մի բռնության: Հըմ, հըմ, սարսափելի ծանր պարտավո-րություն ե»:

«Վլադիմիր Լենին» Մ. Դորկու

* *

Զգեսք ե կարծել, վոր Իլյիչը, վորի մեջ այն ժա-մանակ արդեն (1904թ.) զգացրում եր առաջնորդը, հսուու յեր քնքություններից: Հիշում եմ, մի անգամ Ժընեւում մասք նրա և Նադեժդա Կոնստանտինովին հետ թատրոնումներինք: Նշանավոր Սարբա Բեռնարը

խաղում եր «Բամելիազարդ տիկին»-ը: Իլյիչը նստած եր ոթյակի մութ անկյունում: Յերբ յես նայեցի նրան—նա ամաչելով սրբում եր արտասուքը: Նա, պղղպա-տյա մարդը, արտասվելու չափ հուզվում եր սովորա-կան պիյեսայի լավ խաղից...

«Իմ հանդիպությունը լենինի հետ» Մ. Լյազովի:

* *

...Վլադիմիր Իլյիչը սիրում եր նույնպես յերաժշ-տություն լսել: Սակայն Սիրիի խուլ տայգայում (աք-սորում, Շուշենսկոյե գյուղ, 1897թ.) յերաժշտության վերաբերմք գործը լավ չեր: Ամբողջ յերաժշտու-թյունը կայանում եր մի քանի գարմոններում, վոր յերեկոները և տոներին անտանելի ճնդճնգում եյին գյուղի քեփ անող յերիտասարդության ձեռքին: Ի միջի այլոց, կար մի գիթառ, վոր Վլադիմիր Իլյիչը հաճախ նվագում եր:

...Իլյիչը վորպես վոլգացի, շատ սիրում եր քմա-հաճ և փոթորկալից գետը, վոր հոսում եր Շուշենսկո-յեից վոչ հեռու և հաճախ խմբով գնում եր գետափը՝ հանգստանալու:

Այստեղ հաճախ կարելի յեր լսել վոլգյան յերգերի մելամաղձուս սրտաբուխ մելոդիաները և Վ. Ի. գրեթե միշտ մասնակցում եր յերգեցողությանը:

«Վ. Ի. Լենին և սովորելու» Ա. Կերժենցի:

* Մ. Ի. Ռելյանովյանին 1897 թ. մայիսի 18-ին գրած նամա-կում Վ. Ի. գրում եր Շուշենսկոյե գյուղի մասին՝ «Շուշենսկու-ն վատ գյուղ չեւ հորիզոնում Սայանյան սարերն են կամ նրա ճյու-ղալորությունը. մի քանիսը բոլորովին ճերմակ են և նրանց վրայի ձյունը հազիվ թե յերբեցց հավելիս լինի: Ռւբեմն գեղարվեստա-տական մասից ևս վորեիցն բան կա և յես իգուր չեյի գեռ Կըս-նոյարսկում վոտանավոր հորինել: «Շուշենսկ, Սայանի ստորոտում...» Պրօ-բայց առաջին տողից դեմք ցավոք սրտի վոչինչ չհորինեցի» («Պրօ-լետարքակ քեռության» ամսագիր, 1929 թ. № 2-3),

Վ. Ի. ՆԱՄԱԿՆԵՐԻՑ, ԳՐԱԾ Մ. Ի. ՌԻԼՅԱՆՈՎԱՅԻՆ

«...Ի գեալ, Գլեբը (Կրժիժանովսկին) այժմ յերգեցողության մեծ սիրահար և դարձել, այնպես վոր իմ լուր ու մունջ սենյակները նրա գալով՝ շատ ուրախ դարձան և նորից լուցին նրա մեկնելուց հետո։ Բայց նա նոտաներ և յերգեր չունի։ Չե՞ վոր մեղ մոտ այդ զիբիլից շատ կար (այն ժամանակներից մնացած, յերբ մենք ել եյինք «գոռուու»)։ Յեթե նրանք վոչ վոքի հարկավոր չեն այժմ, ապա լավ կլիներ այդ ուղարկել նրան։ Նա շատ ուրախ կլիներ։ Բազիլը (Ստարկովը) — յերաժիշտ և (կիթառի) և նրա համար յերգեր կըներդաշնակեր։

4/I-1898 թ. Շուշենսկոյե գյուղ։

«...Ի՞նչ ձայն ունի Գլեբը... Հ'ըմ, հ'ըմ։ Յերեկ բարիտոն ե, ինչ ե: Ախար նա նույն բաներն ե յերգում, ինչ վոր մենք, պատահում եր, Մարկի հետ (Յելիզարովի) «բղավում եյինք» (ինչպես մեր դայակներ արտահայտվում)…»

7/II-1898 թ. Շուշենսկոյե գյուղ։

* * *

Մի ակնթարթի նման թռչում ե այն մի քանի որը, վոր հատկացված եր մեր մինուսինսկյան տոնական համագումարին (1899 թվի հունվարի 1-ի մոտերքը աքսորում) Շախմատ, ուրախ խոսք ու գրույց, դիսկուսիաներ, զբոսանքներ և նորից շախմատ, իսկ բազմացնության համար, նաև խմբական յերգեցողություն։

Հարկավոր ե, ի միջի այլոց ընդգել, վոր յերգը մեր ծրագրի մեջ վերջին համարների թվին չի պատկանում։ Յես արդեն ասել եյի Վ. Վ. Ստարկովի խմբեր կազմակերպելու վարպետության մասին և այն, վոր նա շատ մեծ ձգտում ունի այդ տեսակ եստերիքական

բավականության։ Բայց վոկալ հրապուրանքների մեջ հատուկ խանդավառություն և ցայտուն կյանք և մտցնում Վլադիմիր Լյախչը։ Յերբ բանը հասնում և մեր սովորական ուղղերտուարը կատարելուն, նա վոգեորշում և սկսում ե հրամանել։

« — Թող կորչի այդ տեսակ նրա բախտը » — բացականչում ե նա (Վաս. Վասիլյեիչի սիրած յերգն ե — յերկարաձիգ և մելամաղձոտ „така жі доля, о боже ж мій милій“), — Յեկեք սկսենք („зажарим“) „смело, товарищи, в ногу“ «Անվախ ընկերը...»

Յեվ խկույն եյեթ, խուսափելու համար հետագա պարլամենտական ձգձումներից՝ իր առաջարկված համարի հերթի ընական լինելու հարցի լուծման մասին, մի համարի, վոր անկեղծ ասած, մնացած ընկերության դահլիճն բավականին տարել ե, նա միով բանիվ, շտապում ե յերգել իր խոսդու և փոքր ինչ Փայշը ձայնով, վոր իրենից ներկայացնում եր բարիտոնի, բասի և տենորի միջինը։

Смело, товарищи, в ногу
Духом окрепнем в борьбе...

Յեվ յերբ նրան թվում ե, թե ազնիվ հասարակությունը բավականին հեշտությամբ չի շեշտում յերգի հաղթական տեղերը, նա բոցավառված աչքերով՝ սկսում ե յեռանդուն չափ խիել բոռնցքներով, անհամբեր վոտները դոփելով և, ի վաս հարմոնիայի տարրական կանոնների, ընդգծում ե հավանած տեղերը, լարելով իր ձայնական միջոցները, լսու վորում, շատ հաճախ, ի սարսափ Վասիլիյ Վասիլևիչի, բարձրացնելով մի վորեն պատասխանատու նոտա կես տոնով կամ մի ամբողջ տոնով...»

И водрузим над землею
Красное знамя труда,

վորոտում են նրա «մի տեսակ բարիտոնը», խլացնելով՝
մնացած բոլոր ձայները...

Մի բան, վոր խոսք ընկալ Վլադիմիր Իլյիչի եռտեսիքական բնության մասին, ապա լիսակտար պատկերը տալու համար հարկավոր և մի քանի շարիթներ ավելացնել:

Վաղիմիը իլյիչը վոչ միայն դուրկ չե նուբը ճաշակից, վոչ միայն նման չե քնքությաւններին, ետքետիկ զգացութիւններին անընդունակ չոր, կարծը մարդու քաղաքական գործի գերածեցված (ըստորոգիրանի) բնությամբ, փորպիսի պատկերացում կա իլյիչի մասին լայն հասարակության մեջ, այլ զարմանալի քնքույշ ե — յես կասեցի փորոշ սանտիմենտալականությունից վոչ գուրկ հօգու տեր եւ

* Типология и функции языка в "Свальбе" Григорий Каневский

$$(Y_i, \rho_i)$$

տըամագրություններ կամ թե, որինակ, յերբ Պ. Ա. Կրասիկովն իր ջութակից աղեղով դուրս եր քաշում Զայկովսկու բարկարութայի վճիտ, գեղեցիկ հնչյունները, Կ. Լ. Իլյիչը առաջինն եր, զոր նվազը վերջանալուց բռուն ծափահարում եր և պահանջում եր, ինչ ել լինի, կրկնել...

«Ղլանիմիր Իլիչի հարևանությամբ. Պ. Ն. Լեպեշինսկի»:

* * *

...Բայց ահա վերջանում են զբաղմունքների ժամերը* և յերեկոյան մենք՝ Վլադիմիր Իլյիչի գլխավորությամբ, դիմում ենք սրճարան Դպրոցական Անդրեյը (վոր պըռովկատոր գուրս յեկավ) — ուժեղ բարիտոն, կոնսսերվատորիայի աշակերտ — կազմակերպում և մի խումբ և 40 առողջ կոկորդներից հնչում են «Ստենկա Ռազին»-ը, «Դուքինուշկան» և այլն։ Մըճարանի շուրջը հավաքվում ե ոռոսական յերգերը հետաքրքրությամբ լսող ամբոխ։ Վլադիմիր Իլյիչը շատ երսիրում յերգեցողությունը, ինքը հաճախ ղեկավարում եր, Փալցետով հետը յերգում եր և անկեղծորեն վշտանում եր, յերբ մենք «զոռում» եյինք (Ճրալի կօձա) և զոռում եյինք ըստ նրա արտահայտության «վոչ խելքով», այլ խղճով** („не по разуму, а за совесть“):

* Φωτισμένης λαϊκού αρχαιολόγου (Ιανουάριος), 1910 έτος.

Սովորաբար Վաղիմիր Իլյիչը նաև թարգմանիչ եր, վոր մեղ և Փրանսիացիների համար դիտողություն-ներ եր անում մեր յերգեցողության մասին, բացի այդ, նա աշխատում եր մեղ սովորեցնել յերգել «Ինտերնացիոնալը», բայց մենք այնպէս եյինք կատարում այն, վոր բոլոր Փրանսիացիք, վորոնք գիտեյին «Ինտերնացիոնալը», ծիծաղում եյին մեղ վրա: Յեզ մենք այդպէս ել «Ինտերնացիոնալը» կանոնավոր յերգել չսովորեցինք:

«Ուսուցիչ-ընկերոջ հիշատակին» Ա. Քողաղավի

* * *

Թաղաքացիական պատերազմի շրջանում ուղեցալինել Վ. Ի. Լենինի մոտ: Այդ պատահեց այսպես: Կրեմլում մենք կազմակերպել եյինք մի համերգ, վորտեղ ներկա յեր Լենինը: Վ. Ի. հետաքրքրվեց խուլ գյուղի արտասովոր արվեստով և հետեւյալ որը ինձ հրավիրեց իր մոտ: Յես յեկա նրա մոտ այն ըովելին, յերբ նրա վերքը կապում եյին: Այդ նրան վիրավորելու որերին եր... Շնորհավորելով նրան իր առողջանալը, յես կարճ պատմեցի նրան, թե շատ տարի յե, վոր աշխատում եմ գյուղացոց մեջ և նրանցից ընտրում եմ մեր հարազատ յերգերը յերգողներին: Ուզում եմ հայտնարերել գյուղացիների ստեղծագործությունը: Իլյիչն ասաց.—«Այդ դեպքում, յեթե ձեղ մի բան հարկավոր լինի, գրեցեք ինձ և յես ձեղ այդ գործում կողնեմ»:

Յեղ ձիշտ վոր, Լենինն ոգնեց: Մենք ամեն տեղ բեմ եյինք գուրս գալիս, գնում եյինք, շրջում գավառները... Հին ուսական յերգեր ժողովող Մ. Յ. Պյատնիցկու զրոյցից:

* * *

Վաղիմիր Իլյիչը գեռնս արտասահմանում եմի-գրացիայի շրջանում՝ մեծ բավականությամբ հաճա-խում եր կինո (1908թ): Ն. Կ. Կրուպսկայան մատնա-

շնչում ե նաև, վոր նա շատ եր հետաքրքրվում գեռ Հոկտեմբերյան հեղափոխության առաջին շրջանում, թե չի՞ կարելի արդյոք մեղ համար ձեռք բերել գիտական նկարներ, վոր նա տեսել ե կամ վորոնց մասին լսել ե (Ն. Կ. Կրուպսկայայից՝ որինակ, վորն այն միջոցին, գեռնս եմիգրացիայի շրջանում, դիտել եր մանկավարժության վերաբերյալ գիտական նկարներ՝ Փարիզում և նրանց մասին պատմածով իր ժամանակին շատ եր հետաքրքրել Վաղիմիր Իլյիչին): Մենք գիտենք նաև նրա փայլուն գնահատականը հիդրավիկ յեղանակով տորֆի ստացման կինոնկարի մասին: Սակայն, անկախ գրանից, կան մի շարք տեղեկություններ նրա՝ դեպի կինո նկարներն ունեցած վերաբերմունքի մասին: Վաղիմիր Իլյիչը վորոշակի միշտ գնահատում եր և առաջին որերից սկսած սիրում եր խորհրդային կինո խրոնիկան: Դիբախտաբար, յերբ մեր խորհրդային կինո արտադրությունը նոր եր միայն սկսել վերածնվել, Վաղիմիր Իլյիչը այդ միջոցին տառապում եր հիվանդությամբ: Հիվանդության վերջին ամիսներում, զեկտեմբերին և հունվարի սկզբին, մի փոքր առաջ այն կատաստրոֆայից, վոր խլեց համաշխարհային հեղափոխության ձեռքից իր վոգեորիչ և սիրելի զեկավարին, նրա տառապանքները մասամբ մեղմացնում և նրան մեծ զվարճություն եր պատճառում կինեմատոգրաֆիք: «Պրավդայում» 1924 թ հունվարի 31-ին լույս տեսած հոդվածում գերմանացի բժիշկ, պրոֆ. Ռոֆեիդ Ֆերստերը, վորը բժշկում եր Վաղիմիր Իլյիչին, խոսում եր նրա կյանքի վերջին ամիսների մասին: «Նա շատ եր հետաքրքրվում կինեմատոգրաֆիայով և Գորկի-յօնմ հատուկ կինեմատոգրաֆիական սեանսներ կայացան»: «Լենին և կինո» գրքույկի հեղինակին, Գ. Մ. Բոլոյանսկուն, հաջողվել եր Սեղապկինոյի և Գոսկինոյի 163

առաքման փաստաթղթերի միջոցով պարզել Վլադիմիր Իլյիչի համար ստացվող նկարների բովանդակությունը... Այստեղ յեղել են և խրոնիկաներ մեծ քանակությամբ, և մեր խորհրդային կինոռեմագրությունները („Կոմբրիգ Իվանով“ և այլն) և տեսարանային, և պարզապես զվարձալի նկարներ:

Մենք Ն. Կ. Կրուպսկայայի հետաքրքիր վկայությունն ունենք Իլյիչի վերջին որերի այդ կինոգիտումների մասին: Այստեղ նույնական մատնանշում են, վոր հիվանդ Իլյիչը գրեթե ամեն որ մի ամսվա ընթացքում դիտում եր նկարները: Խորհրդային խրոնիկան նա միշտ մեծ բավականությամբ եր դիտում: Ինչ վերաբերում ե այլ նկարներին և մեր խորհրդային բեմադրումներին, Վլադիմիր Իլյիչը գրեթե միշտ նկարի միայն մի մասն եր դիտում: Սակայն Ն. Կ. Կրուպսկայան մատնանշում ե մի բնորոշ բացառություն: Դա վերաբերում է „Կոմբրիգ“ («Հրաշագործ») նկարին, նկարն, ինչպես հայտնի յե, իրենից ներկայացնում եր մի ախարի կոմեդիա, վոր հիմնական նիկոլայ Լիշտանի պատմական անեկդոտի սյուժեետի վրա և դրված ե հակակրոնական պրոպագանդայի պլանով: Մենք իր ժամանակին բոլորս ել անցանք այդ նկարի կողքից, առանձնապես վոչ մի բան չտեսնելով նրա մեջ: Բայց հիվանդ Իլյիչը նշեց այդ նկարը: Նախ, ի տարբերումն մյուս նկարներից, նա չհրաժարվեց նկարը դիտելուց առաջին մասից հետո, ինչպես այլ նկարները, այլ մինչեւ վերջը դիտեց այն: «Նկարը վորոշակի նրան դուք յեկավ, — մատնանշում ե նազեթղա Կոնստանտինովսկա Կրուպսկայան, — վորպես հակակրոնական բեմադրության մի ախար՝ ի զանազանութիւն: «Կոմբրիգ Իլյանով» նույնպես հակակրոնական նկարից, վոր նրան պարզապես դուք չեկավ: Դժվար կլիներ ճիշտ

ու մանրամասն ասել ու պարզել տարբերության բոլոր այն պատճառաբանությունները, վոր առաջ եր բերում Վլադիմիր Իլյիչը այս յերկու նկարները համեմատելիս»:

Ն. Կ. Կրուպսկայան յենթադրում ե, վոր Վ. Ի. Լենինի այս յերկու նկարներից ամեն մեկի նկատմամբ ունեցած տարբեր վերաբերմունքի պատճառը կայանում ե նրանում, վոր «Կոմբրիգ Իլյանովի» մեջ հակակրոնական պրոպագանդան պատահական բնույթ և կրում, վորպես կենցաղի մեջ ներհյուսած միջադեպ, մինչդեռ «Չուզուվորեց»-ում հակակրոնական պրոպագանդը հագեցված ե պարզ և ուշագրավ ձևի մեջ, կրում ե դասակարգային բնույթ:

«Кино-неделя» 1925թ. № 4 (51)

ԵԵՆԻՆԸ ՎԻՈՒՏԵՄԱՑԻՆԵՐԻ ՄՈՏ*

...Լենինը ամեն ինչի մասին խոսում եր մեղմ, հեղական ժպիտով, կարեկցությամբ, իսկ մեկ-մեկ՝ հայրական խստությամբ: Խոսեցինք արվեստի մասին: Յերիտասարդությունը առաջականացներից եր և, ինչպես

* 1921թ. փետրվարի 25-ին Վ. Ի. Լենինը այցելեց Մոսկվայի Քարձրագույն Գնդարվեստական Տեխնիքական Արհեստանոցների (Պատուական) հանրակացարանը, վորտեղ մնաց մոտ յերեք ժամ: Վ. Ի. այցելության տպավորությունները տես վերը (եջ 131—132): Իր «Լենին ե օր ոտար և հայկ և առաջարկություններից մեջ (1926թ.) Ա. Վ. Լունաչարսկին առաջ ե բերում Վ. Ի. խոսքերը, վոր նա ասել եր Ա. Վ.-ին վխուսեմացիների հետ ունեցած զրույցից հետո՝ «բայց և այնպես, այդ բնչ լավ տղաներ են հրաշալի յերեխաներ են. ինչ լավ կլիներ, յեթե նրանց յեռանդը կարելի լիներ ուղղել մի վորեն այլ գործի մեջ, մի վորեն այլ հունվ. նրանցից կարող եր մի լավ բան գուրս գալ լավ ինժեներ, լավ բժիշկ, բայց վախճանում եմ, վոր նրանցից լավ նկարիչներ դուրս չգան:

ընդունված ե, արվեստի մեջ կոնստրուկտիվիդմից աչ վոչինչ չեր ճանաչում: Նրանց մեջ կար միայն մեկ ատելի նկարիչ, վորին նրանք արհամարհանքով մաւլյար եյին անվանում, բայց վորին այդ հանգամանքը չեր իանգարում շատ լավ ռեալիստական բաներ նկարել: Յեվ հենց նրա դործերից ել գոն եր մնացել լենինը: «ԱՌ, սա, — ասում ե, — յես հասկանում եմ: Այս ինձ ել ե հասկանալի, ձեզ ել ե հասկանալի, բանվորին ել, և ամեն մեկին ել հասկանալի յե: Իսկ ի՞նչ կա, ասեք խնդրեմ, ձեր նոր աշխատանքներում: Այնտեղ մարդկանց դեմքերին յես վոչ աչք, վոչ ել քիթ եմ տեսնում»:

Գրականության հետ նույն բանը ստացվեց. «Պուշկինին հասկանում եմ և ընդունում, Նեկրասովին — ընդունում եմ, իսկ Մայակովսկուն, ներեցեք, չեմ հասկանում»:

«Բանի անդամ եմ քեզ ասել, Վոլոդյա, ծիծաղում ե Նազեֆդա Կոնստանտինովսան, — վոր դու վերցնես Մայակովսկուն ու կարդաս: Դու նրան գուցե կը հասկանայիր: Դու միայն վոչ մի կերպ գլուխ չես դնում»:

Լենինի ձեռքն ընկալ „Սովորից“ խմբակի գրքույժիւ: Նրան բացատրեցին, վոր „սովորից“-ը նոր արվեստի հաստատողներն են („утвердители нового искусства“): Նա ծիծաղում ե. «Դե, հապա մի մտածեցնք, ընկերներ, ինչի՞ նման ե դա՝ — Ունուվիս: Ո՞վ կհասկանա այդ»: Ուսանողներն սկսում են գնետ խփելո. Վ. Իլյիչ, իսկ Սովորիկոմը՝ միթե դա հասկանալի՞ յե. Սովորիկոմ»:

«Դուք արդարացի յեք, ընկերներ, Սովորիկոմը — հասկանալի չե: Յեվ հարկավոր չեր գրականության մեջ կրծատված անուններ մտցնել. նրանք մեզ հարկավոր են յեղել արտակարգ հանգամանքների ազդեցության

ներքու Դրա համար և միայն վոր մենք նրանց պետք ե հանգուըժենք»:

Դարձյալ շատ բան խոսվեց... . . . լենինը խոստացավ մեկ անգամ ել գալ ուսանողների մոտ:

Յերեք տարի սպասեցինք և սպասելով մնացինք: Շենինը վխուսեմասցիների մոտ Մ. Գարովսկու:

* *

«Նու, իսկ ի՞նչ եք անում դուք դպրոցում, յերեկի պայքարում եք Փուտուրիստների դեմ: — Նորից խմբով. — «Վահ, Վլադիմիր Իլյիչ, մենք բոլորս ել Փուտուրիստներ ենք»:

— Ո՛, այ թե ինչպես, դա շատ հետաքրքիր ե, պետք ե ձեզ հետ վիճել, — հիմա դեռ յես չեմ վիճի, — դուք ինձ կհաղթեք, յես այդ հարցի մասին քիչ եմ կարդացել. անպատճառ կ'կարդամ, կկարդամ: Պետք ե, պետք ե ձեզ հետ վիճել»:

«Մենք, Վլադիմիր Իլյիչ, ձեզ գրականություն կբերենք: Մենք հավատացած ենք, վոր դուք ել Փուտուրիստ կլինեք: Զի կարող լինել, վոր դուք հին, վտած խլամի կողմնակից լինեք, մանավանդ, վոր Փուտուրիստները առայժմ միակ խմբակն ե, վոր մեզ հետ ե գալիս, բոլորն ել գնացել են Դենիկինի մոտ»:

Վլադիմիր Իլյիչը ծիծաղից թուլանում ե:

«Նու, յես հիմա ուղղակի վախենում եմ ձեզ հետ վիճելուց, ձեզ հետ յուղ գնալ չի լինի. այ, կկարդամ, տեսնենք»:

Տղաները պատրաստ են նշանակել մահացու մենամարտի որն ու ժամը: Վ. Ի. կոմիկ ձեռով խնդրում է այնուամենայնիվ կարդալու ժամանակ տալ նրան, ապա թե վոչ, նա չի կարող պատրաստվել:

«Դեն, ցույց տվեք, ինչ եք անում դուք. յերեկի պատի թերթ եք լույս ընծայում»:

«Ինչպես չե, արդեն մոտ 20 համար լույս ենք ըն-
ձայել»:

Հանում ենք մեր պատի թերթի 1-ին և-ը:

Կլադիմիր իւյիչը գիտավորյալ կերպով յերկար
կարդում և Մայակովսկու լոգունգը՝ «Мы разно-
чики новой веры — красоте задающей железный тон,
чтобы природами хильми не сквернили скверы, в
небеса шарахаем железо-бетон». *

«Шарахаем, шар, иш կարծես ռուսերեն չի, հը»:

Մեկը բերում ե իմ նկարը, վոր պատրաստած եր
կրապոտկին հիշատակին նվիրված ժողովածուի
համար: Վլադիմիր իւյիչը թունոտ նայում ե և նկա-
րին և հեղինակին, ու հարցնում ե. «Իսկ այս ի՞նչ ե
ներկայացնում»:

Ես ամենայն յեռանզով ջանում եմ ապացուցել վոր
դա վոչինչ չի պատկերացնում. հին նկարիչները խաբում
են իրենց և ուրիշներին, թե իրենք կարող են պատ-
կերել — վոչ վոք չի կարողանում, իսկ մենք սովորում
ենք և մեր խոնդիրն ե հանդիսանում կապել արքեստը
քաղաքականության հետ:

Վլադիմիր իւյիչը հանգիստ կերպով ինձ թողնում և
շունչ քաշեմ և մի փոքրիկ հարց ե տալիս.

«Ենու, իսկ դուք ինչպես կկապեք արքեստը քաղա-
քականության հետ:» — Զանազան կողմերից շրջում-
դարձնում ե նկարը, կարծես նրա մեջ վորոնելով այդ
կապը:

— Ախ, չե, Վլադիմիր իւյիչ, մենք դեռևս չենք
կարողանում, բայց և այնպես մենք կհասնենք դրան:

* «Մենք տարածողներն ենք նոր հավատի, վոր գեղեցկու-
թյանը յերկաթե տան և տալիս, վարպեսզի զառամած բնություն-
ներով չպահեն սկվերները՝ դեպի յերկինք շրիկացնում ենք յեր-
կաթյա բնուն:»

(Ծ. թ.)

իսկ առայժմ մենք այդ բանի համար պատրաստվում
ենք: Իսկ այդ՝ հիմնական անալիտիկ ելեմենտների վեր-
լուծումն ե, — վորպեսզի սովորենք տիրապետել նրան...»

Զգում եմ, վոր յերկու խոսքով վոչինչ չեմ կարող
պատմել: Սկսում եմ շփոթվել: Վ. իւյիչն ոգնության ե
գալիս:

«Նու, այդ դեպքում անպատճառ հարկավոր ե, վոր
յես կարդամ. այ, այ հետեւյալ անգամ կդամ հատկապես
ձեզ հետ վիճաբանելու:»

Կողքին նստած նադեժդա Կոնստանտինովսան նրան
նկատեց.

«Դե, դու յել, Վոլոդյա, ի՞նչ ես շարունակ խոստա-
նում. չե վոր յես առաջարկում եյի քեզ, իսկ դու միշտ
հետաձգում ես:»

Վլադիմիր իւյիչն սկսեց հանաքի տախ թե ինքն
այնուամենայնիվ ժամանակ կճարի և կկարդա: «Յես
նոր իմացա, — ասում ե, — Փուտուրիստների մասին, և
այն ել՝ լրագրային բանավեճի կապակցությամբ, իսկ
բանից զուրս ե գալիս, վոր Մայակովսկին ինձ մոտ
մի տարուց ավելի յե, ինչ վարում ե Ռուսան:» Հարցեց
մեզ՝ ի՞նչպես և դուր գալիս մեզ Մայակովսկին:
Սակայն այստեղ մեր կարծիքները բաժանվեցին. բոլորը
իրար յետեկց սկսեցին ապացուցել առանձին տեղերի
առավելությունները Մայակովսկուց, և ամեն-
սկու „Պարօնայա օbednja“-ից: Մեկը նույնիսկ ակ-
նարկց իմաժինիստների մասին. բայց բոլորը այնպես
հարձակվեցին նրա վրա, վոր պարզ եր զբանից, թե
իմաժինիստները մեր համակարությունը չեն վայելում:

Վ. Ի. ուշագրություն դարձրեց նոր ձևով կրծատ-
ված մեր գպրօցի անվան վրա՝ „Վխուտեմաс“ և իսկույն
սկսեց անսխալ կերպով բանալ կրծատումները: Մենք
զարմացած եյինք մնացել հաճույքի զդացմունքով հան-
գարմացած եյինք մնացել հաճույքի զդացմունքով հան-

դերձ, և հարցը ինք Վլադիմիր Իլյիչին, թե ի՞նչպես ենա հավանում խորհրդային կրծատման ձևերը: Վլադիմիր Իլյիչը սկսեց շատ կոմիկ կերպով զղջալ իր մեղքերը, վոր ինքն ել մեղսակից եւ այն բանում, վոր փշացրել եւ մեծ, հզոր ռուսերեն լեզուն նրանով, վոր ինքն եւ թույլ տվել «Սովորակօմ», «Կցիկ» անունները: Մենք, ընդհակառակը, մեր պաշտպանության տակ առանք կրծատումները, ապացուցելով նրանց հարմարությունը...

...— «Նու, ինչպես եւ, դուք վիճաբանում եք, Մարքսը, Ենգելսը կարդեմ եք»:

— Կարդալը կարդում ենք, բայց մեծ մասը՝ ըստ մասնագիտության: Գլխավորապես գործնականով ենք պարապում, իսկ յերեկոները վիճում ենք:

Առակցությունը նորից անցավ գրականությանը և թատրոնին: Մենք վոգերությամբ ապացուցում եյինք «Միստերիա-Բուֆֆ»-ի* առավելությունները և սկսեցինք պնդել վորակեսղի Վ. Իլյիչն անպատճառ գնա թատրոն: «Նակազ» տվինք նաղեժդա Կոնստանտինովային նախապետական կայսերական առաջնորդությանը և առավելությունը առաջնորդությանը: Նաղեժդա Կոնստանտինովային ասում եւ, թե ինքը նրան առաջարկել եւ գնալ, բայց նա զրադշած եր և հրաժարվում եր:

«Իսկ ինչպես եք համարում Լունաչարսկու գործերը. որինակ „Մարի“-ն»:

* «Միստերիա-Բուֆֆ» — Վլ. Մայակովսկու «մեր եպոխայի հերոսական և սատիրիկ պատկերավորություն ե», դրված եր Վ. Սեյբերովիկի և Վ. Բերուգովի բևմագրությամբ՝ ԾԸՓԸԾ 1 թատրոնում (հետագայում Վ. Սեյբերովի թատրոն): «Միստերիայի պրեմյերան կայացավ Մոսկվայում 1921 թ. մայիսի 1-ին, մինչդեռ Վ. Իլյիչը զրույցը վխուտեմասցիների հետ 1921 թ. փետրվարի 25-ին եր: Հատ յերեսոյթին՝ խոսքը պյեսի մասին եր (նախորդը տպագրված) և վոչ թե ներկայացման:

Ս. Դ.

Մեզանից վոչ մեկն այդ ժամանակ չեր կարդացել Լունաչարսկու ակադեմիկ գրվածքը և մենք վոչինչ չերինք կարող պատասխանել: Հարցը ինք Իլյիչի կարծիքը: Նա ծիծաղելով պատասխանեց: — «Նու, այդ նայած թե ում ինչպես: Ա՛յ, յես Մայակովսկուն մի քանի անգամ փորձել եմ կարդալ, և վոչ մի կերպ յերեք տողից ավել չերի կարող: շարունակ քունս տանում ե: Մի կերպ, մի անգամ կպատրաստվեմ, կստիպեմ ինձ մի կերպ դիմանալ, նու, իսկ ոպերա գնում եք: — հարցը ցը մեզ Վ. Իլյիչը:

«Այնտեղ արդեն մեղ համար վոչ մի հետաքրքրական բան չկա»:

«Ինչպես թե, իսկ այ, ընկ. Լունաչարսկին շատ եւ աշխատում ոպերան պահպանելու համար»:

Վլադիմիր Իլյիչը խորամանկ կերպով դիտում եր մեզ: — «Չե վոր դուք ինքներդ վոչ մի նոր բան չեք մատնանշում — հապա ինչ անենք»:

Տղաները ամբողջ ուժով աշխատում են դուրս հանել Մայակովսկու համար Վլադիմիր Իլյիչին, վոր նորը կա և իրար մեջ վեճի յեն բռնվում, թե վոր հատվածն եւ ավելի լավ: Վլադիմիր Իլյիչը կետ նպատակին կրավ: Մենք վոչ մի կերպ չենք կարողանում մի վորեն բանի վրա կանգ առնել — բոլորը մոլեգնաբար իրենցն եյի ապացուցում: Յես ինքը մեծ ուժ եմ գործ դնում և հանկարծ հայտարարում եմ: — «Անշուշտ, Վլադիմիր Իլյիչ, նորը գեռես քիչ ե, բայց մենք սովորում ենք, պիտք եւ աշխատենք: մենք տարբեր կերպով ենք հասկանում այդ նորը, բայց գրադիմաց մենք միաբերան գեմ ենք Յեկանիայի Ոնեգինին: Յեկանիայի Ոնեգինները մեզ ձանձրացրել են»: Վլադիմիր Իլյիչը ուղղակի թուլանում եւ ծիծաղից: Տղաները միաբերան ձայնակցեցին. «Ի հարկե, մենք դեմ ենք Յեկանիայի Ոնեգինին»:

«Այ, թե ի՞նչ. դուք ուրեմն Յեղենից Ոնեգինին
դեմ եք: Նու, այդ գեղքում յես պետք ե լինեմ կողմ,
չե վոր յես հին մարդ եմ: Իսկ ի՞նչպես եք համարում
Նեկը առ զի՞ն»:

Սյստեղ մեր կարծիքները մասնատվեցին. մի քա-
նիսը կողմ եցին, վոմանք դեմ, մի խոսքով արտա-
հայտվեցին այն մտքով, վոր մեր ժամանակի համար
նա հնացած ե: Մեզ այժմ այլ բան ե հարկավոր:

«Այդպես, այդպես, կնշանակի դուք Յեղենից Ոնե-
գինին դեմ եք»: Էստ յերենոյթին նրան այդ ձևակեր-
պումը դուր եր յեկել:

«Այս, Վլագիմիր Իյիչ. մենք հույս ունենք, վոր
դուք ել մեզ հետ դեմ կլինեք այդ նվազոցին: Այժմ դրա
համար ուղղակի ժամանակ չի լինում!»:

«Այ, հետեւյալ անգամ կգամ, այն ժամանակ կվի-
ճենք»:

Արդեն յերրորդ ժամն եր: Հյուրերը պատրաստվե-
ցին գնալու, Վլագիմիր Իյիչը դարձյալ կատակեց եկեկ-
տրականության մասին: — «Նու, իսկ դուք, համենայն
դեպս, վաղ քնեցեք, թե չե՞ ի՞նչ, — սովորելը կսովորեք,
իսկ Յեղենից Ոնեգինի դեմ ուժներդ չի բավիր: Խնա-
յեցեք, խնայեցեք ձեր եներգիան — նա պետք կգա»:
«Լենինը վլսուտեմասցիների կոմմունայում» Ս. Սենկինի:

* * *

...Կրկնում եմ, վոր իր հստետիկական համակրու-
թյուններն ու հակակրությունները Վլագիմիր Իյիչը
յերբեք դեկավարող գաղափարը չեր դարձնում:

«Լենինը և արվեստը» Ա. Վ. Լունաչարսկու:

1. Արվեստի մասին Լենինի ունեցած տեսակետների
պարզաբանումն ու տարածումը այն կարեռագույն
միջոցն ե հանդիսանում, վոր ոժանակելու յե խորհր-
դային գրականության զարգացմանը՝ մասնավանդ այժմ,
յերկրորդ հնգամյակում, յերբ խորհրդային գրականու-
թյան առաջ դրված ինդիրները ստանում են հսկայա-
կան նշանակություն, յերբ մեր գրականությունը դառ-
նում ե կապիտալիզմի մնացորդները կենցաղից ու գի-
տակցությունից արմատախիլ անելու հզոր միջոց, յերբ
վորդ խորհրդային գրականությունը վերակառուցվում
է համաձայն Համկոմկուսի կենտկոմի 1932 թ. ապրիլի
23-ի վորոշման:

Լենինի ամբողջ ուսմունքը՝ իմպերիալիզմի եպո-
խայի, պրոլետարական հեղափոխության և պրոլետա-
րական դիկտատուրայի մասին և հատկապես փիլի-
սոփայ ու թյանը՝ նվեր ված նրա աշխատու-
թյունները («Եմպերիոկրատիզմի և մատերիալիզմ»),
Հեգելի «Գիտության տրամարանությունը» գրքի կոն-
սպեկտը — ժողովածու հատոր IХ-րդ և XII-րդ.): Կ.
Մարքսի, Ֆ. Ենգելսի և Ստալինի աշխատությունների
հետ միասին կազմում են այն տեսական հիմքը,
վորի վրա կառուցվում ու կառուցվելու յե Մարքս-
Լենինյան արվեստագիտությունը: Պարզ ե, ուրեմն,
վոր Լենինի դերը արվեստագիտության և գրականա-
գիտության բնագավառում չի կարելի սահմանափակել 173

միմիայն այն մի շարք հողվածներով ու արտահատությաններով, վոր հավաքված են սույն ժողովածույի մեջ:

Սկզբունքային նշանակություն ունեցող այս կարելվոր հանգամանքի վրա ե, վոր չի դրել շեշտը Ա. Վ. Լունաչարսկին իր առաջարանում. անհրաժեշտ ե հատկապես ընդգծել, վոր Լենինը մեզ թողել ե վոչ «միայն հատվածներ ու ակնարկներ», այլ և թողել ե վիլխոփայության բնագավառի այն հսկա ժառանգությունը, վորի թերագնահատությունը արվեստի բնագավառում յևս առաջցնում ե իդիալիստական և մեխանիստական արվեստագիտական կոնցեպցիաներ:

Անհրաժեշտ ե ընդգծել նաև, վոր մասնավորապես հսկայական և Լենինի գերը սուբյեկտիվ-իդեալիստական, մախիստական եստետիկայի, (վոր գլխավորում եր ընկ. Լունաչարսկին) եյությունը մերկացնելու, նրա միթոդոլոգիական և, սոցիալ-քաղաքական արմատները դիմակաղեծ անելու խնդրում: Այդ հարցի մասին Լենինը արտահայտվել ե իր «Եմպերիոկրիտիզմ» և մատերիալիզմ» դրում:

Տոլստոյի ստեղծագործությանը քաղաքական սխալ գնահատական տվող մախիստ Բաղարովի հոդվածի գեմ և ուղղված նաև Լենինի «Տոլստոյն ու պրոլետարական պայքարը» վերտառությամբ հոդվածը, վոր գետեղում ենք ժողովածույի հայերեն թարգմանության մեջ և վորը ուսւերեն ժողովածույում տեղ չի գտեր

Տեխնիկապես հնարավորություն չունենալով զետեղելու ժողովածույի մեջ Լենինի մի շարք այլ հատվածներն ու արտահայտությունները կուլտուրայի, արվեստի, գրականության և հարակից խնդիրների մասին, լրացուցիչ նյութերի վերաբերյալ ընթերցողների ուշադրությունն ենք հրավիրում „Правда“-ի հրատարակությամբ լույս տեսնող „Կнига и пролетарская ре-

воляյա“ ամսագրի 1933 թվի № 8 գրքում զետեղված մանրամասն և արժեքավոր բիբլիոգրաֆիայի վրա:

2. Ի նկատի ունենալով, վոր սույն ժողովածույում հավաքված լենինյան բնագրերը հայերեն լեզվով լույս են տեսնում առաջին անգամ, խմբագրությունս անհրաժեշտ համարեց վերականգնել գրքույիկի Ա-րդ ուսումներեն հրատարակության մեջ Լենինի հոդվածների նկատմամբ. կատարված կրճատումները: Վերականգնումները կատարված են ըստ Լենինի ժողովածույի Ա-Ա-րդ հրատարակության և նրանք կարենու են վոչ թե ձևական այն պատճառով, վոր լենինյան տեխնուրը հայերենում լինեն լրիվ, այլ և այն կարենու պատճառով, վոր վերականգնված հատվածները միանգամ ևս շեշտում են այն սկզբունքային հանգամանքը, վոր Լենինը արվեստի խնդիրները շարունակ դիտել ե կոնկրետ քաղաքական կյանքի առնչությամբ և պրոլետարիատի դասակարգային պայքարի տեսանկյունով:

Գ. Ա.

Վ. Ի. հոգվածներն ու ճառերը արտասպամում են Վ. Ի. Լենինի յերկերի ժողովածույի տեքստերից (ГИЭ): Վ. Ի. նամակագրությունը առնված և «Լենինյան ժողովածուներից» (I—IV) և „Красная летопись“ ամսագրից (1925 թ. № 1): Դուստրեն լեզվի զամանակին դիմուլությունը «Правда-ից 1925 թ. № 76. Վ. Ի. գրությունը ընկ. Լիտկենսին՝ „Кино-Арк“ պարբերական թերթից 1925 թ. № 1: Վ. Ի. նամակները՝ Մ. Ա. և Մ. Ի. Ռ. Ռուսանովներին „Пролетарская Революция“ ամս. 1929 թ. №№ 2—3 և 4: Ռեկա Կո-ի նատարքականության մասին «Физиология» թերթից՝ 1920 թ. I/XII. Ժակը Պրոլետականության մասին «Физиология» թերթից՝ 1920 թ. I/XII.

ԺԱՄԱԿԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՆ.

- Ն. Ալլոման. Ինչպես եյի յես կաղապարում Լենինին, „Проектор“ 1924 թ. № 6.
 Յա. Բերդին. Առաջին հանդիպումները Վ. Ի. ին («Փրավդա», 1928 թ. № 18).
 Վ. Բոգուշևիչ. Ենքեք հանդիպում Վ. Ի.-ն (ժող. «Առաջին տարեդարձը», „Моск. Рабочий“-ի հրատարակութ. 1925 թ.)
 Գ. Բոլոյանսկի. Լենինը և կինոն. 1925 թ. (արժեքագործ աշխատություն՝ ալյումին ալյումին նյութի համար):
 Վ. Բոնչ-Բոլուկի. Ինչպես եր աշխատում Վ. Ի. („Читатель и писатель“ 1928 թ. № 2) Լենինը և Տալմաոյը („Огонек“, 1927 թ. № 46). Ինչ եր կարդ ում Վ. Ի. 1919 թ. («Կինո-քրոնիկ», 1927 թ. № 11—12). Լենինը՝ զրականագետների և գիտնականների աշխարհում („На лите. посту“ 1927 թ. № 20).
 Ա. Վարոնսկի. Անցյալից. („Проектор“ 1927 թ. № 6).
 Յա. Գանեցի. Վ. Ի. Լենինը Մ. Պորկու մասին („Правда“ 1928 թ. № 75).
 Մ. Գլյասոներ. Հիշուղություններ (ժող. „О Ленине“, Լ. Բ. Կամենկի խմբագրությամբ, ГИЭ 1924 թ.)

- Մ. Գորկի. «Վլադիմիր Լենին» („Русский современник“ 1924 թ. № 1) Նամակ Լենինը. որդ. „Правда“-ից՝ 1928 թ. 28/II:
 Ա. Դոգատով. Ուսուցչի լուկերոջ հիշատակին („Труд“ 1926 թ. № 22):
 Ա. Ի. Կալինին. Գեղարված Աշխատավորների Համամիութենական 5-րդ Համագումարում արտասահմած ճառը 1925 թ. մայիս (սղագրություն):
 Լ. Բ. Կամենսկ. Բլյուֆի գրական ժառանգությունը և յերկերի ժողովածուն („Правда“ 5/VII 1924 թ.): «Կինը մասնակիություն» („Петроградская Правда“ 1920 թ. № 199):
 Ա. Կիրժնից. Լենինը Սիբիրում („Сибирские Огни“, 1924 թ. № 1):
 Պ. Կողան. Պորկու մոտ. (ժող. „О Горьком“ ГИЭ. 1928 թ.):
 Բ. Կոցին. Մի քանի տող նրա մասին. („Вестник раб. искусств“, 1924 թ.).
 Գ. Մ. Կրժիկանովսկի. Վլադիմիր Լենինի մասին (ГИЭ. 1924 թ.):
 Ն. Կ. Կրուպսկայա. Վլադիմիր Լենինի մասին („Правда“, 11/IV 1924 թ.) Ինչ եր դուր գալիս Վ. Ի.-ին գեղարվեստական գրականությունից (ալմանախ „Удар“ 1927 թ.): ՈՍՖԵՆԸ Դիլ. քաղաքավարի նախագահությանն արտ. ճառը՝ 1927 թ. աշնանը (սղագրություն):
 Թ. Կ. Յերրորդ սերնդի դատաստանը („Веч. Красная Газета“ 1928 թ. № 9):
 «Լենինը՝ կինոցուցադրումներին» („Кино-Неделя“ 1925 թ. № 4):
 Պ. Ն. Լեպեհնովկի. Վ. Ի.-ի հարևան. „На повороте“ ГИЭ, 1923):
 Ա. Վ. Լունաշարսկի. Լենինը և արվեստը („Художник и зритель“ 1924 թ. № 2—3) Լենինը և կինոն („Пролеткино“ 1923 թ. № 1—2) Լենինը՝ գիտություն և արվեստի վերաբերմամբ („Научный работник“, 1926 թ. № 1) Թատրոնական կուսակցության արտասահմած ճառը („Путь развития театра“ изд. Теа-кино-печать. 1927 թ.) Դրականության կուսակցության արտասահմած թյանն արտաս. ճառը (сб. „Вопросы культуры при диктатуре пролетариата“ ГИЭ 1925 թ. ՄԱՏ-ի XXX ամյակի առթիվ կայացած նիստում արտ. ճառը (սղագրություն): Դրականության պայքարը արվեստի մեջ („Искусство“, 1929 թ. № 1—2):

- Ա. Լյազով. Իմ հանդիպումները Լենինի հետ („Молодая Гвардия“ 1924 թ., № 2—3);
- Բ. Մալկին. Լենինը և Գորկին. „Правда“ 1928 թ., № 75);
- Շ. Մանուչարյան. «Հանձ և լնչպես եր կարդում Լենինը» („Записки Института Ленина, 1928 թ. III);
- Ս. Մերկուրով. Ապագայի ճանապարհին („Известия ВЦИК“ Յ մարտի 1929 թ.);
- Ն. Լ. Մեջքերյակով. Լենինի մասին հիշողություններից („Печать и революция“, 1924 թ. № 2);
- Դ. Պետրիշևսկի. Լենինը և ոռոսական յերգը („Крас. ткач“, Ив. Вознесенск, 1925, № 16—17);
- Վ. Պոլանսկի. (Պ. Ի. Լեբեդե) Լենինը և զրականությունը („Под знаменем Марксизма“ 1924 թ. № 2);
- Կ. Ռադեկ. Գրականության կուռ. խորհրդակցությանն արտահանուր (см. „Вопросы культуры...“ ГИЗ. 1925 թ.);
- Ո. Մենկին. Լենինը վկանումասի կոմմունիստ („Молодая Гвардия“ 1924 թ. № 2—3);
- Լ. Սասնովսկի. Խնչու յեր սիրում Վ. Ի.-Հը Պուշկինի („Правда“ 1924 թ., № 127) իլլինը և Սատիրան („Крокодил“ 1924 թ. № 10);
- Մ. Տաղովսկի. Թանգարակին հյուրը. („Огонек“, 1924 թ., № 10);
- Կ. Ցետկին. Հիշողություններ Լենինի մասին („Коммунист“ 1924 թ. № 27);
- Ա. Շապովալով. Հիշողություններ Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին. („Пролет. Революция“ 1929 թ., № 1);
- Կ. Շերիդան. Ինչպես եիր յես կաղապարում Լենինին („Заря Востока“ 1926 թ., № 1084);
- Յա. Յակովիս. Գեղարվեստական գրականության նվիրված կուռ. խորհրդակցությանն արտ. հանուր („Вопросы культуры“ ГИЗ, 1925 թ.);

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. ՂՈՒՆԱԶԱՐՅԱԿԻ. Լենինը և արվեստը	5
ՍԻՄ. ԴՐԵՅԴՆԵՆ. Կազմովից	9
Մ. Ի. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ.	
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԻՆԵՐԸ.	
Վ. Ի. ԼԵՆԻՆ. Կուլտուրայի մասին	17
« « Պրոլետարական կուլտուրայի մասին	20
« « Կուսակցական կազմակերպությունը	
և կուսակցական գրականությունը .	23
« « « Հանձ անելուց	33
« « Լուսժողովումատի աշխատանքի մասին	—
Ժամանակակիցները պատմում են՝	
Կ. Ցետկին	34
Ա. Շապովալով	39
Ա. Մերկուրով	41
Ա. Լունաշարսկի	—
Ռեկեն նամակից՝ «Պրոլետարիա» մասին	42
Յա. Յակովիս	43
Ա. Լունաշարսկի	45

ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ԿԻՆՈՒ.	62
Վ. Ի. ԼԵՆԻՆ. ԳՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԿ. ԼԻՄԱԿԵՆԱԲԻՆ	47
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ պատմում են՝	
Ա. Լունաչարսկի	48
Ք. Կողին	57
Դ. Լեշենկո (զրոյց)	56
Վ. Բոնչ-Բրույեր	61
ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ԹԱՏՐՈՆԸ.	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ պատմում են՝	
Մ. Կալինին	62
Ա. Լունաչարսկի	—
Պ. Լեպեշինսկի	64
Ա. Լունաչարսկի	66
ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ.	68
Պատմում են՝ Ա. Լունաչարսկի	
Մ. Ա. ԼԵՆԻՆԻ ՎՈՐՓԵՍ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏ.	
ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ՏԱԼԱՍՈՅՑ.	
Վ. Ի. ԼԵՆԻՆ. Լ. Տալստոյը վորպես ռուսական հեղափոխության հայելին	71
« « Լ. Ն. Տալստոյը	79
« « Լ. Ն. Տալստոյը և ժամանակակից բանվորական շարժումը	87
« « Լ. Ն. Տալստոյը և նրա եպոխան	92
« « Լ. Ն. Տալստոյը և պրոլետարական պայքարը	98
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ պատմում են՝	
Մ. Գորկի	100
Վ. Բոնչ-Բրույեր	101

ԼԵՆԻՆԸ ՑԵՎ ԳՈՐԿԻՆ.	62
Վ. Ի. ԼԵՆԻՆ. Գորկուն գրած նամակներից	104
« « Բուրժուական մամուլի առասպելը	105
« « Հրապարակախոսի նոթերից	—
« « Նամակներ հեռվից	107
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ պատմում են՝	
Լ. Բ. Կամհնե	108
Ա. Վ. Լունաչարսկի	109
Բ. Մալին	110
Յանեցկի	113
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՑԵՎ ԳՐԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԿԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻՑ.	
Վ. Ի. ԼԵՆԻՆ. Նեկրասովի և Սալտիկով-Շչեդրինի մասին («Կոմս Գեյդենի հիշատակին»)	118
« « Շչեդրինի մասին («Պլեխանով և Վասիլի»)	119
« « Շչեդրինի մասին («Հաղթանակող ստորոթյունը»)	—
« « Նեկրասովի և Շչեդրինի մասին («Դարձյալ մի արշավանք դեմոկրատիայի դեմ»)	120
Սինկերի մասին («Անգլիական պացիֆիկմը»)	—
Բարբուսի մասին («Ա-ըդ Խնաերնացիոնալի խնդիրները»)	121
« « « Տաղանդավոր գրքույկը» (Ավերչենկո)	—
Մայակովսկու մասին (1922 թվի մարտի 6-ի ճառից)	124
Ռուսաց լեզվի զոման մասին	125

Մ. Ա. ԱՐՎԵՍՏԸ Վ.Լ. ԻԼՅԻԶԻ ԿԵՆՅԱՊՈՒՄ.	
Ժամանակակիցները պատմում են՝	62
Ն. Կ. Կրուպսկայա	129
Կ. Շերիգան	137
Ա. Լունաչարսկի	138
Ն. Մեշերյակով	139
Լ. Կամենկ	140
Գ. Կրժիժանովսկի	—
Վ. Իլյիչի Մ. Ա. և Մ. Ի. Ռու-	
յանովսկերին գրած նամակից . . .	141
Պ. Լերեդե-Պալյանսկի	—
Համանակակիցները պատմում են՝	
Պ. Լեպեշինսկի	142
Վ. Բոնչ-Բրույեր	—
Մ. Գլյասովեր	143
Վ. Բոնչ-Բրույեր	—
Մ. Գորկի	145
Ռ. Կ.	—
Վ. Բոնչ-Բրույեր	146
Լ. Սահնովսկի	147
Յա. Բերդին	148
Վ. Բոգուշսկի	149
Ա. Լունաչարսկի	150
Ն. Ալտման	152
Կ. Ցետկին	153
Ն. Մեշերյակով	154
Ա. Լունաչարսկի	155
Մ. Գորկի	156
Մ. Լյագով	—
Ա. Կիրժինց	157
Վ. Ի. — նամակներից գրած	
Մ. Ի. Ռույանովային	158


Պ. Լեպեշինսկի	158
Ա. Դոգադով	161
Մ. Պյատնիցկի	162
Ն. Կ. Կրուպսկայա	—
Մ. Գարլովսկի	165
Ս. Սենկին	167
Ա. Լունաչարսկի	172
Հայ հրատ. խմբ. Կոզմից	173
Աղբյուրներ	176



Օգ. редактор Е. Чаренц

Техред. Т. Хачваниան
Сдано в набор 15/IX—33 г. Подписано к печати 14/XI—33 г.
Формат 82×110^{1/32} Об'ем 5²/4п. л. В печ. л. 55 000 п. зн.
Уполн. Главлитта № В 41872 Заказ № 918 Тираж 3 000

Тип. Госиздата ССР Армении. Москва, Армянский, 2.



9720 5 n. 25 4.

10 m - ~~zuruf~~ 6



«Ազգային գրադարան



NL0174762

